

1

Ահա՛ւասիկ Եգիպտոս գացող Իսրայէլի որդիներուն անունները. իւրաքանչիւրը իր ընտանիքով Յակոբի հետ գնաց.— 2 Ռուբէն, Շմաւոն, Ղեւի ու Յուդա, 3 Իսաքար, Զաբուղոն եւ Բենիամին, 4 Դան ու Նեփթաղիմ, Գադ եւ Ասեր: 5 Յակոբի երանքէն ելած բոլոր անձերը եօթանասուն անձ էին. Յովսէփ ալ Եգիպտոս էր: 6 Յովսէփ, անոր բոլոր եղբայրները եւ այդ ամբողջ սերունդը մեռան: 7 Իսկ Իսրայէլի որդիները անեցան ու «շատցան, բազմացան, չափազանց հզօրացան, եւ այդ երկիրը անոնցմով լեցուեցաւ:

8 Եգիպտոսի վրայ նոր թագաւոր մը ելաւ, որ Յովսէփը չէր ճանչնար: 9 Ան իր ժողովուրդին ըսաւ. «Ահա՛ Իսրայէլի որդիներուն ժողովուրդը մեզմէ բազմաթիւ ու հզօր է: 10 Եկէ՛ք իմաստուն ըլլանք անոնց հանդէպ՝ որ չբազմանան, ու երբ պատերազմ պատահի՝ անոնք ալ թմեր ոսոխներուն» միանալով մեզի դէմ չպատերազմին եւ այս երկրէն չբարձրանան»: 11 Հետեւաբար գործավարներ դրին անոնց վրայ, որպէսզի տառապեցնեն զանոնք բռնի աշխատանքներով. եւ Փարաւոնի կառուցանեցին շտեմարանի քաղաքներ՝ Փիթոմն ու Ռամսէսը: 12 Սակայն ո՛րչափ կը տառապեցնէին զանոնք, այնչափ աւելի կը բազմանային ու կ'աճէին. եւ անոնք Իսրայէլի «որդիներէն» ահաբեկեցան: 13 Ուստի Եգիպտացիները բրտութեամբ ծառայեցուցին Իսրայէլի որդիները. 14 անոնց կեանքը տաժանելի ստրկութեամբ՝^ա կաւով, աղիւններով ու դաշտի ամէն տեսակ ծառայութեամբ կը դառնացնէին: Ինչ ծառայութիւն որ անոնց ընել տային՝ բրտութեամբ էր:

15 Եգիպտոսի թագաւորը խօսեցաւ Եբրայեցիներու մանկաբարձներուն, որոնցմէ մէկուն անունը Սեփրա էր, ու միւսին անունը՝ Փուա, 16 եւ ըսաւ. «Եբրայեցի կիներուն ծննդաբերութեան ատեն նայեցէ՛ք «անոնց՝ երբ նստարաններուն վրայ են»^բ. եթէ հտղայ է՝ մեռցուցէ՛ք զայն, իսկ եթէ աղջիկ է՝ թող ողջ մնայ»: 17 Բայց մանկաբարձները Աստուծմէ վախցան, ու չըրին այնպէս՝ ինչպէս Եգիպտոսի թագաւորը իրենց ըսեր էր. հապա տղաները ողջ պահեցին: 18 Եգիպտոսի թագաւորը մանկաբարձները կանչեց եւ անոնց ըսաւ. «Ինչո՞ւ այս բանը ըրիք ու տղաները ողջ պահեցիք»: 19 Մանկաբարձներն ալ ըսին Փարաւոնի. «Որովհետեւ Եբրայեցի կիները Եգիպտոսի կիներուն պէս չեն. արդարեւ առոյգ են, եւ մանկաբարձը դեռ անոնց չհասած՝ կը ծնանին»: 20 Հետեւաբար Աստուած մանկաբարձներուն բարիք ըրաւ, ու ժողովուրդը բազմացաւ եւ չափազանց հզօրացաւ: 21 Զանի որ մանկաբարձները Աստուծմէ վախցան, ան ալ անոնց տուներ շինեց: 22 Ուստի Փարաւոն իր ամբողջ ժողովուրդին պատուիրեց. «Ամէն ծնած տղայ թգե՛տը նետեցէք, իսկ

^ա Եբր.՝ վխտացին

^բ Եբր.՝ մեզ ատողներուն

^գ Եբր.՝ որդիներուն երեսէն

^դ Կամ՝ զգուեցան

^ե Կամ՝ շաղախով

^զ Կամ՝ նորածինին սեռին

^է Եբր.՝ որդի

^ը Կամ՝ Նեղոսի՛ մէջ

ամէն աղջիկ ո՛րջ պահեցէք»:

ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ

2

Ղեւիի տունէն մէկը գնաց ու Ղեւիի մէկ աղջիկը կից առաւ: 2 Կինը յղացաւ ու որդի մը ծնաւ, եւ անոր վայելչագեղ ըլլալը տեսնելով՝ երեք ամիս պահեց զայն: 3 Երբ ա՛յ չէր կրնար պահել զայն, պրտուէ տապանակ մը առաւ անոր համար, կուպրով ու ձիւթով ծեփեց, «մանուկը մէջը դրաւ, ու գետին եզերքը եղող շամբին մէջ ձգեց. 4 իսկ անոր քոյրը հեռու կայնեցաւ, որպէսզի գիտնայ թէ ի՛նչ պիտի Բպատահի անոր: 5 Փարաւոնի աղջիկը գետը իջաւ լուացուելու, եւ անոր սպասուհիները գետին եզերքը կը պտըտէին: Երբ շամբին մէջտեղը տեսաւ տապանակը, իր աղախինը դրկեց որ զայն բերէ: 6 Երբ բացաւ՝ մանուկը տեսաւ. եւ ահա՛ տղեկը կու լար: Ուստի անոր վրայ արգահատեցաւ ու ըսաւ. «Ասիկա Եբրայեցիներու զաւակներէն է»: 7 Ուստի անոր քոյրը Փարաւոնի աղջիկին ըսաւ. «Երթամ ու Եբրայեցիներէն սնուցիչ կին մը կանչե՛մ քեզի, որ մանուկը դիեցնէ քեզի համար»: 8 Փարաւոնի աղջիկը իրեն ըսաւ. «Գնա՛»: Օրիորդն ալ գնաց ու մանուկին մայրը կանչեց: 9 Փարաւոնի աղջիկը անոր ըսաւ. «Ա՛ն այս մանուկը, դիեցո՛ւր ինծի համար, ու ես քու վարձքդ կու տամ»: Կինն ալ առաւ մանուկը ու դիեցուց զայն: 10 Երբ մանուկը մեծցաւ, Փարաւոնի աղջիկին բերաւ զայն, եւ անոր որդին եղաւ. անոր անունը Պոփսէս կոչեց՝ ըսելով. «Քանի որ ջուրէն հանեցի զայն»:

ՄՈՎՍԷՍ ԿԸ ՓԱԽՉԻ ՄԱԴԻԱՍ

11 Այն օրերը՝ երբ Մոփսէս մեծցաւ, դուրս ելաւ՝ իր եղբայրներուն քով, եւ նայեցաւ անոնց բռնի աշխատանքներուն: Տեսաւ Եգիպտացի մը, որ իր եբրայեցի եղբայրներէն մէկը կը ծեծէր: 12 Երբ հոս-հոն նայելով տեսաւ թէ ո՛չ մէկը կայ, ՚մեռցուց Եգիպտացին ու աւազին մէջ թաղեց զայն: 13 Հետեւեալ օրն ալ դուրս ելաւ, եւ ահա՛ երկու եբրայեցի մարդիկ կը կռուէին իրարու հետ: Ըսաւ անոր՝ որ իրաւունք չունէր. «Ինչո՞ւ ընկերդ կը ծեծես»: 14 Ան ալ ըսաւ. «Ո՞վ քեզ մեր վրայ իշխանաւոր ու դատաւոր նշանակեց. զի՞ս ալ «կը մտածես» մեռցնել, ինչպէս Եգիպտացին մեռցուցիր»: Մոփսէս վախցաւ եւ ըսաւ. «Անտարակոյս այս բանը գիտցուած է»:

15 Երբ Փարաւոն լսեց այս բանը՝ Պուզեց Մոփսէսը մեռցնել, բայց Մոփսէս Փարաւոնի էառջելէն փախաւ. Մադիամի երկրին մէջ բնակեցաւ ու հորի մը քով նստաւ: 16 Մադիամի քուրմը եօթը աղջիկ ունէր. անոնք եկան, ջուր քաշեցին եւ աւազանները լեցուցին՝ իրենց

^ա Եբր.՝ զաւակը

^բ Եբր.՝ ըլլայ

^գ Այսինքն՝ ջուրէն հանուած

^դ Եբր.՝ զարկաւ

^ե Եբր.՝ կ'ըսես

^զ Եբր.՝ փնտռեց

^է Եբր.՝ երեսէն

հօր ոչխարներուն խմցնելու համար: **17** Հովիւները եկան ու զանոնք վռնտեցին. Մովսէս ալ կանգնեցաւ, «անոնց օգնութեան հասաւ» եւ անոնց ոչխարներուն ջուր խմցուց: **18** Երբ անոնք իրենց հօր՝ Ռաֆուէլի եկան, ան ըսաւ. «Ի՞նչ պատճառով այսօր շուտ եկաք»: **19** Անոնք ալ ըսին. «Եգիպտացի մը մեզ հովիւներուն ձեռքէն ազատեց, ու մեզի ալ շատ ջուր քաշեց եւ ոչխարներուն խմցուց»: **20** Իսկ ինք իր աղջիկներուն ըսաւ. «Ո՞ւր է ան. ինչո՞ւ այդ մարդը հոն թողուցիք: Կանչեցէ՛ք զայն, որպէսզի հաց ուտէ»: **21** Մովսէս հաւանեցաւ այդ մարդուն հետ բնակիլ. ան ալ իր աղջիկը՝ Սեպփորան Մովսէսի տուաւ **իբր կին: 22** Կինը որդի մը ծնաւ, եւ ինք անոր անունը **Գերսամ կոչեց. քանի որ ըսաւ. «Պանդուխտ եղայ օտար երկրի մէջ»:**

23 Երկար ժամանակէ ետք՝ Եգիպտոսի թագաւորը մեռաւ: Իսրայէլի որդիները ստրկութեան պատճառով հառաչեցին եւ աղաղակեցին, ու անոնց աղաղակը Աստուծոյ բարձրացաւ՝ ստրկութեան պատճառով: **24** Աստուած անոնց հեծեծանքը լսեց, եւ Աստուած յիշեց իր ուխտը՝ որ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ **կնքեր էր: 25** Աստուած նայեցաւ Իսրայէլի որդիներուն, եւ Աստուած գիտցաւ **անոնց վիճակը:**

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԿԱՆՉԷ ՄՈՎՍԷՍԸ

3

Մովսէս Մադիամի քուրմին՝ իր Յոթոր աներոջ ոչխարները կ'արածէր, ու ոչխարները անապատին ետեւը տանելով հասաւ Աստուծոյ լեռը՝ Զորեբ: **2** ^ՄՏէրոջ հրեշտակը կրակի բոցով երեւցաւ անոր՝ մորենիի մը մէջէն. ան նայեցաւ, եւ ահա՛ մորենին կրակով կը վառէր, բայց մորենին չէր սպառեր: **3** Մովսէս ըսաւ. «Այժմ շեղիմ ու այս մեծ երեւոյթը տեսնեմ՝ թէ ինչո՞ւ մորենին չ'այրիր»: **4** Երբ Տէրը տեսաւ թէ ան տեսնելու համար շեղեցաւ, Աստուած մորենիին մէջէն կանչեց զինքը՝ ըսելով. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս»: Ան ալ ըսաւ. «**Ահա՛** հոս եմ»: **5** Աստուած ըսաւ. «Հոս մի՛ մօտենար. կօշիկներդ հանէ՛ քու ոտքերէդ, որովհետեւ այն տեղը՝ ուր կայնած ես՝ սուրբ ^Բերկիր է»: **6** Նաեւ **անոր** ըսաւ. «Ե՛ս եմ քու հօրդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը»: Մովսէս իր երեսը ծածկեց, որովհետեւ Աստուծոյ նայելու վախցաւ:

7 Տէրը ըսաւ. «**Արդարեւ** տեսայ Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս տառապանքը, եւ լսեցի ^Գգործավարներուն պատճառով՝ անոնց **բարձրացուցած** աղաղակը. որովհետեւ անոնց կոտտանքը գիտեմ: **8** Ուստի իջայ՝ զանոնք ազատելու Եգիպտացիներուն ձեռքէն, ու զանոնք բարձրացնելու այդ երկրէն դէպի լաւ եւ ընդարձակ երկիր մը, կաթ ու մեղր հոսեցնող երկիր մը, Զանանացիներուն, Զետացիներուն, Ամորհացիներուն, Փերեզացիներուն, Խեւացիներուն ու Յեբուսացիներուն տեղը: **9** Ահա՛ հիմա ինձի հասաւ Իսրայէլի որդիներուն աղաղակը, ու տեսայ նաեւ այն տանջանքը՝ որով Եգիպտացիները զանոնք կը չարչարեն: **10** Ուստի եկո՛ւր հիմա, քեզ Փարաւոնի դրկեմ, որ իմ ժողովուրդս՝ Իսրայէլի որդիները՝ Եգիպտոսէն հանես»: **11** Մովսէս Աստուծոյ ըսաւ. «Ես ո՞վ եմ՝ որ Փարաւոնի երթամ, ու Իսրայէլի որդիները Եգիպտոսէն հանեմ»: **12** Աստուած ըսաւ.

^Ը Եբր.՝ զանոնք ազատեց
^Բ Այսինքն՝ հոն պանդխտացած
^Մ Եբր.՝ Եհովայի
^Բ Եբր.՝ գետին
^Գ Եբր.՝ ճնշիչներուն երեսէն

«Անշո՛ւշտ ես քեզի հետ պիտի ըլլամ. եւ սա՛ պիտի ըլլայ քեզի նշանը՝ թէ ե՛ս դրկած եմ քեզ. երբ ժողովուրդը Եգիպտոսէն հանես, ա՛յս լերան վրայ պիտի պաշտէք Աստուած»:

13 Մովսէս Աստուծոյ ըսաւ. «Ահա՛, երբ երթամ Իսրայէլի որդիներուն եւ ըսեմ անոնց. «Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի դրկեց[□], ու երբ ըսեն ինծի. «Ի՞նչ է անոր անունը[□], ի՞նչ ըսեմ անոնց»: **14** Աստուած Մովսէսի ըսաւ. «Ես եմ ա՛ն՝ որ է»: Եւ ըսաւ. «Սա՛ ըսէ Իսրայէլի որդիներուն. «Ձիս «Ես եմ»ը դրկեց ձեզի[□]»: **15** Դարձեալ Աստուած Մովսէսի ըսաւ. «Սա՛ ըսէ Իսրայէլի որդիներուն. «Ձեր հայրերուն Աստուածը՝ Եհովան, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը, զիս ձեզի դրկեց[□]. ա՛յս է իմ անունս յաւիտեան, եւ ա՛յս է իմ յիշատակս սերունդէ սերունդ: **16** Գնա՛, հաւաքէ՛ Իսրայէլի երէցները ու ըսէ՛ անոնց. «Ձեր հայրերուն Աստուածը՝ Եհովան, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Աստուածը, երեւցաւ ինծի՝ ըսելով. «Արդարեւ այցելեցի ձեզի, տեսայ ինչ որ ձեզի կ'ընեն Եգիպտոսի մէջ, **17** եւ ըսի թէ ձեզ Եգիպտոսի տառապանքէն պիտի բարձրացնեմ դէպի Զանանացիներուն, Բետացիներուն, Ամորհացիներուն, Փերեզացիներուն, Խելացիներուն եւ Յերուսացիներուն երկիրը, կաթ ու մեղր հոսեցնող երկիրը[□]: **18** Անոնք քու խօսքդ մտիկ պիտի ընեն, եւ դուն ու Իսրայէլի երէցները՝ Եգիպտոսի թագաւորին պիտի մտնէք եւ ըսէք անոր. «Եբրայեցիներուն Աստուածը՝ Եհովան մեզի հանդիպեցաւ. ու հիմա կ'աղերսե՛նք որ երեք օրուան ճամբայ երթանք դէպի անապատը, որպէսզի մեր Աստուծոյն՝ Եհովայի զոհենք[□]: **19** Ես գիտեմ թէ Եգիպտոսի թագաւորը պիտի չթոյլատրէ ձեզի՝ որ երթաք, ո՛չ ալ՝ ուժեղ ձեռքով: **20** Ես ձեռքս պիտի երկարեմ ու պիտի գարնեմ Եգիպտոսը իմ բոլոր սքանչելիքներովս՝ որ անոր մէջ պիտի ընեմ. եւ անկէ ետք ձեզ պիտի արձակէ: **21** Այս ժողովուրդին շնորհք գտնել պիտի տամ Եգիպտացիներուն՝ առջեւ, ու երբ ելլէք՝ պարապ ձեռքով պիտի չելլէք. **22** հապա ամէն կին իր դրացուհիէն եւ իր տան մէջ պանդխտացած կնոջմէն արծաթէ իրեր, ոսկիէ իրեր ու հանդերձներ պիտի խնդրէ, զանոնք ձեր որդիներուն եւ աղջիկներուն վրայ պիտի դնէք, ու Եգիպտոսը պիտի կողոպտէք»:

ԱՍՏՈՒԱԾ ԿՈՒ ՏԱՅ ՄՈՎՍԷՍԻ ՇՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

4

Մովսէս պատասխանեց. «Բայց ահա՛ անոնք ինծի պիտի չհաւատան, ո՛չ ալ իմ խօսքս մտիկ պիտի ընեն. քանի որ պիտի ըսեն թէ «Տէրը քեզի չերեւցաւ[□]»: **2** Իսկ Տէրը անոր ըսաւ. «Այդ ձեռքինդ ի՞նչ է»: Ան ալ ըսաւ. «Գաւազան»: **3** Աստուած ըսաւ. «Գետի՛նը ձգէ զայն»: Գետինը ձգեց զայն, եւ օձ եղաւ. Մովսէս անոր առջեւէն փախաւ: **4** Տէրը Մովսէսի ըսաւ. «Ձե՛ռքդ երկարէ ու պոչէ՛ն բռնէ.– ան ալ ձեռքը երկարեց ու զայն բռնեց, եւ գաւազան եղաւ իր ափին մէջ.– **5** որպէսզի հաւատան թէ Տէրը՝ իրենց հայրերուն Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը, երեւցաւ քեզի»:

6 Տէրը դարձեալ անոր ըսաւ. «Այժմ քու ձեռքդ ծո՛ցդ դիր»: Ան իր ձեռքը ծոցը դրաւ, ու երբ դուրս հանեց, ահա՛ ձեռքը ձիւնի պէս ճերմակ՝ բորոտ էր: **7** Եւ Աստուած ըսաւ. «Ձեռքդ դարձեալ ծոցդ դիր.– ան դարձեալ ձեռքը ծոցը դրաւ, ու երբ ծոցէն հանեց, ահա՛ դարձեալ իր բնական մարմինին պէս եղած էր:– **8** Եթէ քեզի չհաւատան եւ առաջին նշանին խօսքը մտիկ չընեն, վերջին նշանին խօսքին պիտի հաւատան: **9** Իսկ եթէ այս երկու նշաններուն ալ չհաւատան ու քու խօսքդ ալ մտիկ չընեն, ա՛ն գետին ջուրէն ու թափէ՛ ցամաք գետինը: Այն ջուրը որ գետէն առնես՝ ցամաքին վրայ արիւն պիտի ըլլայ»:

⁷ Կամ՝ եթէ ոչ

⁸ Եբր.՝ աչքերուն

10 Մովսէս Տէրոջ ըսաւ. «Ո՛հ, իմ Տէ՛րս, ես ճարտարախօս չեմ. ո՛չ երէկուրնէ, ո՛չ նախորդ օրէն, եւ ո՛չ ալ ծառայիդ հետ խօսելէդ ետք. հապա ծանրախօս ու ծանրալեզու եմ»։ 11 Տէրը անոր ըսաւ. «Ո՞վ տուաւ մարդուն բերան. ո՞վ ըրաւ համրը կամ խուլը, աչք ունեցողը կամ կոյրը. ես չե՞մ՝ Տէրս: 12 Ուստի գնա՛ հիմա, ու ես քու բերանիդ հետ պիտի ըլլամ, եւ քեզի պիտի սորվեցնեմ ինչ որ պիտի խօսիս»։ 13 Ան ըսաւ. «Ո՛հ, իմ Տէ՛րս, կ'աղերսեմ, ղրկէ՛ այս պատգամը որո՛ւ ձեռքով որ կ'ուզես ղրկել»։ 14 Տէրոջ բարկութիւնը Մովսէսի դէմ բորբոքեցաւ, եւ ըսաւ. «Ղեւտացի Ահարոն քու եղբայրդ չէ՞. ես գիտեմ թէ ան ճարտարախօս է: Նաեւ ահա՛ ան դուրս կ'ելլէ՛ քեզ դիմաւորելու, ու երբ քեզ տեսնէ՝ իր սիրտին մէջ պիտի ուրախանայ: 15 Դո՛ւն խօսէ անոր եւ խօսքեր դիր անոր բերանը: Ես քու բերանիդ ու անոր բերանին հետ պիտի ըլլամ, եւ ձեզի պիտի սորվեցնեմ ինչ որ պիտի ընէք: 16 Զու տեղդ ա՛ն թող խօսի ժողովուրդին. ան քեզի բերանի տեղ ըլլայ, ու դուն անոր Աստուծոյ տեղ ըլլաս: 17 Եւ ձե՛ռքդ առ այս գաւազանը, որպէսզի անով նշանները ընես»։

ՄՈՎՍԷՍ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ԵԳԻՊՏՈՍ

18 Մովսէս գնաց, իր Յոթոր աներոջ վերադարձաւ եւ անոր ըսաւ. «Կ'աղերսեմ, թո՛ղ որ երթամ, Եգիպտոսի մէջ եղող եղբայրներուս վերադառնամ, ու նայիմ թէ տակաւին ո՛ղջ են անոնք»։ Յոթոր Մովսէսի ըսաւ. «Գնա՛ խաղաղութեամբ»։ 19 Տէրը Մադիամի մէջ Մովսէսի ըսաւ. «Գնա՛, վերադարձի՛ր Եգիպտոս. որովհետեւ քու «կեանքդ փնտռող բոլոր մարդիկը մեռան»։ 20 Մովսէս ալ իր կինը եւ որդիները առաւ, իշու վրայ հեծցուց զանոնք ու Եգիպտոսի երկիրը վերադարձաւ: Մովսէս Աստուծոյ գաւազանը իր ձեռքը առաւ, 21 եւ Տէրը Մովսէսի ըսաւ. «Երբ երթաս՝ Եգիպտոս վերադառնալու, նայէ՛ որ Փարաւոնի առջեւ ընես բոլոր հրաշքները՝ որ քու ձեռքդ դրի. ես անոր սիրտը պիտի կարծրացնեմ, ու ժողովուրդը պիտի չարձակէ: 22 Ըսէ՛ Փարաւոնի. “Տէրը սա՛ կը յայտարարէ. “Իսրայէլ իմ որդիս է, իմ անդրանիկս: 23 Զեզի կ'ըսեմ. «Արձակէ՛ իմ որդիս, որպէսզի զիս պաշտէ»։ Բայց եթէ մերժես զայն արձակել, ահա՛ ես քու որդիդ, մահաւանդ քու անդրանիկդ, պիտի մեռցնեմ՝»։

24 Ճամբան, իջեւանին տեղը, Տէրը անոր հանդիպեցաւ եւ Բուզեց զայն մեռցնել: 25 Ուստի Սեպփորա սուր քար մը առաւ, իր որդիին թլիփը կտրեց, անոր ոտքերուն ձգեց ու ըսաւ. «Ի՛րապէս դուն ինծի արիւնոտ ամուսին մըն ես»։ 26 Այսպէս Տէրը թողուց զայն. այն ատեն՝ թլփատութեան համար՝ Սեպփորա ըսաւ. «Արիւնոտ ամուսին մըն ես»։

27 Տէրը Ահարոնի ըսաւ. «Գնա՛ անապատը՝ Մովսէսը դիմաւորելու»։ Ան ալ գնաց, Աստուծոյ լերան վրայ հանդիպեցաւ անոր եւ համբուրեց զայն: 28 Մովսէս հաղորդեց Ահարոնի՝ զինք ղրկող Տէրոջ բոլոր խօսքերը, ու բոլոր նշանները՝ որ իրեն պատուիրեց:

29 Մովսէս եւ Ահարոն գացին ու հաւաքեցին Իսրայէլի որդիներուն բոլոր երէցները: 30 Ահարոն Տէրոջ Մովսէսի ըսած բոլոր խօսքերը հաղորդեց անոնց, ու ժողովուրդին Գառջեւ նշանները ըրաւ. 31 ժողովուրդը հաւատաց: Երբ լսեցին թէ Տէրը այցելեր է Իսրայէլի որդիներուն, եւ թէ անոնց տառապանքը տեսեր է, խոնարհեցան ու երկրպագեցին:

ՄՈՎՍԷՍ ԵՒ ԱՀԱՐՈՆ ՓԱՐԱԻՈՆԻ ԱՌՋԵԻ

^ա Եբբ.՝ անձդ

^բ Եբբ.՝ փնտռեց

^գ Եբբ.՝ աչքերուն

5

Յետոյ՝ Մովսէս եւ Ահարոն Փարաւոնի քով մտան ու ըսին. «Իսրայէլի Աստուածը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի անապատին մէջ ինծի տօն կատարէ”»:² Եւ Փարաւոն ըսաւ. «Եհովան ո՞վ է, որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը արձակեմ: Եհովան չեմ ճանչնար, եւ Իսրայէլն ալ չեմ արձակեր»:³ Անոնք ըսին. «Եբրայեցիներուն Աստուածը մեզի հանդիպեցաւ: Կ’աղերսե՛նք, թո՛ղ որ երեք օրուան ճամբայ երթանք անապատին մէջ ու մեր Աստուծոյն՝ Եհովայի զոհեցնք, որպէսզի ժանտախտով կամ սուրով մեզի դէմ չելլէ»:⁴ Եգիպտոսի թագաւորը անոնց ըսաւ. «Ո՛վ Մովսէս եւ Ահարոն, ինչո՞ւ ժողովուրդը կը հեռացնէք իրենց գործերէն. գացէ՛ք ձեր բռնի աշխատանքներուն»:⁵ Փարաւոն ըսաւ. «Ահա՛ հիմա երկրին ժողովուրդը շատ է, ու դուք կը հանգստացնէք զանոնք իրենց բռնի աշխատանքներէն»:

⁶ Փարաւոն այդ օրը ժողովուրդին գործավարներուն եւ անոր ոստիկաններուն պատուիրեց. ⁷ «“Առաջուան պէս՝ ա՛լ ժողովուրդին յարդ մի՛ տաք աղիւս շինելու համար: Իրե՛նք թող երթան ու իրենց յարդ ժողվեն: ⁸ Եւ աղիւսներուն քանակը, ինչպէս առաջ կը շինէին, անոնց վրայ դրէ՛ք. անկէ մի՛ պակսեցնէք: Արդարեւ ծոյլ են, հետեւաբար կ’աղաղակեն. “Երթանք, մեր Աստուծոյն զոհեցնք”»:⁹ ⁹ Գործը այս մարդոց վրայ թող ծանրանայ, որպէսզի անով աշխատին ու ‘սուտ խօսքեր մտիկ չընեն”»:¹⁰ Ժողովուրդին գործավարներն ու ոստիկանները ելան եւ ժողովուրդին խօսեցան՝ ըսելով. «Փարաւոն սա՛ կ’ըսէ. “Ես ձեզի յարդ չեմ տար: ¹¹ Դո՛ւք գացէք, ձեզի յա՛րդ առէք՝ ուր որ կարենաք գտնել. բայց ձեր գործէն ոչինչ պիտի պակսի”»:¹² Այսպէս ժողովուրդը Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ ցրուեցաւ՝ յարդի տեղ խոզան ժողվելու համար:¹³ Գործավարները կը փութացնէին **զանոնք՝** ըսելով. «Ձեր ամէն օրուան գործը լմնցուցէ՛ք, ինչպէս երբ յարդ ունէիք»:¹⁴ Փարաւոնի գործավարները ծեծեցին Իսրայէլի որդիներուն վրայ իրենց նշանակած ոստիկանները՝ ըսելով. «Ձեր վրայ դրուած աղիւսներուն քանակը երէկ եւ այսօր ինչո՞ւ չլմնցուցիք՝ առաջուան պէս»:

¹⁵ Իսրայէլի որդիներուն ոստիկանները եկան ու Փարաւոնի աղաղակեցին՝ ըսելով. «Ինչո՞ւ քու ծառաներուդ հետ այսպէս կը վարուիս: ¹⁶ Զու ծառաներուդ յարդ չեն տար, եւ մեզի կ’ըսեն. “Աղիւսներ շինեցէք”»:¹⁷ Ան ալ ըսաւ. «Ծո՛յլ էք դուք, ծո՛յլ. հետեւաբար կ’ըսէք. “Երթանք Տէրոջ զոհեցնք”»:¹⁸ Ուստի հիմա գացէ՛ք ու գործեցէ՛ք: Ձեզի յարդ պիտի չտրուի, բայց աղիւսներուն քանակը պիտի յանձնէք»:¹⁹ Իսրայէլի որդիներուն ոստիկանները իրենք զիրենք չարիքի մէջ տեսան, երբ ըսուեցաւ թէ “ամէն օրուան ձեր վրայ դրուած աղիւսներուն քանակէն չպակսեցնէք”»:²⁰ Երբ Փարաւոնի քովէն դուրս ելան՝ Մովսէսի ու Ահարոնի հանդիպեցան, որոնք կայնած էին զիրենք դիմաւորելու, ²¹ եւ ըսին անոնց. «Տէ՛րը ձեզի նայի ու դատէ. որովհետեւ գարշելի ըրիք մեր հոտը Փարաւոնի ‘առջեւ եւ անոր ծառաներուն առջեւ, մեզ սպաննելու համար անոնց ձեռքը սուր տալով»:

ՄՈՎՍԷՍ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ ՏԷՐՈՋ

¹ Եբր.՝ Երէկուան ու նախորդ օրուան

² Եբր.՝ Ծառայութիւնը

³ Եբր.՝ կեղծ խօսքերու չնային

⁴ Եբր.՝ աչքերուն

22 Մովսէս Տէրոջ դարձաւ եւ ըսաւ. «Ո՛վ Տէր, ինչո՞ւ այս ժողովուրդը չարչարեցիր, ու զիս ինչո՞ւ դրկեցիր: 23 Որովհետեւ՝ քու անունովդ Փարաւոնի խօսելու համար գալէս ի վեր՝ ա՜ն այս ժողովուրդը չարչարեց, իսկ դուն բնաւ չփրկեցիր քու ժողովուրդդ»:

6

Տէրը Մովսէսի ըսաւ. «Հիմա պիտի տեսնես ինչ որ պիտի ընեմ Փարաւոնի. որովհետեւ ուժեղ ձեռքով պիտի արձակէ զանոնք, եւ ուժեղ ձեռքով պիտի վռնտէ զանոնք իր երկրէն»:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԿԱՆՉԷ ՄՈՎՍԷՍԸ

2 Աստուած Մովսէսի խօսեցաւ ու անոր ըսաւ. «Ե՛ս եմ “Եհովան: 3 Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի երեւցայ “Ամենակարող Աստուծոյ՝ անունով. բայց անոնց չճանչցուեցայ իմ “Եհովա՝ անունովս: 4 Նաեւ անոնց հետ հաստատեցի իմ ուխտս, որ անոնց տամ Զանանի երկիրը, անոնց գաղթականութեան երկիրը՝ ուր պանդխտացան: 5 Լսեցի նաեւ հեծեծանքը Իսրայէլի որդիներուն, որ Եգիպտացիները ստրուկ ըրին, եւ յիշեցի իմ ուխտս: 6 Ուստի ըսէ՛ Իսրայէլի որդիներուն. “Ե՛ս եմ Եհովան. ե՛ս պիտի հանեմ ձեզ Եգիպտացիներու բռնի աշխատանքներուն տակէն, պիտի ազատեմ ձեզ անոնց ստրկութենէն, ու պիտի փրկեմ ձեզ երկարած բազուկով եւ մեծ դատաստաններով: 7 Ձեզ պիտի առնեմ իբր ի՛մ ժողովուրդս. ձեզի Աստուած պիտի ըլլամ, ու պիտի գիտնաք թէ ձեզ Եգիպտացիներու բռնի աշխատանքներուն տակէն հանող Տէրը՝ ձեր Աստուածը՝ ե՛ս եմ: 8 Ձեզ պիտի տանիմ այն երկիրը՝ որուն համար Բերդում ըրի՛”, որ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի տամ, ու ձեզի պիտի տամ զայն՝ իբր ստացուածք: Ե՛ս եմ Տէրը»: 9 Մովսէս ա՛յսպէս ըսաւ Իսրայէլի որդիներուն. բայց անոնք Մովսէսի մտիկ չըրին՝ հոգիի վհատութեան ու տաժանելի ստրկութեան պատճառով:

10 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 11 «Մտի՛ր Եգիպտոսի Փարաւոն թագաւորին քով, եւ խօսէ՛ որ Իսրայէլի որդիները արձակէ իր երկրէն»: 12 Իսկ Մովսէս խօսեցաւ Տէրոջ առջեւ՝ ըսելով. «Ահա՛ Իսրայէլի որդիները ինծի մտիկ չըրին, հապա ի՞նչպէս Փարաւոն ինծի մտիկ պիտի ընէ, ինծի՛ որ Գծանրալեզու եմ»: 13 Տէրը խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի, ու պատուիրեց անոնց՝ որ Իսրայէլի որդիներուն ու Եգիպտոսի Փարաւոն թագաւորին երթան, որպէսզի Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն դուրս հանեն:

ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ԱՀԱՐՈՆԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

14 Ահա՛ւասիկ անոնց Դնահապետութիւններուն գլխաւորները: Իսրայէլի անդրանիկին՝ Ռուբէնի որդիները.— Ենովք, Փաղղուս, Եսրոն եւ Զարմի. ասոնք են Ռուբէնի գերդաստանները: 15 Շմաւոնի որդիները՝ Յամուէլ, Յամին, Ոհադ, Յաքին, Սահառ, ու

^ա Այսինքն՝ Ա՛ն որ է, կամ՝ Յաւիտեճականը

^բ Եբր.՝ ձեռքս բարձրացուցի

^գ Եբր.՝ անթլփատ շրթունքով

^դ Այսինքն՝ հայրերու տուններուն

քանանացի կնոջ որդին՝ Սաուղ. ասոնք են Շմաւոնի գերդաստանները: **16** Ահա՛ւասիկ Ղեւի որդիներուն անունները՝ իրենց ծնունդներուն համեմատ.– Գերսոն, Կահաթ եւ Մերարի: Ղեւի կեանքին տարիները՝ հարիւր երեսունեօթը տարի եղան: **17** Գերսոնի որդիները՝ իրենց գերդաստաններուն համեմատ՝ Ղոբեմի ու Սեմէի էին: **18** Կահաթի որդիները՝ Ամրամ, Իսահառ, Զեբրոն եւ Ոգիէլ. Կահաթի կեանքին տարիները հարիւր երեսուներեք տարի եղան: **19** Մերարիի որդիները՝ Մոհոդի ու Մուսի: Ղեւի գերդաստանները՝ իրենց ծնունդներուն համեմատ՝ ասոնք են: **20** Ամրամ իր հօրաքոյրը՝ Յոքաբէդը իրեն կին առաւ, որ ծնաւ իրեն Ահարոնը եւ Մովսէսը. Ամրամի կեանքին տարիները հարիւր երեսունեօթը տարի եղան: **21** Իսահառի որդիները՝ Կորխ, Նափեկ ու Զեբրի: **22** Ոգիէլի որդիները՝ Միսայէլ, Եղիսափան եւ Սեթրի: **23** Ահարոն իրեն կին առաւ Ամինադաբի աղջիկը, Նասսոնի քոյրը՝ Եղիսաբէթը. ան ծնաւ իրեն Նադաբը, Աբիուդը, Եղիազարն ու Իթամարը: **24** Կորխի որդիները՝ Ասիր, Եղկանա եւ Աբիասափ. ասոնք են Կորխեաններուն գերդաստանները: **25** Ահարոնի որդին՝ Եղիազար Փուտիէլի աղջիկներէն իրեն կին առաւ. ան ծնաւ իրեն Փենեհէսը: Ասոնք են Ղեւտացիներուն ⁶նահապետները՝ իրենց գերդաստաններուն համեմատ:

26 Ասոնք են այն Ահարոնը եւ Մովսէսը՝ որոնց Տէրը ըսաւ. «Իսրայէլի որդիները հանեցէ՛ք Եգիպտոսի երկրէն՝ իրենց զօրաբաժիններուն համեմատ»: **27** Իսրայէլի որդիները Եգիպտոսէն հանելու համար՝ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսողները ասո՛նք են, այս Մովսէսն ու Ահարոնը:

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՐԱՄԱՆԸ ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ԱՀԱՐՈՆԻ

28 Այն օրը երբ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Եգիպտոսի երկրին մէջ,– **29** Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. «Ե՛ս եմ Եհովան. ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ, Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսէ՛»,– **30** Մովսէս Տէրոջ առջեւ ըսաւ. «Ահա՛ ես ⁹ծանրալեզու եմ, ուստի ի՞նչպէս Փարաւոն ինձի մտիկ պիտի ընէ»:

7

Տէրը Մովսէսի ըսաւ. «Նայէ՛, քեզ Փարաւոնի աստուած ըրի, ու եղբայրդ՝ Ահարոն քու մարգարէդ թող ըլլայ: **2** Դուն խօսէ՛ ամէն ինչ որ քեզի կը պատուիրեմ, եւ քու եղբայրդ՝ Ահարոն թող ըսէ Փարաւոնի, որպէսզի Իսրայէլի որդիները արձակէ իր երկրէն: **3** Ես Փարաւոնի սիրտը պիտի խստացնեմ, ու իմ նշաններս եւ հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ պիտի բազմապատկեմ: **4** Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ. ես ալ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի դնեմ, եւ իմ զօրաբաժիններս, իմ ժողովուրդս, Իսրայէլի որդիները, մեծ դատաստաններով պիտի հանեմ Եգիպտոսի երկրէն: **5** Ու երբ իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկարեմ եւ Իսրայէլի որդիները անոնց մէջէն հանեմ, Եգիպտացիները պիտի գիտնան թէ ե՛ս եմ Տէրը»: **6** Մովսէս ու Ահարոն ըրին ինչպէս Տէրը իրենց պատուիրեր էր. այնպէս ըրին: **7** Մովսէս ութսուն տարեկան էր, իսկ Ահարոն՝ ութսուներեք տարեկան, երբ Փարաւոնի հետ խօսեցան:

ԱՀԱՐՈՆԻ ԶԱԼՈՂ ԳԱՒԱԶԱՆԸ

⁶ Այսինքն՝ հայրերու գլխաւորները

⁹ Եբր.՝ անթլփատ շրթունքով

8 Տէրը խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի՝ ըսելով. «Երբ Փարաւոն ձեզի խօսի ու ըսէ. 9 “Ձեզի համար հրա՛ջք “ցոյց տուէք” □, ըսէ՛ Ահարոնի. “Ա՛ն գաւազանդ եւ նետէ՛ Փարաւոնի առջեւ□. ան վիշապ պիտի ըլլայ»: 10 Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի քով եւ ըրին ինչպէս Տէրը պատուիրեր էր: Ահարոն իր գաւազանը նետեց Փարաւոնի առջեւ ու անոր ծառաներուն առջեւ, եւ վիշապ եղաւ: 11 Յետոյ Փարաւոն ալ իմաստուններն ու կախարդները կանչեց, եւ անո՛նք ալ – Եգիպտոսի մոգերը – նոյնպէս ըրին՝ իրենց կախարդութիւններով: 12 Իւրաքանչիւրը իր գաւազանը նետեց, ու անոնք վիշապներ եղան. բայց Ահարոնի գաւազանը կլլեց անոնց գաւազանները: 13 Սակայն Փարաւոնի սիրտը կարծրացաւ եւ անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը ըսեր էր:

ՏԱՍԸ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ
Արիւն

14 Տէրը Մովսէսի ըսաւ. «Փարաւոնի սիրտը խստացաւ. կը մերժէ ժողովուրդը արձակել: 15 Առտուն գնա՛ Փարաւոնի. ահա՛ ան դուրս կ'ելլէ՝ դէպի ջուրը: Գետին եզերքը կայնէ՛ անոր դիմացը, ձե՛ռքդ առ այն գաւազանը՝ որ օձի վերածուած էր, 16 եւ ըսէ՛ անոր. “Երայեցիներուն Աստուածը՝ Եհովան գիս քեզի դրկեց՝ ըսելով. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի գիս պաշտէ անապատին մէջ”. բայց ահա՛ մինչեւ հիմա մտիկ չըրիր: 17 Տէրը սա՛ կը յայտարարէ. “Հետեւեա՛լ միջոցով պիտի գիտնաս թէ ե՛ս եմ Տէրը.– ահա՛ ես իմ ձեռքս եղող գաւազանով պիտի զարնեմ գետին մէջ եղող ջուրերուն, եւ արիւնի պիտի վերածուին. 18 գետին մէջ եղող ձուկերը պիտի մեռնին, գետը գարշահոտ պիտի ըլլայ, ու Եգիպտացիները պիտի ծանծրանան՝ գետին ջուրէն խմել ջանալով”□»:

19 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ըսէ՛ Ահարոնի. “Ա՛ն գաւազանդ ու երկարէ՛ ձեռքդ Եգիպտացիներու ջուրերուն վրայ – անոնց գետակներուն վրայ, գետերուն վրայ, լիճերուն վրայ, եւ անոնց բոլոր ջրակոյտերուն վրայ –, որպէսզի արիւն ըլլան. Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ՝ փայտէ ու քարէ անօթներուն մէջի ջուրերը արիւն ըլլան□»: 20 Եւ Մովսէս ու Ահարոն ըրին ինչպէս Տէրը պատուիրեր էր: Գաւազանը վերցուց, Փարաւոնի Բառջեւ եւ անոր ծառաներուն առջեւ գետին մէջ եղող ջուրերուն զարկաւ, ու գետին մէջ եղող բոլոր ջուրերը արիւնի վերածուեցան: 21 Գետին մէջ եղող ձուկերը մեռան, գետը գարշահոտ եղաւ, եւ Եգիպտացիները գետին ջուրէն չէին կրնար խմել: Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ արիւն կար: 22 Բայց Եգիպտոսի մոգերն ալ իրենց կախարդութիւններով նոյնպէս ըրին. ու Փարաւոնի սիրտը կարծրացաւ եւ անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը ըսեր էր: 23 Փարաւոն դարձաւ ու իր տունը մտաւ. “ա՛յս ալ անոր սիրտին չղպաւ”: 24 Բոլոր Եգիպտացիները գետին ջուրքը փորեցին՝ խմելու ջուր գտնելու համար, որովհետեւ գետին ջուրէն չէին կրնար խմել: 25 Ու եօթը օր անցաւ՝ Տէրը գետը զարնելէն ետք:

Գորտեր

8

Տէրը Մովսէսի ըսաւ. «Մտի՛ր Փարաւոնի քով եւ ըսէ՛ անոր. “Տէրը սա՛ կը յայտարարէ. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի գիս պաշտէ: 2 Եթէ մերժես գաճոցը արձակել, ահա՛

^u Երբ.՝ տուէք

^p Երբ.՝ աչքերուն

^q Երբ.՝ իր սիրտը այս բանին վրայ ալ չդրաւ

ես քու ամբողջ հողամասդ գորտերով պիտի զարնեմ: **3** Գետը «առատութեամբ գորտեր պիտի արտադրէ»: անոնք ալ վեր պիտի ելլեն ու պիտի մտնեն քու տանդ, ննջասենեակիդ եւ մահիճիդ մէջ, քու ծառաներուդ տուները, քու ժողովուրդիդ, քու փուռերուդ ու խմորի տաշտերուդ մէջ: **4** Գորտերը պիտի ելլեն քու վրայ, ժողովուրդիդ վրայ եւ բոլոր ծառաներուդ վրայ»[□]:

5 Տէրը Մովսէսի ըսաւ. «Սա՛ ըսէ Ահարոնի. «Քու գաւազանովդ երկարէ՛ ձե՛ռքդ գետակներուն վրայ, գետերուն վրայ ու լիճերուն վրայ, եւ գորտե՛ր հանէ Եգիպտոսի երկրին վրայ»[□]: **6** Ահարոն իր ձեռքը երկարեց Եգիպտոսի ջուրերուն վրայ, ու գորտեր բարձրացան եւ Եգիպտոսի երկիրը ծածկեցին: **7** Բայց մոգերն ալ իրենց կախարդութիւններով նոյնպէս ըրին, ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր բարձրացուցին:

8 Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը կանչեց, եւ ըսաւ. «Թախանձեցէ՛ք Տէրոջ, որ ինձմէ ու իմ ժողովուրդէս հեռացնէ գորտերը, եւ ժողովուրդը պիտի արձակեմ՝ որպէսզի Տէրոջ զոհէ»: **9** Մովսէս Փարաւոնի ըսաւ. «^բՈրոշէ՛ ինձի **ժամանակ մը**», թէ ե՛րբ թախանձեմ քեզի համար, ծառաներուդ համար ու ժողովուրդիդ համար, որ գորտերը բնաջնջուին քեզմէ եւ քու տուներէդ, ու միայն գետին մէջ մնան»: **10** Ան ըսաւ. «Վա՛ղը»: Ինք ալ ըսաւ. «Քու խօսքիդ համաձայն ըլլայ, որպէսզի գիտնաս թէ ո՛չ մէկը մեր Աստուծոյն՝ Եհովայի նման է: **11** Քեզմէ, քու տուներէդ, քու ծառաներէդ եւ քու ժողովուրդէդ գորտերը պիտի հեռանան. միայն գետին մէջ պիտի մնան»: **12** Մովսէս եւ Ահարոն Փարաւոնի քովէն ելան. Մովսէս Տէրոջ աղաղակեց այն գորտերուն պատճառով՝ որ Փարաւոնի վրայ ^գբերած էր, **13** ու Տէրը Մովսէսի խօսքին համաձայն ըրաւ: Գորտերը մեռան տուներուն, բակերուն եւ դաշտերուն մէջ. **14** զանոնք զանգուածներով հաւաքեցին, ու երկիրը գարշահոտ եղաւ: **15** Բայց երբ Փարաւոն տեսաւ թէ հանգստաւէտութիւն կայ, իր սիրտը ^դխստացուց եւ անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը ըսեր էր:

Մուներ

16 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ըսէ՛ Ահարոնի. «Երկարէ՛ գաւազանդ ու զա՛րկ գետինի հողին, որպէսզի Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ ^եմուկ ըլլայ»[□]: **17** Այնպէս ալ ըրին: Ահարոն իր ձեռքը երկարեց եւ իր գաւազանով զարկաւ հողին, ու մարդոց վրայ եւ անասուններուն վրայ մուկ եղաւ: Եգիպտոսի ամբողջ երկրին վրայ՝ երկրին ամբողջ հողը մուկ եղաւ: **18** Մոգերն ալ իրենց կախարդութիւններով նոյնպէս ըրին՝ որպէսզի մուկեր արտադրեն, բայց չկրցան: Այսպէս՝ մարդոց եւ անասուններուն վրայ մուկ եղաւ: **19** Մոգերը ըսին Փարաւոնի. «Ասիկա Աստուծոյ մատն է»: Բայց Փարաւոնի սիրտը կարծրացաւ ու անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը ըսեր էր:

Շանաճանճեր

^ա Եբր.՝ գորտեր պիտի վխտացնէ
^բ Եբր.՝ փառաւորուէ՛ ինձմով
^գ Եբր.՝ դրած
^դ Եբր.՝ ծանրացուց
^ե Կամ՝ ոջիլ

20 Տէրը Մովսէսի ըսաւ. «Առտուն՝ կանոնիս ելիր, Փարաւոնի՝ ներկայացիր,– ահա՛ ան դուրս կ'ելլէ՝ դէպի ջուրը,– եւ անոր ըսէ՛. “Տէրը սա՛ կը յայտարարէ. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի զիս պաշտէ: 21 Իսկ եթէ իմ ժողովուրդս չարձակես, ես շանաճանճ պիտի դրկեմ քու վրայ, քու ծառաներուդ վրայ, քու ժողովուրդիդ վրայ ու քու տուններուդ վրայ. Եգիպտացիներուն տուները շանաճանճով պիտի լեցուին, նաեւ այն գետինը՝ որուն վրայ անոնք կը կենան: 22 Բայց այն օրը իմ ժողովուրդիս բնակած Գեսէմի երկիրը պիտի զատորոշեմ, եւ հոն շանաճանճ պիտի չըլլայ. որպէսզի գիտնաս թէ երկրին մէջ ե՛ս եմ Տէրը: 23 Իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ միջեւ խտրութիւն պիտի դնեմ. վաղը այս նշանը պիտի ըլլայ”□»: 24 Եւ Տէրը այնպէս ըրաւ: Փարաւոնի տան, անոր ծառաներուն տուններուն ու Եգիպտոսի ամբողջ երկրին վրայ շատ շանաճանճ եկաւ, եւ շանաճանճին պատճառով երկիրը ապականեցաւ:

25 Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը կանչեց, եւ ըսաւ. «Գացե՛ք, ձեր Աստուծոյն զոհեցէ՛ք այս երկրին մէջ»: 26 Մովսէս ըսաւ. «Պատշաճ չէ այսպէս ընել. որովհետեւ Եգիպտացիներուն գարշելի եղածները պիտի զոհենք Տէրոջ՝ մեր Աստուծոյն: Եթէ Եգիպտացիներուն գարշելի եղածները իրենց աչքերուն առջեւ զոհենք, միթէ պիտի չքարկոծե՞ն մեզ: 27 Մենք երեք օրուան ճամբայ պիտի երթանք անապատին մէջ, ու պիտի զոհենք Տէրոջ՝ մեր Աստուծոյն, ինչպէս ինք մեզի հրամայէ»: 28 Փարաւոն ըսաւ. «Ես ձեզ կ'արձակեմ՝ որպէսզի երթաք, ձեր Աստուծոյն՝ Եհովայի զոհէք անապատին մէջ. միայն թէ շատ հեռու չերթաք: Թախանձեցէ՛ք ինծի համար»: 29 Մովսէս ըսաւ. «Ահա՛ ես քու քովէդ կ'ելլեմ ու Տէրոջ կը թախանձեմ, որ վաղը շանաճանճը հեռացնէ Փարաւոնէ, անոր ծառաներէն եւ անոր ժողովուրդէն: Բայց Փարաւոն անգամ մըն ալ մեզ չխաբէ՛ ժողովուրդը չարձակելով որ Տէրոջ զոհէ»: 30 Երբ Մովսէս Փարաւոնի քովէն ելաւ՝ Տէրոջ թախանձեց: 31 Եւ Տէրը Մովսէսի խօսքին համաձայն ըրաւ, ու շանաճանճը հեռացուց Փարաւոնէ, անոր ծառաներէն եւ անոր ժողովուրդէն. մէ՛կ հատ իսկ չմնաց: 32 Բայց Փարաւոն այս անգամ ալ իր սիրտը խստացուց ու ժողովուրդը չարձակեց:

Անասուններու մահ

9

Տէրը Մովսէսի ըսաւ. «Մտի՛ր Փարաւոնի քով եւ ըսէ՛ անոր. “Տէրը՝ Եբրայեցիներուն Աստուածը՝ սա՛ կը յայտարարէ. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի զիս պաշտէ: 2 Արդարեւ եթէ մերժես զանոնք արձակել ու տակաւին ամուր բռնես զանոնք, 3 ահա՛ Տէրոջ ձեռքը դաշտին մէջ եղող քու խաշիներդ վրայ ըլլալով՝ ձիերուն, էջերուն, ուղտերուն, արջառներուն ու ոչխարներուն մէջ յոյժ սաստիկ ժանտախտ պիտի ըլլայ: 4 Տէրը Իսրայէլի խաշիներն ու Եգիպտոսի խաշիները պիտի զատորոշէ, եւ Իսրայէլի որդիներուն անասուններէն ո՛չ մէկը պիտի մեռնի”□»: 5 Տէրը ժամանակ որոշեց՝ ըսելով. «Տէրը վաղը պիտի ընէ այս բանը երկրին մէջ»: 6 Ու հետեւեալ օրը Տէրը ըրաւ այս բանը. Եգիպտացիներուն ամբողջ խաշիները մեռաւ, բայց Իսրայէլի որդիներուն խաշիներէն ո՛չ մէկ անասուն մեռաւ: 7 Փարաւոն մարդ դրկեց, եւ ահա՛ Իսրայէլի խաշիներէն ո՛չ մէկ անասուն մեռած էր: Սակայն Փարաւոնի սիրտը խստացաւ ու ժողովուրդը չարձակեց:

Ուռեցքներ

8 Տէրը Մովսէսի եւ Ահարոնի ըսաւ. «Առէ՛ք ձեզի երկու բուռ հնոցի մոխիր, ու Մովսէս դէպի երկինք թող ցանէ զայն՝ Փարաւոնի “առջեւ: 9 Ան փոշի պիտի ըլլայ Եգիպտոսի

“ Եբր.՝ աչքերուն

ամբողջ երկրին վրայ, ու մարդոց եւ անասուններուն վրայ խաղաւարտներ ^բհանող պալարներ պիտի ըլլան Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ»։ **10** Ուստի հնոցի մոխիրը առին, Փարաւոնի առջեւ կայնեցան, ու Մովսէս դէպի երկինք ցանեց զայն. մարդոց եւ անասուններուն վրայ խաղաւարտներ հանող պալարներ եղան։ **11** Մոգերը պալարներուն պատճառով չկրցան կայնիլ Մովսէսի առջեւ. որովհետեւ պալարները մոգերուն վրայ **ալ** ու բոլոր Եգիպտացիներուն վրայ եղան։ **12** Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, եւ անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը Մովսէսի ըսեր էր։

Կարկուտ

13 Տէրը Մովսէսի ըսաւ. «Առտուն՝ կանո՛ւխ ելիր, Փարաւոնի՛ ներկայացիր եւ անոր ըսէ՛. “Տէրը՝ Եբրայեցիներուն Աստուածը՝ սա՛ կը յայտարարէ. “Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի զիս պաշտէ. **14** քանի որ այս անգամ իմ բոլոր պատուհասներս պիտի դրկեմ քու ^գվրայ, եւ ծառաներուդ ու ժողովուրդիդ վրայ, որպէսզի գիտնաս թէ ինծի նման ո՛չ մէկը **կայ** ամբողջ երկրի վրայ։ **15** Արդարեւ հիմա ձեռքս պիտի երկարեմ՝ որպէսզի քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ, ու երկրի վրայէն պիտի անհետանաս։ **16** Զեզ ^դնշանակեցի, որպէսզի իմ կարողութիւնս քեզմով ցոյց տամ, եւ ամբողջ երկրի վրայ իմ անունս հռչակուի։ **17** Դուն տակաւին իմ ժողովուրդիս դէ՞մ կը կենաս, որ չարձակես զայն։ **18** Ահա՛ վաղը՝ այս ատեն՝ յոյժ սաստիկ կարկուտ պիտի տեղացնեմ, որուն պէս Եգիպտոսի մէջ եղած չէ՛ անոր հիմնուած օրէն մինչեւ հիմա։ **19** Հիմա **մարդ**՝ դրկէ եւ ^ե“հաւաքէ՛ քու խաշինքդ, նաեւ ինչ որ ունիս դաշտին մէջ. որովհետեւ բոլոր **անոնք**՝ մարդ թէ անասուն՝ որ դաշտին մէջ գտնուին ու տուները հաւաքուած չըլլան, անոնց վրայ կարկուտը պիտի իջնէ, եւ պիտի մեռնին”□»։ **20** Փարաւոնի ծառաներէն ա՛ն՝ որ Տէրոջ խօսքէն կը վախնար, իր ծառաներն ու խաշինքը տուներու մէջ ^զ“հաւաքեց։ **21** Սակայն ո՛վ որ Տէրոջ ^էխօսքին ուշադրութիւն չդարձուց”, իր ծառաներն ու խաշինքը դաշտին մէջ թողուց։

22 Տէրը Մովսէսի ըսաւ. «Երկարէ՛ ձեռքդ դէպի երկինք, որ կարկուտ ըլլայ Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ՝ մարդոց եւ անասուններուն վրայ, ու Եգիպտոսի երկրին մէջ եղող դաշտերուն ամբողջ բոյսին վրայ»։ **23** Երբ Մովսէս իր գաւազանը երկարեց դէպի երկինք, Տէրը ^բորոտում եւ կարկուտ ^ըդրկեց, ու կրակը երկրի վրայ կը շրջէր։ Տէրը Եգիպտոսի երկրին վրայ կարկուտ տեղացուց. **24** յոյժ սաստիկ էր կարկուտը, եւ կարկուտին խառնուած կրակը, այնպէս որ անոր նմանը եղած չէր Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ՝ ազգ ըլլալէն ի վեր։ **25** Կարկուտը Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ զարկաւ դաշտը եղող

^բ Եբր.՝ ծաղկեցնող

^գ Եբր.՝ սրտիդ վրայ

^դ Եբր.՝ կայնեցուցի

^ե Եբր.՝ փախցո՛ւր

^զ Եբր.՝ փախցուց

^է Եբր.՝ խօսքը սիրտին մէջ չդրաւ

^բ Եբր.՝ ձայն

^բ Եբր.՝ տուաւ

ամէն ինչ, մարդէ մինչեւ անասուն. կարկուտը դաշտին ամբողջ բոյսը զարկաւ, ու դաշտին բոլոր ծառերը կոտրեց: **26** Միայն Գեսէմի երկրին մէջ, ուր Իսրայէլի որդիները **կը բնակէին**, կարկուտ չեղաւ:

27 Փարաւոն **մարդ** ղրկեց, Մովսէսն ու Ահարոնը կանչեց, եւ անոնց ըսաւ. «Այս անգամ մեղանչեցի. Եհովան արդար է, ու ես եւ իմ ժողովուրդս ^ժյանցաւոր եմք: **28** Թախանձեցէ՛ք Տէրոջ՝ որ Աստուծոյ որոտումներն ու կարկուտը ^հդադրին, եւ ձեզ պիտի արձակեմ ու ա՛յ պիտի չկենաք»: **29** Մովսէս անոր ըսաւ. «Երբ քաղաքէն դուրս ելլեմ՝ իմ ձեռքերս Տէրոջ պիտի ^լերկարեմ, ու որոտումները պիտի դադրին եւ ա՛յ կարկուտ պիտի չըլլայ, որպէսզի գիտնաս թէ երկիրը Տէրոջն է: **30** Բայց ես գիտեմ թէ դուն ու քու ծառաներդ տակաւին Տէր Աստուծմէ չէք վախնար»:

31 Վուշը եւ գարին զարնուեցան, որովհետեւ գարին հասած էր, ու վուշը՝ ծաղկած. **32** բայց ցորենը եւ հաճարը չզարնուեցան, քանի որ ուշ կը բուսնին:

33 Մովսէս Փարաւոնի քովէն ու քաղաքէն դուրս ելաւ, եւ իր ձեռքերը Տէրոջ երկարեց: Որոտումներն ու կարկուտը դադրեցան, եւ երկրի վրայ անձրեւ չտեղաց: **34** Երբ Փարաւոն անձրեւին, կարկուտին ու որոտումին դադրիլը տեսաւ, դարձեալ մեղանչեց. սիրտը խստացուց, նոյնպէս ալ իր ծառաները: **35** Այսպէս՝ Փարաւոնի սիրտը կարծրացաւ ու Իսրայէլի որդիները չարձակեց, ինչպէս Տէրը Մովսէսի ^իմիջոցով ըսեր էր:

Մարախներ

10

Տէրը Մովսէսի ըսաւ. «Մտիր՝ Փարաւոնի քով, որովհետեւ ես անոր սիրտը եւ անոր ծառաներուն սիրտը խստացուցի, որպէսզի այս նշաններս [՞]ցոյց տամ՝ անոնց մէջ. **2** եւ որպէսզի պատմես քու որդիիդ ու քու որդիիդ որդիին ականջներուն՝ ինչ որ ըրի Եգիպտացիներուն մէջ, եւ իմ նշաններս՝ որ անոնց մէջ ըրի, որպէսզի գիտնաք թէ ե՛ս եմ Տէրը»:

3 Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի քով եւ ըսին. «Եբրայեցիներուն Աստուածը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ. “Մինչեւ ե՞րբ պիտի մերժես խոնարհիլ իմ առջեւ. արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի գիս պաշտէ: **4** Արդարեւ եթէ մերժես իմ ժողովուրդս արձակել, ահա՛ վաղը քու հողամասիդ վրայ մարախներ պիտի ղրկեմ: **5** Անոնք երկրին ^բմակերեսը պիտի ծածկեն, այնպէս որ ո՛չ մէկը պիտի կարենայ տեսնել երկիրը. պիտի ուտեն ազատած մնացորդը, որ կարկուտէն ձեզի մնացած է. պիտի ուտեն նաեւ դաշտին մէջ բուսած ձեր բոլոր ծառերը: **6** Պիտի լեցուին քու տուներդ, քու բոլոր ծառաներուդ տուները եւ բոլոր Եգիպտացիներուն տուները, ինչ որ ո՛չ քու հայրերդ, ո՛չ ալ քու հայրերուդ հայրերը տեսած են, իրենց երկրագունդի վրայ տղած օրէն մինչեւ այսօր□»: Ու **Մովսէս** դարձաւ եւ Փարաւոնի քովէն դուրս ելաւ:

^ժ Եբր.՝ ամբարիշտ

^հ Եբր.՝ բաւական ըլլան

^լ Եբր.՝ տարածեմ

^ի Եբր.՝ ձեռքով

^բ Եբր.՝ դնեմ

^բ Եբր.՝ աչքը

7 Փարաւոնի ծառաները ըսին աճոր. «Մինչեւ ե՞րբ այս մարդը մեզի որոգայթ պիտի ըլլայ. արծակէ՛ մարդիկը, որ իրենց Աստուածը՝ Եհովան պաշտեն. տակաւին չե՞ս գիտեր թէ Եգիպտոս կործանեցաւ»։ **8** Ուստի Մովսէս ու Ահարոն Փարաւոնի վերադարձուցին, եւ ան իրենց ըսաւ. «Գացէ՛ք, պաշտեցէ՛ք ձեր Աստուածը՝ Եհովան. բայց Գորոնը պիտի երթան»։ **9** Մովսէս ըսաւ. «Մեր երիտասարդներով ու մեր ծերերով պիտի երթանք, մեր որդիներով ու մեր աղջիկներով. մեր ոչխարներով ու մեր արջառներով պիտի երթանք, որովհետեւ տօն պիտի կատարենք Տէրոջ»։ **10** Փարաւոն ըսաւ. «Տէրը այնպէս ձեզի հետ ըլլայ, ինչպէս ես ձեզ եւ ձեր մանուկները կ'արծակեմ: "Զգուշացէ՛ք, քանի որ չարիք կայ ձեր առջեւ: **11** Ո՛չ այդպէս. այժմ դո՛ւք՝ "այր մարդիկդ" գացէք ու Տէրը պաշտեցէք, որովհետեւ դուք ատիկա կ'ուզէիք»։ Եւ Փարաւոնի Գառնեւէն վռնտուեցան:

12 Տէրը Մովսէսի ըսաւ. «Երկարէ՛ ձեռքդ Եգիպտոսի երկրին վրայ՝ մարախներուն համար, որպէսզի Եգիպտոսի երկրին վրայ ելլեն եւ ուտեն երկրին ամբողջ բոյսը, կարկուտէն ամբողջ մնացածը»։ **13** Մովսէս իր գաւազանը երկարեց Եգիպտոսի երկրին վրայ, ու Տէրը այդ ամբողջ օրը եւ ամբողջ գիշերը երկրի վրայ արեւելեան հով փչել տուաւ: Երբ առտու եղաւ, արեւելեան հովը մարախները բերաւ: **14** Մարախները Եգիպտոսի ամբողջ երկրին վրայ բարձրացան, ու Եգիպտոսի ամբողջ հողամասին վրայ էիջան: Յոյժ շատ էին. անոնցմէ առաջ այդպիսի մարախ եղած չէր, ո՛չ ալ անոնցմէ ետք այդպէս պիտի ըլլայ: **15** Ամբողջ երկրին մակերեսը ծածկեցին, ու երկիրը խաւարեցաւ: Երկրին ամբողջ բոյսը եւ կարկուտէն մնացած ծառերուն բոլոր պտուղները կերան: Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ եղող ծառերուն վրայ եւ դաշտին բոյսերուն վրայ ո՛չ մէկ կանաչութիւն մնաց:

16 Ուստի Փարաւոն շտապելով Մովսէսն ու Ահարոնը կանչեց եւ ըսաւ. «Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ու ձեզի դէմ մեղանչեցի: **17** Հիմա կ'աղերսեմ, միայն այս անգամ ներեցէք յանցանքս, եւ Տէրոջ՝ ձեր Աստուծոյն թախանձեցէ՛ք, որ միայն այս մահը հեռացնէ ինձմէ»։ **18** Ան Փարաւոնի քովէն դուրս ելաւ ու Տէրոջ թախանձեց: **19** Տէրն ալ շատ ուժգին արեւմտեան հով մը Եղրկեց, որ մարախները վերցուց եւ Կարմիր ծովը քշեց զանոնք. Եգիպտոսի ամբողջ հողամասին վրայ ո՛չ մէկ մարախ մնաց: **20** Բայց Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, ու ան Իսրայէլի որդիները չարծակեց:

Շօշափելի խաւար

21 Տէրը Մովսէսի ըսաւ. «Երկարէ՛ ձեռքդ դէպի երկինք, որպէսզի Եգիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ, խաւար մը՝ որ կը շօշափուի»։ **22** Մովսէս իր ձեռքը երկարեց դէպի երկինք, ու Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ թանձր խաւար եղաւ երեք օր: **23** Զիրար չէին տեսներ, եւ ո՛չ մէկը իր տեղէն կանգնեցաւ երեք օր. բայց Իսրայէլի բոլոր որդիները լոյս ունէին իրենց բնակութիւններուն մէջ:

⁴ Երբ.՝ ո՞վ եւ ո՞վ

⁷ Երբ.՝ Նայեցէ՛ք

⁶ Երբ.՝ զօրաւոր մարդիկդ

⁴ Երբ.՝ երեսէն

⁵ Երբ.՝ տեղադրուեցան

² Երբ.՝ դարձուց

24 Փարաւոն Մովսէսը կանչեց եւ ըսաւ. «Գացէ՛ք, պաշտեցէ՛ք Եհովան. միայն ձեր ոչխարներն ու արջառները մնան. ձեր մանուկներն ալ ձեզի հետ թող երթան»։ 25 Մովսէս ըսաւ. «Պէտք է որ դուն մեր ձեռքը զոհեր եւ ողջակէզներ ալ տաս, որպէսզի Տէրոջ՝ մեր Աստուծոյն մատուցանենք։ 26 Մեր խաշիքն ալ մեզի հետ պիտի երթայ՝ անկէ կճղակ մը չմնալով, որովհետեւ անկէ՛ պէտք է առնենք, Տէրը՝ մեր Աստուածը պաշտելու համար. չենք գիտեր թէ ինչո՛վ պիտի պաշտենք Տէրը, մինչեւ որ հոն չերթանք»։ 27 Սակայն Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, եւ ան չուզեց զանոնք արձակել։ 28 Փարաւոն անոր ըսաւ. «Գնա՛ քովէս. զգուշացի՛ր դուն քեզի, ա՛լ իմ երեսս մի՛ տեսներ. որովհետեւ այն օրը՝ երբ իմ երեսս տեսնես, պիտի մեռնիս»։ 29 Մովսէս ըսաւ. «Ինչպէս ըսիր, անգա՛մ մըն ալ քու երեսդ վերստին պիտի չտեսնեմ»։

Անդրանիկներու մահ

11

Տէրը Մովսէսի ըսաւ. «Փարաւոնի վրայ ու Եգիպտոսի վրայ հարուած մըն ալ պիտի բերեմ. անկէ ետք ձեզ ասկէ պիտի արձակէ, ու երբ ձեզ արձակէ, ձեզ ասկէ ամբողջովին պիտի վռնտէ։ 2 Այժմ խօսէ՛ ժողովուրդին ականջներուն, որպէսզի ամէն մարդ իր բարեկամէն եւ ամէն կին իր բարեկամուհիէն արծաթէ իրեր ու ոսկիէ իրեր խնդրէ»։ 3 Տէրը շնորհք գտնել տուաւ ժողովուրդին՝ Եգիպտացիներուն՝ առջեւ։ Մովսէս ալ յոյժ մեծ մարդ մըն էր Եգիպտոսի երկրին մէջ՝ Փարաւոնի ծառաներուն առջեւ եւ ժողովուրդին առջեւ։

4 Մովսէս ըսաւ. «Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ես կէս գիշերին դուրս պիտի ելլեմ՝ Եգիպտոսի մէջտեղը, 5 ու Եգիպտոսի երկրին մէջ ամէն անդրանիկ պիտի մեռնի, իր գահին վրայ բազմող Փարաւոնի անդրանիկէն մինչեւ ջաղացքին ետեւը եղող ստրկուհիին անդրանիկը, եւ անասուններուն բոլոր առջիներէն»։ 6 Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ մեծ աղաղակ պիտի ըլլայ, որուն նմանը ո՛չ եղեր է, ո՛չ ալ բնաւ պիտի ըլլայ։ 7 Բայց Իսրայէլի որդիներուն մօտ, ո՛չ մէկ շուն պիտի շարժէ իր լեզուն՝ մարդու կամ անասունի դէմ. որպէսզի գիտնաք թէ Տէրը կը զատորոշէ Եգիպտացիներն ու Իսրայէլը։ 8 Այս բոլոր ծառաներդ իմ քովս պիտի իջնեն եւ ինծի երկրպագեն՝ ըսելով. “Դուն ու քեզի հետեւող” ամբողջ ժողովուրդը դո՛ւրս ելէք□։ Անկէ ետք՝ դուրս պիտի ելլեմ»։ Եւ Մովսէս բորբոքած բարկութեամբ Փարաւոնի քովէն դուրս ելաւ։

9 Տէրը Մովսէսի ըսաւ. «Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ, որպէսզի իմ հրաշքներս բազմապատկեմ Եգիպտոսի երկրին մէջ»։ 10 Մովսէս եւ Ահարոն այս բոլոր հրաշքները գործեցին Փարաւոնի առջեւ. բայց Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, ու չարձակեց Իսրայէլի որդիները իր երկրէն։

ԶԱՏԻԿԸ

12

Տէրը Եգիպտոսի երկրին մէջ խօսեցաւ Մովսէսի եւ Ահարոնի՝ ըսելով. 2 «Այս ամիսը ձեզի համար ամիսներուն սկիզբը ըլլայ։ Ձեզի համար՝ տարուան ամիսներուն առաջինը ըլլայ։ 3 Խօսեցէ՛ք Իսրայէլի ամբողջ համայնքին՝ ըսելով. “Այս ամսուան տասներորդ օրը՝

[□] Եբր.՝ աչքերուն

[□] Եբր.՝ քու ոտքիդ

իւրաքանչիւրը իրեն գառ մը թող առնէ՝ անհապետութեան համեմատ, **այսինքն** մէկ տան՝ մէկ գառ: **4** Եթէ **մէկ** ընտանիքը փոքրաթիւ է մէկ գառի համար, ինք եւ իր տան ամենամօտ դրացին թող առնեն **զայն**՝ անձերուն համրանքին համեմատ. գառին համար՝ հաշուեցէ՛ք իւրաքանչիւրին կերածին համեմատ: **5** Ձեր գառը անարատ, արու, մէկ տարեկան թող ըլլայ: Ոչխարներէ՛ն կամ այծերէ՛ն առէք **զայն**: **6** Պահեցէ՛ք զայն մինչեւ այս ամսուան տասնչորրորդ օրը. ապա Իսրայէլի համախմբուած ամբողջ համայնքը թող մորթէ զայն Բիրիկուան դէմ՝: **7 Անոր** արիւնէն թող առնեն ու քսեն երկու դրանդիներուն եւ վերի սեմին վրայ **այն** տուններուն՝ ուր զայն պիտի ուտեն: **8** Միսը այդ գիշերը թող ուտեն. զայն կրակի վրայ խորոված՝ բաղարջով ու լեղի խոտերով ուտեն: **9** Անկէ՛ հում կամ ջուրի մէջ եփած մի՛ ուտէք, հապա՛ կրակի վրայ խորոված, անոր գլուխն ու թաթերը, փորոտիքով միասին: **10** Անկէ ոչի՛նչ թողուցէք մինչեւ առտու. անկէ ինչ որ առտուն մնայ, կրակով այրեցէք: **11** Սա՛պէս կերէք զայն.— ձեր մէջքը գօտեւորուած, կօշիկները՝ ձեր ոտքերը, եւ գաւազանը՝ ձեր ձեռքը ըլլալով. զայն ածապարանքով կերէք: **12** Ասիկա Տէրոջ Գօտիկն է: Այդ գիշերը Եգիպտոսի երկրէն պիտի անցնիմ, ու Եգիպտոսի երկրին մէջ պիտի զարնեմ ամէն անդրանիկ, մարդէ մինչեւ անասուն: Եգիպտոսի բոլոր աստուածներուն դէմ՝ նատաւճիռ պիտի արձակեմ՝. ե՛ս եմ Տէրը: **13** Արիւնը ձեր **գտնուած** տուններուն վրայ նշանի համար պիտի ըլլայ. արիւնը տեսնելով՝ ձեր վրայէն պիտի անցնիմ, եւ հարուածը ձեր վրայ պիտի չգայ՝ **ձեզ** կոտորելու, երբ Եգիպտոսի երկիրը զարնեմ: **14** Այդ օրը ձեզի իբր յիշատակ թող ըլլայ, ու տօնեցէ՛ք զայն Տէրոջ համար. յաւիտենակա՛ն կանոնով մը տօնեցէք զայն ձեր սերունդներուն մէջ»:

ԲԱՂԱՐՋԱԿԵՐՔԻ ՏՕՆԸ

15 «Եօ՛թը օր բաղարջ կերէք. առաջին օրն իսկ ձեր տուններէն դո՛ւրս Գանեցէք թթխմորը, որովհետեւ առաջին օրէն մինչեւ եօթներորդ օրը՝ ո՛վ որ խմորեալ **հաց** ուտէ, այդ անձը Իսրայէլէն պիտի բնաջնջուի: **16** Առաջին օրը սո՛ւրբ ժողով մը գումարեցէք, եօթներորդ օրն ալ ձեզի սո՛ւրբ ժողով մը գումարեցէք: Այն **օրերը** ո՛չ մէկ գործ ըրէք, բացի ամէն էմէկուն ուտելիքէն. զայն միայն պատրաստեցէք: **17** Կատարեցէ՛ք Բաղարջակերքի **տօնը**, քանի որ այդ նոյն օրը ձեր զօրաբաժինները Եգիպտոսի երկրէն հանեցի. ուստի յաւիտենական կանոնով մը տօնեցէ՛ք այդ օրը ձեր սերունդներուն մէջ: **18** Առաջին ամսուան տասնչորրորդ օրուան իրիկունէն մինչեւ ամսուան քսանմէկերորդ օրուան իրիկունը՝ բաղա՛րջ կերէք: **19** Եօթը օր ձեր տուններուն մէջ թթխմոր թող չգտնուի.

^ա Այսինքն՝ հայրերու տան

^բ Եբբ.՝ երկու իրիկուններուն մէջտեղ

^գ Եբբ.՝ փեսայ, այսինքն՝ անցնիլ

^դ Կամ՝ իշխաններուն

^ե Եբբ.՝ դատաստան պիտի կիրարկեմ

^զ Եբբ.՝ դարդեցուցէք

^է Եբբ.՝ անձի

^ը Եբբ.՝ Բաղարջներու

որովհետեւ ո՛վ որ խմորեալ **հաց** ուտէ, այդ անձը Իսրայէլի համայնքէն պիտի բնաջնջուի, գաղթական ըլլայ թէ բնիկ: **20** Խմորեալ ոչի՛նչ կերէք. բաղա՛րջ կերէք ձեր բոլոր բնակարաններուն մէջ»:

ԱՌԱՋԻՆ ԶԱՏԻԿԸ

21 Մովսէս Իսրայէլի բոլոր երէցները կանչեց եւ անոնց ըսաւ. «^բԳացէ՛ք, առէ՛ք ձեզի մէկական ոչխար՝ ձեր գերդաստաններուն համեմատ, ու մորթեցէ՛ք զատիկը: **22** Առէ՛ք զոպայի փունջ մը, թաթխեցէ՛ք զայն կոնքին մէջ եղող արիւնին մէջ, եւ կոնքին մէջ եղող արիւնէն քսեցէ՛ք դրան վերի սեմին ու երկու դրանդիներուն վրայ: Մինչեւ առտու՝ ձեզմէ ո՛չ մէկը իր տան դռնէն դուրս ելլէ, **23** քանի որ Տէրը պիտի անցնի՝ Եփրատացիները զարնելու համար: Երբ **դրան** վերի սեմին ու երկու դրանդիներուն վրայ արիւնը տեսնէ, Տէրը **այդ** դրան վրայէն պիտի անցնի եւ պիտի չթոյլատրէ որ բնաջնջողը ձեր տունները մտնէ՝ **ձեզ** զարնելու համար: **24** Այս բանը պահեցէ՛ք իբր յաւիտեանական կանոն՝ քեզի ու քու որդիներուդ: **25** Երբ երթաք այն երկիրը, որ Տէրը ձեզի պիտի տայ՝ իր խոստումին համաձայն, կատարեցէ՛ք այս պաշտօնը: **26** Երբ ձեր որդիները ձեզի ըսեն. “Ի՞նչ է այս ձեր **կատարած** պաշտօնը”, **27** ըսէ՛ք. “Ասիկա Տէրոջ Զատիկին զոհն է: Ան Եփրատոսի մէջ Իսրայէլի որդիներուն տուններուն վրայէն անցաւ՝ երբ Եփրատացիները զարկաւ, եւ մեր տունները ազատեց»: Ժողովուրդը խոնարհեցաւ ու երկրպագեց: **28** Իսրայէլի որդիները գացին եւ այնպէս ըրին. Տէրոջ Մովսէսի ու Ահարոնի պատուիրածին համաձայն ըրին:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐՈՒ ՄԱՀԸ

29 Կէս գիշերին՝ Տէրը Եփրատոսի երկրին մէջ ամէն անդրանիկ զարկաւ, իր գահին վրայ բազմող Փարաւոնի անդրանիկէն մինչեւ բանտին մէջ եղող գերիին անդրանիկը, եւ ամէն անասունի առջինեկը: **30** Փարաւոն գիշերուան մէջ ելաւ, ինք ու իր բոլոր ծառաները եւ բոլոր Եփրատացիները. Եփրատոսի մէջ մեծ աղաղակ մը եղաւ, քանի որ տո՛ւն մը չկար՝ ուր մեռել չըլլար:

31 Գիշերուան մէջ Մովսէսն ու Ահարոնը կանչեց եւ ըսաւ. «Կանգնեցէ՛ք, դո՛ւրս ելէք իմ ժողովուրդիս մէջէն, թէ՛ դո՛ւք եւ թէ՛ Իսրայէլի որդիները: Գացէ՛ք, պաշտեցէ՛ք Եհովան՝ ինչպէս ըսիք: **32** Նաեւ առէ՛ք ձեր ոչխարներն ու արջառները, ինչպէս ըսիք, եւ գացէ՛ք, ու զի՛ս ալ օրհնեցէ՛ք»: **33** Եփրատացիները բռնադատեցին ժողովուրդը՝ որպէսզի շուտով **այդ** երկրէն դուրս դրկեն զանոնք, քանի որ կ'ըսէին. «Բոլորս ալ պիտի մեռնինք»: **34** Ուստի ժողովուրդը առաւ իր **խմորի** զանգուածը՝ խմորուելէն առաջ, եւ իրենց ուսերուն վրայ **վերցուցին** իրենց տաշտերը, **որ** իրենց հանդերձներուն մէջ փաթթուած էին: **35** Իսրայէլի որդիները Մովսէսի խօսքին համաձայն ըրին, ու Եփրատացիներէն արծաթէ իրեր, ոսկիէ իրեր եւ հանդերձներ խնդրեցին: **36** Տէրը ժողովուրդին շնորհք **գտնել** տուաւ Եփրատացիներուն՝ ^ժառջեւ, այնպէս որ իրենց խնդրածը տուին, եւ իրենք կողոպտեցին Եփրատացիները:

ԻՍՐԱՅԵԼԱՅԻՆԵՐԸ ԿԸ ՀԵՌԱՆԱՆ ԵԳԻՊՏՈՍԷՆ

37 Իսրայէլի որդիները Ռամսէսէ մեկնեցան դէպի Սոկըրովթ: Մանուկներէն զատ՝ վեց

^բ Եբր.՝ Զաշուեցէ՛ք
^ժ Եբր.՝ աչքերուն

հարիւր հազարի չափ հետեւակ ՚այր մարդիկ՝ էին: 38 Անոնց հետ խառն բազմութիւն մըն ալ բարձրացաւ, նաեւ ոչխարներ եւ արջառներ – յոյժ մեծ խաշինք: 39 Եգիպտոսէն իրենց հանած խմորի զանգուածէն անխմոր շօթեր եփեցին, քանի որ խմորեալ չէր: Արդարեւ Եգիպտոսէն վռնտուեցան, ու չէին կրնար տնտնալ. իրենց պաշար ալ պատրաստած չէին:

40 Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն բնակած ժամանակը՝ չորս հարիւր երեսուն տարի էր: 41 Չորս հարիւր երեսուն տարիներու վախճանին, այդ նոյն օրը Տէրոջ բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրէն դուրս ելան: 42 Ասիկա յիշատակուելու գիշեր մըն է Տէրոջ համար, որովհետեւ զանոնք Եգիպտոսի երկրէն դուրս հանեց: Ա՛յս է Տէրոջ այն գիշերը, որ յիշատակուելու է Իսրայէլի բոլոր որդիներէն՝ իրենց սերունդներուն մէջ:

ՋԱՏԻԿԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

43 Տէրը Մովսէսի եւ Ահարոնի ըսաւ. «Ահա՛ւասիկ զատիկին կանոնը: Ո՛չ մէկ օտարազգի անկէ պիտի ուտէ. 44 բայց ամէն մարդու ստրուկը՝ որ դրամով գնուած է, երբ զայն թլփատես՝ անկէ թող ուտէ: 45 Հիւրն ու վարձկանը անկէ պիտի չուտեն: 46 Ան մէկ տան մէջ պիտի ուտուի. տունէն դուրս պիտի չհանես այդ միսէն, ո՛չ ալ անոր մէկ ոսկորը պիտի կոտրէք: 47 Իսրայէլի ամբողջ համայնքը թող կատարէ զայն: 48 Երբ գաղթական մը քովդ պանդխտանայ եւ ուզէ Տէրոջ Զատիկ կատարել, անոր բոլոր արունները թող թլփատուին. ա՛յն ատեն թող մօտենայ ու զայն կատարէ – եւ ինք բնիկին պէս պիտի ըլլայ –, քանի որ ո՛չ մէկ անթլփատ անկէ պիտի ուտէ: 49 Մէ՛կ օրէնք պիտի ըլլայ բնիկին ու ձեր մէջ պանդխտացած գաղթականին համար»: 50 Իսրայէլի բոլոր որդիները այնպէս ըրին. Տէրոջ Մովսէսի եւ Ահարոնի պատուիրածին համաձայն ըրին: 51 Այդ նոյն օրը Տէրը Եգիպտոսի երկրէն հանեց Իսրայէլի որդիները՝ իրենց զօրաբաժիններով:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ

13

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 «Սրբացո՛ւր ինծի ամէն անդրանիկ, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն արգանդ բացող, թէ՛ մարդ եւ թէ անասուն. ան իմս է»:

ԲԱՆԱՐՋԱԿԵՐՔԻ ՏՕՆԸ

3 Մովսէս ժողովուրդին ըսաւ. «Յիշեցէ՛ք այս օրը, երբ Եգիպտոսէն՝ ստրկութեան տունէն՝ ելաք, որովհետեւ Տէրը ուժեղ ձեռքով ձեզ ասկէ հանեց. խմորեալ հաց մի՛ ուտէք: 4 Դուք այսօր դուրս ելաք, Ապիպ ամսուան մէջ: 5 Երբ Տէրը քեզ տանի Քանանացիներուն, Բետացիներուն, Ամորհացիներուն, Խեւացիներուն եւ Յեբուսացիներուն երկիրը, որուն համար քու հայրերուդ երդում ըրաւ՝ քեզի տալու – կաթ ու մեղր հոսեցնող երկիրը –, ա՛յս ամսուան մէջ կատարէ այս պաշտօնը: 6 Եօ՛թը օր բաղարջ կեր, եւ եօթներորդ օրը տօն ըլլայ Տէրոջ: 7 Այդ եօթը օրերուն մէջ բաղարջ թող ուտուի, ու քովդ խմորեալ հաց թող չտեսնուի, ո՛չ ալ քովդ թթխմոր թող տեսնուի ամբողջ հողամասիդ մէջ: 8 Այն օրը պատմէ՛ քու որդիիդ՝ ըսելով. “Ասիկա յիշելու համար է ի՛նչ որ Տէրը ըրաւ ինծի՝ երբ Եգիպտոսէն ելայք: 9 Ասիկա քեզի իբր նշան պիտի ըլլայ ձեռքիդ վրայ եւ իբր յիշատակ աչքերուդ մէջտեղ, որպէսզի Տէրոջ օրէնքը քու բերանիդ մէջ ըլլայ. որովհետեւ Տէրը

^h Երբ.՝ զօրաւոր մարդիկ

^u Երբ.՝ ստրուկներու

ուժեղ ձեռքով քեզ Եգիպտոսէն հանեց: 10 Ուստի պահէ՛ այս կանոնը Բամէն տարի՞, իր սահմանուած ատենին»:

ԱՆԴՐԱՆԻԿԸ

11 «Երբ Տէրը քեզ տանի Զանանացիներուն երկիրը,– ինչպէս քեզի ու քու հայրերուդ երդում ըրաւ՝ որ զայն քեզի տայ,– 12 Տէրոջ համար զատէ՛ ամէն արգանդ բացող, եւ քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուն Տէրոջ ըլլայ: 13 Իշու ամէն առջինեկը գառով մը փրկէ. եթէ չփրկես, անոր ծոծրա՛կը կտորէ: Զու որդիներուդ մէջ՝ մարդոց ամէն անդրանիկը փրկէ՛: 14 Երբ քու որդիդ ՚վաղը քեզի հարցնէ. “Ի՞նչ է այս□, անոր ըսէ. “Տէրը մեզ Եգիպտոսէն՝ ստրկութեան տունէն՝ ուժեղ ձեռքով հանեց: 15 Երբ Փարաւոն խստացաւ ու չուզեց մեզ արձակել, Տէրը Եգիպտոսի երկրին մէջ մեռցուց ամէն անդրանիկ, մարդու անդրանիկէն մինչեւ անասունի առջինեկը. ուստի ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջ կը զոհեմ, իսկ իմ որդիներուս ամէն անդրանիկը կը փրկեմ□: 16 Ասիկա իբր նշան պիտի ըլլայ ձեռքիդ վրայ եւ իբր ճակատանոց աչքերուդ մէջտեղ, որովհետեւ Տէրը ուժեղ ձեռքով մեզ Եգիպտոսէն հանեց»:

ԱՄՊԻ ՍԻՒՆԸ ԵՒ ԿՐԱԿԻ ՍԻՒՆԸ

17 Երբ Փարաւոն ժողովուրդը արձակեց, Աստուած զանոնք Փղշտացիներու երկրին ճամբայէն չառաջնորդեց, թէպէտ այդ ճամբան մօտ էր, քանի որ Աստուած ըսաւ. «Ժողովուրդը թող չհրաժարի՝ երբ պատերազմը տեսնէ, ու Եգիպտոս վերադառնայ»: 18 Հապա Աստուած ժողովուրդը Կարմիր ծովուն անապատին ճամբայէն դառնալ տուաւ, ու Իսրայէլի որդիները Գոււնդ–գոււնդ Եգիպտոսի երկրէն բարձրացան: 19 Մովսէս Յովսէփի ոսկորները իրեն հետ առաւ, որովհետեւ ան Իսրայէլի որդիներուն հաստատ երդում ընել տուեր էր՝ ըսելով. «Աստուած անշո՛ւշտ ձեզի պիտի այցելէ. ուստի իմ ոսկորներս ձեզի հետ հանեցէ՛ք ասկէ»:

20 Սոկրովթէ մեկնեցան եւ Ոթոմի մէջ՝ անապատին ծայրը բանակեցան: 21 Տէրը անոնց առջեւէն կ'երթար, ցերեկը ամպի սիւնով՝ ճամբան զանոնք առաջնորդելու համար, իսկ գիշերը կրակի սիւնով՝ զանոնք լուսաւորելու համար, որպէսզի ցերեկ ու գիշեր երթան: 22 Յերեկը ամպի սիւնը չհեռացուց ժողովուրդին առջեւէն, ո՛չ ալ գիշերը՝ կրակի սիւնը:

ԿԱՐՄԻՐ ԾՈՎԷՆ ԱՆՅԸԸ

14

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն, որ դառնան ու Փիայիրոթի առջեւ՝ Մագդոդի եւ ծովուն մէջտեղ բանակին. Բահադ–Սեփոնի առջեւ, անոր դիմացը՝ ծովուն քով բանակեցէք: 3 Փարաւոն Իսրայէլի որդիներուն համար պիտի ըսէ.

^բ Երբ.՝ օրերէ օրեր

^գ Այսինքն՝ փրկա՛նք վճարէ

^դ Այսինքն՝ օր մը

^ե Կամ՝ սպառազինեալ

“Երկրին մէջ “մոլորած են, անապատը զանոնք շրջափակած է^u: **4** Փարաւոնի սիրտը պիտի կարծրացնեմ, ու զանոնք պիտի հետապնդէ. իսկ ես Փարաւոնի վրայ եւ անոր բոլոր ^pզօրագունդերուն վրայ պիտի փառաւորուիմ, ու Եգիպտացիները պիտի գիտնան թէ ե՛ս եմ Տէրը»։ Անոնք ալ այդպէս ըրին։

5 Եգիպտոսի թագաւորին պատմուեցաւ թէ ժողովուրդը փախաւ։ Փարաւոնի եւ անոր ծառաներուն սիրտը փոխուեցաւ ժողովուրդին հանդէպ, ու ըսին. «Մենք ինչո՞ւ ըրինք այս բանը, եւ արձակեցինք Իսրայէլը՝ որ մեզի չծառայէ»։ **6** Ուստի Փարաւոն իր կառքը լծեց եւ իր ժողովուրդը իրեն հետ առաւ։ **7** Վեց հարիւր ընտիր կառքեր առաւ, նաեւ Եգիպտոսի բոլոր կառքերը, ու զօրավարներ՝ անոնցմէ ամէն **մէկուն** մէջ։ **8** Տէրը Եգիպտոսի Փարաւոն թագաւորին սիրտը կարծրացուց, եւ ան Իսրայէլի որդիները հետապնդեց։ Իսրայէլի որդիները բարձրացած ձեռքով դուրս ելան, **9** բայց Եգիպտացիները,– Փարաւոնի բոլոր ձիերը **եւ** կառքերը, անոր ձիաւորներն ու զօրագունդերը,– զանոնք հետապնդեցին եւ հասան անոնց՝ երբ բանակած էին ծովուն մօտ՝ Փիայիրոթի քով, Բահաղ–Սեփոնի առջեւ։

10 Երբ Փարաւոն մօտեցաւ, Իսրայէլի որդիները իրենց աչքերը վերցուցին, եւ ահա՛ Եգիպտացիները իրենց ետեւէն կու գային։ Չափազանց վախնալով՝ Իսրայէլի որդիները աղաղակեցին Տէրոջ, **11** եւ ըսին Մովսէսի. «Եգիպտոսի մէջ գերեզմաններ չըլլալո՞ւն համար մեզ անապատին մէջ մեռնելու բերիր. այս ի՞նչ է որ մեզի ըրիր՝ մեզ Եգիպտոսէն հանելով։ **12** Այս չէ՞ր այն խօսքը, որ քեզի ըսինք Եգիպտոսի մէջ. “Թո՛ղ մեզ, որ Եգիպտացիներուն ծառայենք. քանի որ աւելի լաւ է մեզի Եգիպտացիներուն ծառայել, քան անապատին մէջ մեռնիլ^u»։ **13** Իսկ Մովսէս ժողովուրդին ըսաւ. «Մի՛ վախնա՛ք, կայնեցէ՛ք ու տեսէ՛ք Տէրոջ փրկութիւնը՝ որ այսօր պիտի իրագործէ ձեզի համար. որովհետեւ այսօր ձեր տեսած Եգիպտացիները՝ ա՛լ երբեք վերստին պիտի չտեսնէք։ **14** Տէ՛րը պիտի պատերազմի ձեզի համար. դուք լռեցէ՛ք»։

15 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ինչո՞ւ ինծի կ’աղաղակես. ըսէ՛ Իսրայէլի որդիներուն՝ որ մեկնին։ **16** Եւ դուն վերցո՛ւր գաւազանդ, երկարէ՛ ձեռքդ ծովուն վրայ ու ճեղքէ՛ զայն, որպէսզի Իսրայէլի որդիները ծովուն մէջտեղը՝ ցամաքի վրայէն երթան։ **17** Ահա՛ Եգիպտացիներուն սիրտը պիտի կարծրացնեմ, եւ անոնց ետեւէն պիտի մտնեն, ու ես պիտի փառաւորուիմ Փարաւոնի եւ անոր բոլոր զօրագունդերուն վրայ, անոր կառքերուն ու ձիաւորներուն վրայ։ **18** Երբ փառաւորուիմ Փարաւոնի, անոր կառքերուն եւ ձիաւորներուն վրայ, Եգիպտացիները պիտի գիտնան թէ ե՛ս եմ Տէրը»։

19 Աստուծոյ հրեշտակը, որ Իսրայէլի բանակին առջեւէն կ’երթար, մեկնեցաւ եւ անոնց ետեւը գնաց։ Ամպի սիւնն ալ անոնց առջեւէն մեկնեցաւ ու անոնց ետեւը կայնեցաւ. **20** Եգիպտացիներու բանակին եւ Իսրայէլի բանակին մէջտեղ եկաւ, ուստի ամպ ու խաւար եղաւ **Եգիպտացիներուն**, բայց գիշերը կը լուսաւորէր **Իսրայէլացիները**. ամբողջ գիշերը իրարու չմօտեցան։

21 Մովսէս իր ձեռքը երկարեց ծովուն վրայ, ու Տէրը՝ արեւելեան սաստիկ հովով մը՝ ծովը ‘ետ մղեց՝ ամբողջ գիշերը. ծովը ցամքեցաւ, ջուրերը ճեղքուեցան, **22** եւ Իսրայէլի որդիները ծովուն մէջտեղը՝ ցամաքի վրայէն գացին։ Ջուրերը անոնց պարիսպ եղան՝ իրենց աջ կողմէն ու ձախ կողմէն։

23 Եգիպտացիները **զանոնք** հետապնդեցին, եւ Փարաւոնի բոլոր ձիերը, կառքերն ու ձիաւորները անոնց ետեւէն մտան **մինչեւ** ծովուն մէջտեղը։ **24** Առտուան պահուն Տէրը

^u Կամ՝ շփոթած

^p Եբր.՝ գինեալ ոյժերուն

^q Եբր.՝ տարաւ

Եգիպտացիներու բանակին նայեցաւ կրակի եւ ամպի սիւնէն, ու Եգիպտացիներուն բանակը խուճապի մատնեց: **25** Անոնց կառքերուն անիւները հանեց, որպէսզի գանոնք դժուարութեամբ վարեն: Ուստի Եգիպտացիները ըսին. «Փախչի՛նք Իսրայէլի առջեւէն, որովհետեւ **ահա՛** Եհովա՛ն Եգիպտացիներուն դէմ կը պատերազմի՝ անոնց համար»:

26 Տէրը Մովսէսի ըսաւ. «Երկարէ՛ ձեռքդ ծովուն վրայ, որպէսզի ջուրերը Եգիպտացիներուն վրայ, անոնց կառքերուն ու ձիաւորներուն վրայ վերադառնան»: **27** Մովսէս իր ձեռքը երկարեց ծովուն վրայ, եւ առտուան դէմ ծովը իր Դտեղը վերադարձաւ: Եգիպտացիները անոր առջեւէն փախան, ու Տէրը թօթուեց Եգիպտացիները ծովուն մէջտեղը: **28** Ջուրերը վերադարձան եւ ծածկեցին Փարաւոնի կառքերը, ձիաւորներն ու բոլոր զօրագունդերը՝ որ անոնց ետեւէն ծովուն մէջ մտած էին. անոնցմէ ո՛չ մէկը մնաց: **29** Բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջտեղը՝ ցամաքի վրայէն գացին, եւ ջուրերը անոնց պարիսպ եղան՝ իրենց աջ կողմէն ու ձախ կողմէն: **30** Տէրը այդ օրը ազատեց Իսրայէլը Եգիպտացիներուն ձեռքէն: Իսրայէլ մեռած տեսաւ Եգիպտացիները՝ ծովուն եզերքը: **31** Իսրայէլ տեսաւ այն մեծ Գործը՝ որ Տէրը ըրաւ Եգիպտացիներուն վրայ: Ժողովուրդը վախցաւ Տէրոջմէն, ու հաւատաց Տէրոջ եւ անոր ծառային՝ Մովսէսի:

ՄՈՎՍԷՍԻ ԵՐԳԸ

15

Այն ատեն Մովսէս ու Իսրայէլի որդիները սա՛ երգը երգեցին Տէրոջ՝ ըսելով.

«Պիտի երգեմ Տէրոջ, քանի որ մեծապէս բարձրացաւ.

Ձին եւ անոր հեծեալը ծովը նետեց:

2 Մէրն է իմ զօրութիւնս ու սաղմոսս,

Եւ իմ փրկութիւնս եղաւ.

Ա՛ն է իմ Աստուածս, ու պիտի փառաւորեմ զայն.

Իմ հօրս Աստուածն է, եւ պիտի բարձրացնեմ զայն:

3 Տէրը **հզօր** պատերազմիկ է.

Անոր անունը Եհովա է:

4 Փարաւոնի կառքերն ու անոր զօրագունդերը ծովը նետեց,

Եւ անոր ընտիր զօրավարները Կարմիր ծովուն մէջ մխրճուեցան:

5 Անդունդները ծածկեցին զանոնք.

Քարի պէս խորունկը իջան:

6 Զու աջ ձեռքդ, ո՛վ Տէր, վեհափառ է ոյժով.

Զու աջ ձեռքդ, ո՛վ Տէր, ջախջախեց թշնամին:

7 Զու մեծափառութեանդ ճոխութեամբ տապալեցիր քեզի դէմ կանգնողները,

Զու բորբոքումդ դրկեցիր, ու զանոնք խոզանի պէս սպառեց:

8 Զու ոռնգերուդ Բշունչով՝ ջուրերը դիզուեցան,

ԳՅորձանքները կարկառի պէս կայնեցան,

⁷ Եբբ.՝ տոկունութեան

⁸ Եբբ.՝ ձեռքը

⁹ Եբբ.՝ Եա՛հն

¹⁰ Եբբ.՝ ոգիով

¹¹ Եբբ.՝ Հոսանքները

ԵԼԵԻ ԳԻՐԸԸ

Ծովուն սիրտին մէջ անդունդները սառեցան:

- 9** Թշնամին կ'ըսէր. «Պիտի հետապնդեմ, պիտի հասնիմ,
Աւարը պիտի բաժնեմ,
Իմ անձս անոնցմէ պիտի կշտանայ.
Իմ սուրս պիտի քաշեմ,
Իմ ձեռքս զանոնք պիտի վտարէ»:

- 10** Զու հովի փչեցիր, ծովը զանոնք ծածկեց.

⁷Զօրաւոր ջուրերուն մէջ կապարի պէս ընկղմեցան:

- 11** Ո՛վ Տէր, աստուածներուն մէջ քեզի նման ո՞վ կայ:

⁸Սրբութեան մէջ վեհափառ, գովաբանութեան մէջ ահեղ,
Սքանչելիքներ ընող՝ ո՞վ կայ քեզի նման:

- 12** Զու աջ ձեռքդ երկարեցիր,

Երկիրը զանոնք կլլեց:

- 13** Զու կարեկցութեամբդ առաջնորդեցիր այս ժողովուրդը՝ որ դուն փրկեցիր.

Զու զօրութեամբդ տարիր **զայն** քու սուրբ բնակութիւնդ:

- 14** Ժողովուրդները պիտի լսեն **ու** սասանին.

Սարսափը պիտի համակէ՝ «Փղշտացիներու երկրին»՝ բնակիչները:

- 15** Այն ատեն Եդովմի պետերը պիտի սոսկան,

Դողը պիտի համակէ Մովաբի զօրաւորները.

Քանանի բոլոր բնակիչները պիտի հալին:

- 16** Անոնց վրայ ահ ու երկիւղ պիտի իյնան.

Զու բազուկիդ մեծութենէն՝ քարի պէս լուռ պիտի կենան,

Մինչեւ որ քու ժողովուրդդ անցնի, ո՛վ Տէր,

Մինչեւ որ անցնի այս ժողովուրդը՝ որ դուն ստացար:

- 17** Պիտի բերես զանոնք եւ քու ժառանգութեանդ լեռը պիտի տնկես զանոնք,

Ո՛վ Տէր, այն վայրը՝ **որ** քու բնակութեանդ համար պատրաստեցիր,

Ո՛վ Տէր, այն սրբարանին մէջ՝ **որ** քու ձեռքերդ հաստատեցին:

- 18** Տէրը պիտի թագաւորէ՝ դարէ դար՝»:

19 Արդարեւ Փարաւոնի ձիերը ծովը մտան՝ իր կառքերով ու ձիաւորներով, եւ Տէրը ծովուն ջուրերը անոնց վրայ վերադարձուց. բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջտեղէն ցամաքով գացին:

ՄԱՐԻԱՄԻ ԵՐԳԸ

20 Ահարոնի քոյրը՝ Մարիամ մարգարէուհին՝ թմբուկը իր ձեռքը առաւ, եւ բոլոր կիները անոր ետեւէն դուրս ելան՝ թմբուկներով ու պարերով: **21** Մարիամ պատասխանեց անոնց.

«Երգեցէ՛ք Տէրոջ, քանի որ մեծապէս բարձրացաւ.

Ձիւն եւ անոր հեծեալը ծովը նետեց»:

⁷ Եբբ.՝ Հոյակապ

⁸ Կամ՝ Սուրբերուն

⁹ Եբբ.՝ Պաղեստինի

¹⁰ Եբբ.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

22 Մովսէս Կարմիր ծովէն ճամբայ հանեց Իսրայէլը, ու դուրս ելան դէպի Սուրի անապատը: Երեք օրուան ճամբայ գացին անապատին մէջ, բայց ջուր չգտան: **23** Երբ Մարա հասան, չէին կրնար խմել Մարայի ջուրերէն, որովհետեւ դառն էին. ուստի անոր անունը ^բՄարա կոչուեցաւ: **24** Ժողովուրդը տրտնջեց Մովսէսի դէմ՝ ըսելով. «Ի՞նչ պիտի խմենք»: **25** Ան ալ Տէրոջ աղաղակեց, եւ Տէրը անոր փայտ մը ցուցուց. երբ **գայն** ջուրերուն մէջ նետեց՝ ջուրերը ^բանուշցան: Հոն կանոն ու ^դդատավճիռ դրաւ անոնց, եւ հոն փորձարկեց զանոնք: **26** **Ան** ըսաւ. «Եթէ Տէրոջ՝ քու Աստուծոյդ խօսքը **ուշադրութեամբ** մտիկ ընես, ինչ որ անոր ^հառջեւ ուղիղ է՝ ընես, անոր պատուիրանները ունկնդրես եւ անոր բոլոր կանոնները պահես, այն հիւանդութիւններէն ո՛չ մէկը քու վրայ պիտի բերեմ, որ Եգիպտացիներուն վրայ բերի. որովհետեւ ե՛ս եմ Տէրը՝ որ քեզ կը բուժեմ»:

27 Յետոյ հասան Եղիմ, ուր տասներկու ջուրի աղբիւր ու եօթանասուն արմաւենի կար: Հո՛ն բանակեցան՝ ջուրերուն քով:

ՄԱՆԱՆԱՆ ԵՒ ԼՈՐԱՄԱՐԳԻՆԵՐԸ

16

Յետոյ Եղիմէ մեկնեցան, եւ Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը հասաւ Սինի անապատը, որ Եղիմի ու Սինայի մէջտեղն է, իրենց Եգիպտոսի երկրէն ելքին երկրորդ ամսուան տասներկուօրոյ օրը: **2** Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը՝ անապատին մէջ Մովսէսի եւ Ահարոնի դէմ տրտնջեց: **3** Իսրայէլի որդիները ըսին անոնց. «Երանի՛ թէ Տէրոջ ձեռքով մեռած ըլլայինք Եգիպտոսի մէջ, երբ միսի կաթսաներուն քով նստած էինք **ու** կուշտ հաց կ'ուտէինք. արդարեւ մեզ այս անապատը հանեցիք, որ այս ամբողջ համախմբումը անօթութենէ մեռցնէք»:

4 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ահա՛ ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղացնեմ, ու ժողովուրդը դուրս պիտի ելլէ եւ «օրէ օր» ժողվէ ամէնօրեայ քանակը, որպէսզի փորձարկեմ զայն թէ իմ օրէնքիս համաձայն պիտի ընթանայ՝ թէ ոչ: **5** Իսկ վեցերորդ օրը, երբ իրենց բերածը պատրաստեն, ան իրենց ամէն օրուան ժողվածին կրկինը պիտի ըլլայ»:

6 Մովսէս ու Ահարոն ըսին Իսրայէլի բոլոր որդիներուն. «Այս իրիկուն պիտի գիտնաք թէ Եհովա՛ն է ձեզ Եգիպտոսի երկրէն հանողը, **7** եւ առտուն պիտի տեսնէք Տէրոջ փառքը. որովհետեւ ինք լսեց Տէրոջ դէմ ձեր **ըրած** տրտունջը, ու մենք ո՞վ ենք՝ որ մեզի դէմ կը տրտնջէք»: **8** Մովսէս ըսաւ. «Երբ Տէրը ձեզի իրիկունը՝ ուտելու միս, եւ առտուն՝ կշտանալու չափ հաց տայ, **պիտի գիտնաք** թէ Տէրը լսած է իրեն դէմ ձեր ըրած տրտունջը: Մենք ո՞վ ենք. ձեր տրտունջը մեզի դէմ չէ, հապա՛ Տէրոջ դէմ»:
9 Մովսէս Ահարոնի ըսաւ. «Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին ըսէ. «Մօտեցէ՛ք Տէրոջ առջեւ, որովհետեւ ձեր տրտունջը լսեց□»:

10 Երբ Ահարոն Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին կը խօսէր, անոնք դէպի

^բ Այսինքն՝ դառնութիւն
^բ Եբր.՝ քաղցրացան
^դ Կամ՝ սովորութիւն
^հ Եբր.՝ աչքերուն
^ւ Եբր.՝ ամէն օր

անապատը նայեցան եւ ահա՛ Տէրոջ փառքը ամպին մէջ երեւցաւ: **11** Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. «Իսրայէլի որդիներուն տրտունջը լսեցի. խօսէ՛ անոնց եւ ըսէ՛. **12** “Իրիկուան դէմ միս պիտի ուտէք, ու առտուն՝ հացով պիտի կշտանաք, եւ պիտի գիտնաք թէ ե՛ս եմ եհովան՝ ձեր Աստուածը»:

13 Իրիկունը՝ լորամարգիներ բարձրացան ու բանակավայրը ծածկեցին, իսկ առտուն՝ ցօղ իջաւ բանակավայրին շուրջը: **14** Երբ իջած ցօղը վերցաւ, ահա՛ անապատին մակերեսին վրայ մանր, թեփածու բան մը կար գետինին վրայ, եղեամի պէս մանր: **15** Երբ Իսրայէլի որդիները տեսան՝ իրարու ըսին. «Բ՞՞նչ է այս՞», քանի որ ի՛նչ ըլլալը չէին գիտեր: Մովսէս անոնց ըսաւ. «Ա՛յս է այն հացը, որ Տէրը ձեզի տուաւ՝ ուտելու: **16** Ահա՛ւասիկ ինչ որ Տէրը պատուիրեց.– “Ժողվեցէ՛ք անկէ՛ իւրաքանչիւրդ իր կերածին չափ, **մարդ** գլուխ մէկական օմէր, ձեր անձերուն թիւին համեմատ. առէ՛ք իւրաքանչիւրդ իր վրանին մէջ եղողներուն համար»:

17 Իսրայէլի որդիներն ալ այնպէս ըրին եւ ժողվեցին, ոմանք՝ շատ, ոմանք՝ քիչ: **18** Երբ օմէրով կը չափէին, շատ ունեցողինը չաւելցաւ ու քիչ ունեցողինը չպակսեցաւ. իւրաքանչիւրը իր կերածին չափ ժողվեց: **19** Մովսէս անոնց ըսաւ. «Ո՛չ մէկը անկէ թող պահէ մինչեւ առտու»: **20** Սակայն Մովսէսի մտիկ չըրին. հապա ոմանք թողուցին անկէ մինչեւ առտու, բայց որդնոտեցաւ եւ գարշահոտ եղաւ, ու Մովսէս զայրացաւ անոնց դէմ: **21** Ամէն առտու կը ժողվէին անկէ, իւրաքանչիւրը իր կերածին չափ. երբ արելը տաքնար՝ կը հալէր:

22 Վեցերորդ օրը կրկնապատիկ հաց ժողվեցին, **այսինքն՝ ամէն** մէկուն համար երկու օմէր, եւ համայնքին բոլոր իշխանները եկան ու պատմեցին Մովսէսի: **23** Ան ալ իրենց ըսաւ. «Ահա՛ւասիկ Տէրոջ ըսածը. “Վաղը հանգիստի **օրն** է, Տէրոջ սուրբ Ծաբաթը: Ուրեմն ինչ որ պիտի եփէք՝ եփեցէ՛ք, ինչ որ պիտի խաշէք՝ խաշեցէ՛ք. իսկ ինչ որ կ’աւելնայ՝ պահեստի՛ դրէք ձեզի համար, որ մինչեւ առտու պահուի»:

24 Զայն մինչեւ առտու պահեստի դրին՝ ինչպէս Մովսէս պատուիրեր էր, եւ ո՛չ գարշահոտ եղաւ, ո՛չ ալ անոր մէջ որեւէ որդ եղաւ: **25** Մովսէս ըսաւ. « Ա՛յսօր կերէք զայն, որովհետեւ այսօր Տէրոջ Ծաբաթն է. այսօր դաշտին մէջ անկէ պիտի չգտնէք: **26** Վեց օր պիտի ժողվէք զայն. բայց եօթներորդ օրը՝ որ Ծաբաթ է՝ պիտի չըլլայ»:

27 Սակայն եօթներորդ օրը՝ ժողովուրդէն ոմանք դուրս ելան, որպէսզի ժողվեն. բայց չգտան: **28** Ուստի Տէրը Մովսէսի ըսաւ. «Մինչեւ ե՞րբ պիտի մերժէք պահել իմ պատուիրաններս ու օրէնքներս: **29** Նայեցէ՛ք, քանի որ Տէրը Ծաբաթը տուաւ ձեզի, հետեւաբար վեցերորդ օրը երկու օրուան հաց կու տայ ձեզի: Իւրաքանչիւրդ իր տեղը թող կենայ. ո՛չ մէկը իր տեղէն դուրս ելլէ եօթներորդ օրը»:

30 Ուստի ժողովուրդը հանգստացաւ եօթներորդ օրը: **31** Իսրայէլի որդիները անոր անունը մանանայ կոչեցին. ան գինձի սերմի պէս էր, ճերմակ, եւ անոր համը՝ մեղրով **շինուած** գաթայի պէս:

32 Մովսէս ըսաւ. «Ահա՛ւասիկ ինչ որ Տէրը պատուիրեց.– “Լեցուցէ՛ք անկէ օմէր մը՝ որ պահուի ձեր սերունդներուն համար. որպէսզի անոնք տեսնեն այն հացը՝ որ ձեզի կերցուցի անապատին մէջ, երբ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի»:

33 Մովսէս Ահարոնի ըսաւ. «Սափո՛ր մը առ, անոր մէջ դի՛ր օմէր մը լեցուն մանանայ, եւ զայն Տէրոջ առջեւ զետեղէ՛ ձեր սերունդներուն մէջ պահուելու համար»:

34 Ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց,

^բ Երբ.՝ Ման հու. (որմէ կու գայ մանանայ բառը)

^գ Երբ.՝ թողու

^դ Երբ.՝ տունը

^ե Երբ.՝ ման

այնպէս Ահարոն վկայութեան առջեւ գետնէն զայն՝ որպէսզի պահուի: **35** Իսրայէլի որդիները քառասուն տարի կերան մանանան, մինչեւ որ բնակուած երկիր հասան: Մանանան կերան, մինչեւ որ Զանանի երկրին՝ սահմանը հասան: **36** Օմէրը արդուին մէկ տասներորդն է:

ՋՈՒՐ՝ ԱՊԱՌԱԺԷՆ
(ԹԻԼ. 20. 1-13)

17

Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Սինի անապատէն մեկնեցաւ՝ իր իջեւաններուն համեմատ, Տէրոջ՝ ^ահրամանին համաձայն, ու Ռափիդիմի մէջ բանակեցաւ. բայց ժողովուրդին համար խմելու ջուր չկար: **2** Ուստի ժողովուրդը Մովսէսի հետ վիճեցաւ եւ ըսաւ. «Մեզի ջո՛ւր տուր՝ որ խմենք»: Մովսէս անոնց ըսաւ. «Ինչո՞ւ ինձի հետ կը վիճիք. ինչո՞ւ Տէրը կը փորձէք»: **3** Ժողովուրդը հոն ^բծարաւցաւ. ու ժողովուրդը Մովսէսի դէմ տրտնջեց՝ ըսելով. «Ինչո՞ւ մեզ Եգիպտոսէն բարձրացուցիր, որ մեզ եւ մեր որդիները ու մեր խաշիները ծարաւէն մեռցնես»:

4 Մովսէս Տէրոջ աղաղակեց. «Ի՞նչ ընեմ այս ժողովուրդին. ^գքիչ մնաց՝ որ գիս քարկոծեն»: **5** Տէրը Մովսէսի ըսաւ. «Ժողովուրդին առջե՛ւր անցիր, եւ ա՛ռ քեզի հետ Իսրայէլի երէցներէն. ձե՛ռքդ առ նաեւ քու գաւազանդ, որով գետը զարկիր, ու գնա՛: **6** Ահա՛ քու առջեւ պիտի կայնիմ հո՛ն՝ վէմին վրայ, Զորեբի մէջ: Զա՛րկ վէմին, եւ անկէ ջուր պիտի ելլէ ու ժողովուրդը պիտի խմէ»: Մովսէս այնպէս ըրաւ Իսրայէլի երէցներուն՝ առջեւ, **7** եւ **այդ** տեղին անունը ^եՄասսա ու Մերիպա՝ կոչեց. որովհետեւ Իսրայէլի որդիները հոն վիճեցան, եւ Տէրը փորձեցին՝ ըսելով. «Արդեօք Տէրը մեր մէ՞ջ է՝ թէ ոչ»:

ՊԱՏԵՐԱԶՍ ԱՍԱՂԷԿԻ ԴԷՄ

8 Այն ատեն Ամաղէկ եկաւ ու Ռափիդիմի մէջ Իսրայէլի դէմ պատերազմեցաւ: **9** Մովսէս Յեսուի ըսաւ. «Մեզի մարդի՛կ ընտրէ եւ ^գգնա՛ Ամաղէկի դէմ պատերազմելու. վաղը ես բլուրին գագաթը պիտի կայնիմ՝ Աստուծոյ գաւազանը ձեռքս **ունենայով**»: **10** Յեսու Մովսէսի ըսածին համաձայն ըրաւ, ու Ամաղէկի դէմ պատերազմեցաւ, իսկ Մովսէս, Ահարոն եւ Ովր բլուրին գագաթը բարձրացան: **11** Երբ Մովսէս իր ձեռքերը կը վերցնէր, Իսրայէլ կը յաղթէր. երբ իր ձեռքերը կ'իջեցնէր, Ամաղէկ կը յաղթէր: **12** Սակայն Մովսէսի ձեռքերը ծանրացան. ուստի քար մը առին եւ անոր տակ դրին, ու ինք անոր վրայ նստաւ. իսկ Ահարոն եւ Ովր, մէկը՝ մէկ կողմէն ու միւսը՝ միւս կողմէն, անոր ձեռքերը վեր

^գ Եբբ.՝ ծայրը
^ա Եբբ.՝ բերանին
^բ Եբբ.՝ ջուրի համար ծարաւցաւ
^գ Եբբ.՝ դարձեալ քիչ մը
^դ Եբբ.՝ աչքերուն
^ե Այսինքն՝ փորձութիւն ու վիճաբանութիւն
^զ Եբբ.՝ դո՛ւրս ելիր

բռնեցին, եւ մինչեւ արեւին մայր մտնելը՝ անոր ձեռքերը հաստատուն մնացին: **13** Հետեւաբար Յեսու սուրի բերանէ **անցընելով** յաղթահարեց Ամաղէկն ու անոր ժողովուրդը: **14** Տէրը Մովսէսի ըսաւ. «Ասիկա գրէ՛ յիշատակի համար գիրքի մը մէջ, եւ Յեսուի հիմացո՛ւր թէ Ամաղէկի յիշատակը երկինքի տակէն **բոլորովին** պիտի ջնջեմ»: **15** Մովսէս զոհասեղան մը կառուցանեց ու անոր անունը **Եհովա-Նիսի** կոչեց, **16** եւ ըսաւ. «**Քանի որ Տէրը երդում ըրաւ՝ ըսելով**՝. “Տէրը սերունդէ սերունդ պիտի պատերազմի Ամաղէկի դէմ»:

ՅՈԹՈՐ Կ՝ԱՅՅԵԼԷ ՄՈՎՍԷՍԻ

18

Մովսէսի աները, Մադիամի քուրմը՝ Յոթոր, լսեց ամէն ինչ որ Աստուած ըրեր էր Մովսէսի ու իր ժողովուրդին՝ Իսրայէլի, **եւ** թէ Տէրը Եգիպտոսէն հանեց Իսրայէլը: **2** Մովսէսի աները՝ Յոթոր, առաւ Մովսէսի կինը՝ Սեպփորան, անոր վերադառնալէն ետք, **3** եւ անոր երկու որդիները՝ որոնց մէկուն անունը Գերսամ էր – որովհետեւ ինք ըսեր էր. “Օտար երկրի մէջ պանդուխտ եմ –, **4** եւ միւսին անունը **Եղիազար** էր – որովհետեւ **ըսեր էր**. “Իմ հօրս Աստուածը իմ օգնականս էր, ու զիս Փարաւոնի սուրէն ազատեց –: **5** Մովսէսի աները՝ Յոթոր, անոր որդիներուն եւ անոր կնոջ հետ եկաւ Մովսէսի՝ դէպի անապատը, ուր ան բանակած էր Աստուծոյ լերան քով, **6** եւ իմացուց Մովսէսի. «Ես, քու աներդ՝ Յոթոր, քեզի կու գամ, նաեւ կինդ, եւ իր երկու որդիները իրեն հետ»: **7** Մովսէս դուրս ելաւ՝ իր աները դիմաւորելու, երկրպագեց, համբուրեց զայն, իրարու **Բորպիսութիւնը** հարցուցին, ու վրանը մտան: **8** Մովսէս իր աներոջ պատմեց ամէն ինչ որ Տէրը ըրեր էր Փարաւոնի ու Եգիպտացիներուն՝ Իսրայէլի համար, ճամբան իրենց պատահած ամբողջ տաժանքը, եւ Տէրոջ զիրենք ազատելը: **9** Ուստի Յոթոր ուրախացաւ ամբողջ բարիքին համար՝ որ Տէրը ըրեր էր Իսրայէլի, փրկելով զայն Եգիպտացիներուն ձեռքէն: **10** Եւ Յոթոր ըսաւ. «Օրհնեա՛լ ըլլայ Տէրը, որ ազատեց ձեզ Եգիպտացիներուն ձեռքէն ու Փարաւոնի ձեռքէն. որովհետեւ ազատեց **իր** ժողովուրդը Եգիպտացիներու ձեռքին տակէն: **11** Հիմա գիտեմ թէ Եհովան բոլոր աստուածներէն մեծ է. որովհետեւ ինչ բանով որ կը հպարտանային, անոնցմէ վեր **եղաւ**»: **12** Մովսէսի աները՝ Յոթոր՝ ողջակէզ ու զոհեր առաւ Աստուծոյ **մատուցանելու**, եւ Ահարոն ու Իսրայէլի բոլոր երէցները եկան՝ Մովսէսի աներոջ հետ **Գճաշելու** Աստուծոյ առջեւ:

ԴԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

- ¹ Եբբ.՝ ականջներուն մէջ դի՛ր
- ² Այսինքն՝ Տէրը իմ դրօշակս է
- ³ Եբբ.՝ Քանի որ Տէրը **իր** աթոռին վրայ ձեռք **վերցնելով երդում ըրաւ, կամ՝** Որովհետեւ ձեռք **վերցուց** Տէրոջ աթոռին դէմ,
- ⁴ Եբբ.՝ Եահը
- ⁵ Այսինքն՝ իմ Աստուածս օգնական
- ⁶ Եբբ.՝ խաղաղութիւնը
- ⁷ Եբբ.՝ հաց ուտելու

13 Հետեւեալ օրը՝ Մովսէս նստաւ ժողովուրդը դատելու, ու ժողովուրդը առտուրնէ մինչեւ իրիկուն Մովսէսի քով կայնեցաւ: 14 Երբ Մովսէսի աները տեսաւ ինչ որ ան կ'ընէր ժողովուրդին, ըսաւ. «Ի՞նչ է այս բանը՝ որ կ'ընես ժողովուրդին. ինչո՞ւ մինակ կը նստիս, եւ ամբողջ ժողովուրդը քու քովդ կը կայնի առտուրնէ մինչեւ իրիկուն»: 15 Մովսէս իր աներոջ ըսաւ. «Քանի որ ժողովուրդը ինծի՛ կու գայ՝ Աստուծոյ խորհուրդ հարցնելու: 16 Երբ անոնք խնդիր մը ունենան՝ ինծի կու գան, ու ե՛ս Դանոնց միջեւ կը դատեմ, եւ Աստուծոյ կանոններն ու օրէնքները **անոնց** կը գիտցնեմ»: 17 Մովսէսի աները իրեն ըսաւ. «Քու ըրածդ լաւ բան չէ: 18 Թէ՛ դուն պիտի մաշիս, թէ՛ ալ քեզի հետ եղող այս ժողովուրդը. որովհետեւ այս բանը շատ ծանր է քեզի համար, ու դուն առանձին չես կրնար ընել ասիկա: 19 Հիմա մտի՛կ ըրէ խօսքս. քեզի խորհուրդ պիտի տամ, եւ Աստուած քեզի հետ թող ըլլայ: Դո՛ւն գնա Աստուծոյ առջեւ՝ ժողովուրդին համար, որպէսզի խնդիրները դո՛ւն ներկայացնես Աստուծոյ: 20 Սորվեցո՛ւր անոնց կանոններն ու օրէնքները, գիտցո՛ւր անոնց իրենց ընթանալիք ճամբան եւ ընելիք գործը: 21 Բայց նաեւ ամբողջ ժողովուրդէն ընտրէ՛ կարող մարդիկ, Աստուծմէ վախցող, ճշմարտասէր, ազահուրթիւնը ատող մարդիկ, եւ նշանակէ՛ անոնց վրայ **իբր** հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ. 22 անո՛նք թող դատեն ժողովուրդը ամէն ատեն: Բոլոր մեծ խնդիրները քեզի թող ներկայացնեն, իսկ բոլոր պզտիկ խնդիրները՝ իրե՛նք թող դատեն. այսպէս քեզի օգնելով՝ քու վրայէդ **բեռը** կը թեթեւցնեն: 23 Եթէ այս բանը ընես, եւ Աստուած ալ քեզի **ասիկա** պատուիրէ, պիտի կարենաս դիմանալ, ու այս ամբողջ ժողովուրդն ալ խաղաղութեամբ իր տեղը պիտի հասնի»:

24 Մովսէս աներոջ խօսքը մտիկ ըրաւ, եւ անոր բոլոր ըսածները ըրաւ: 25 Մովսէս ամբողջ Իսրայէլէն կարող մարդիկ ընտրեց ու զանոնք ժողովուրդին վրայ կարգեց **իբր** գլխաւորներ, **այսինքն՝** հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ եւ տասնապետներ: 26 Անո՛նք կը դատէին ժողովուրդը ամէն ատեն. դժուար խնդիրները Մովսէսի կը ներկայացնէին, բայց բոլոր պզտիկ խնդիրները իրե՛նք կը դատէին: 27 Մովսէս իր աները ուղարկեց, եւ ան իր երկիրը գնաց:

ԻՍՐԱՅԷԼ ՍԻՆԱ ԼԵՐԱՆ ԶՈՎ

19

Երրորդ ամսուան մէջ՝ Իսրայէլի որդիներուն Եգիպտոսէն ելլելէն ետք, նոյն օրը Սինայի անապատը հասան: 2 Արդարեւ Ռափիդիմէ մեկնեցան ու Սինայի անապատը գացին, եւ անապատին մէջ բանակեցան: Իսրայէլ հոն՝ լերան դիմաց բանակեցաւ: 3 Մովսէս Աստուծոյ քով բարձրացաւ, ու Տէրը լեռնէն կանչեց զայն՝ ըսելով. «Սա՛պէս խօսէ Յակոբի տան, եւ հաղորդէ՛ Իսրայէլի որդիներուն. 4 “Դուք տեսաք ի՛նչ որ ըրի Եգիպտացիներուն, **ի՛նչպէս** ձեզ արծիւի թելերուն վրայ կրեցի ու քովս բերի: 5 Ուստի հիմա, եթէ **իրապէս** իմ խօսքս մտիկ ընէք եւ իմ ուխտս պահէք, դուք ինծի սեփական **ժողովուրդ** պիտի ըլլաք բոլոր ազգերուն մէջէն. որովհետեւ ամբողջ երկիրը իմս է: 6 Դուք ինծի քահանաներու թագաւորութիւն մը ու սուրբ ազգ մը պիտի ըլլաք: Ասո՛նք են Իսրայէլի որդիներուն ըսելիք խօսքերս□»:

7 Մովսէս եկաւ, ժողովուրդին երէցները կանչեց եւ անոնց ներկայացուց Տէրոջ իրեն

⁷ Եբր.՝ մարդուն եւ իր ընկերին

⁸ Եբր.՝ հետ կրելով

պատուիրած այս բոլոր խօսքերը: **8** Ամբողջ ժողովուրդը միաբերան պատասխանեց. «Տէրոջ բոլոր ըսածները պիտի ընենք»: Ու Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջ հաղորդեց:

9 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ահա՛ ես քեզի կու գամ թանձր ամպի մը մէջ, որպէսզի ժողովուրդը լսէ՛ երբ ես քեզի հետ խօսիմ, եւ միշտ քեզի հաւատայ»: Ու Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջ հաղորդեց: **10** Տէրը Մովսէսի ըսաւ. «Գնա՛ ժողովուրդին, սրբացո՛ւր զանոնք այսօր եւ վաղը, թող լուան իրենց հանդերձները ու **11** պատրաստ ըլլան երրորդ օրուան համար. քանի որ երրորդ օրը՝ Տէրը Սինա լեռան վրայ պիտի իջնէ ամբողջ ժողովուրդին աչքերուն առջեւ: **12** Իսկ դուն սահման դիր ժողովուրդին շուրջը եւ ըսէ՛. “Ջգուշացէ՛ք դուք ձեզի համար, որ լեռը չբարձրանաք կամ անոր ծայրին չդպչիք: Ո՛վ որ լեռան դպչի, **անշո՛ւշտ** պիտի մեռցուի: **13** Ո՛չ մէկ ձեռք անոր դպչի. որովհետեւ **դպչողը** անպատճառ պիտի քարկոծուի կամ նետով զարնուի. անասուն ըլլայ թէ մարդ՝ ողջ պիտի չմնայ: Երբ **՝** շեփորին ձայնը երկար հնչուի, անոնք լեռը թող բարձրանան»:

14 Մովսէս լեռնէն իջաւ ժողովուրդին քով. ժողովուրդը սրբացուց, անոնք իրենց հանդերձները լուացին, **15** եւ ժողովուրդին ըսաւ. «Երրորդ օրուան համար պատրաստ եղէք. **ձեր** կիներուն մի՛ մերձենաք»:

16 Երրորդ օրը՝ առտուն ^{Գորոտումներ} ու փայլատակումներ եղան. թանձր ամպ մը **կար** լեռան վրայ, նաեւ շատ զօրաւոր շեփորի ձայն մը. ուստի բանակավայրին մէջ **եղող** ամբողջ ժողովուրդը սարսուռաց: **17** Մովսէս բանակավայրէն դուրս հանեց ժողովուրդը՝ Աստուծոյ հանդիպելու, եւ անոնք լեռան ստորոտը կայնեցան: **18** Սինա լեռը ամբողջովին կը մխար, որովհետեւ Տէրը անոր վրայ կրակով իջաւ. անոր մուխը հնոցի մուխի պէս կը բարձրանար, ու ամբողջ լեռը չափազանց կը ցնցուէր: **19** Քանի շեփորին ձայնը շատ կը սաստկանար, Մովսէս խօսեցաւ եւ Աստուած ձայնով մը անոր պատասխանեց: **20** Տէրը Սինա լեռան վրայ՝ լեռան գագաթը իջաւ. Տէրը կանչեց Մովսէսը լեռան գագաթը, ու Մովսէս բարձրացաւ: **21** Տէրը Մովսէսի ըսաւ. «Իջի՛ր եւ պատուիրէ՛ ժողովուրդին, որ Տէրը տեսնելու համար սահմանէն չանցնին ու չկորսուին: **22** Տէրոջ մօտեցող քահանաներն ալ թող սրբացուին, որպէսզի Տէրը զանոնք չպատահէ»: **23** Մովսէս Տէրոջ ըսաւ. «ժողովուրդը չի կրնար բարձրանալ Սինա լեռը, որովհետեւ դուն մեզի պատուիրեցիր. “Սահման դիր լեռան ու սրբացո՛ւր զայն»: **24** Տէրը անոր ըսաւ. «Գնա՛, իջի՛ր, ապա բարձրացի՛ր Ահարոնի հետ. բայց քահանաներն ու ժողովուրդը Տէրոջ քով բարձրանալու համար սահմանէն չանցնին, որ զանոնք չպատահէ»: **25** Մովսէս ժողովուրդին քով իջաւ եւ **այդպէս** խօսեցաւ անոնց:

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

20

Աստուած սա՛ բոլոր խօսքերը հաղորդեց՝ ըսելով.–

2 «Ե՛ս եմ Եհովան՝ քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն՝ ստրկութեան տունէն՝ հանեցի:

3 Ինձմէ զատ ուրիշ աստուածներ մի՛ ունենար:

^u Եբր.՝ վերադարձուց

^p Եբր.՝ Յոբելեանի շեփորին

^q Եբր.՝ ձայներ

4 Ո՛չ մէկ անուշ շինէ դուն քեզի, ո՛չ ալ որեւէ կերպարանք բանի մը որ վերը՝ երկինքի մէջ է, վարը՝ երկրի վրայ է, կամ ջուրերուն մէջ է՝ երկրի տակ: 5 Անոնց մի՛ երկրպագեր ու գանոնք մի՛ պաշտեր, որովհետեւ ես՝ Քէրս, քու Աստուածդ, նախանձախնդիր Աստուած եմ. կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն – մինչեւ երրորդ ու չորրորդ սերունդը՝ անոնց՝ որ կ'ատեն զիս –, 6 եւ կարեկցութեամբ կը վարուիմ մինչեւ հազար սերունդ՝ անոնց հետ՝ որ կը սիրեն զիս ու կը պահեն իմ պատուիրաններս:

7 Քէրոջ՝ քու Աստուծոյդ անունը ընդունայն բերանդ մի՛ առներ. որովհետեւ Տէրը իր անունը ընդունայն բերանը առնողը անմեղ պիտի չսեպէ:

8 Յիշէ՛ Հանգստութեան օրը՝ զայն սրբացնելու համար: 9 Վե՛ց օր աշխատէ եւ ամբողջ գործը ըրէ. 10 բայց եօթներորդ օրը Տէրոջ՝ քու Աստուծոյդ Հանգստութեան օրն է. այդ օրը ո՛չ մէկ գործ ըրէ, ո՛չ դուն, ո՛չ որդիդ, ո՛չ աղջիկդ, ո՛չ ծառադ, ո՛չ աղախինդ, ո՛չ անասունդ, ո՛չ ալ յաղաքիդ մէջ եղող գաղթականդ: 11 Արդարեւ Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը եւ բոլոր անոր մէջ եղողները, ու եօթներորդ օրը հանգստացաւ. ուստի Տէրը օրհնեց Հանգստութեան օրը եւ սրբացուց զայն:

12 Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի օրերդ երկար ըլլան այն հողին վրայ՝ որ Տէրը, քու Աստուածդ, քեզի կու տայ:

13 Սպանութիւն մի՛ ըներ:

14 Ծնութիւն մի՛ ըներ:

15 Գողութիւն մի՛ ըներ:

16 Սուտ վկայութիւն մի՛ տար քու ընկերիդ դէմ:

17 Զու ընկերիդ տան մի՛ ցանկար. ընկերիդ կնոջ, կամ անոր ծառային, կամ աղախինին, կամ եզին, կամ իշուն, կամ ընկերիդ որեւէ մէկ բանին մի՛ ցանկար»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎԱԽԸ
(Բ. Օր. 5. 22-33)

18 Ամբողջ ժողովուրդը կը նկատէր Պորտումները, շանթերը, շեփորին ձայնը եւ մխացող լեռը: Երբ ժողովուրդը տեսաւ, ցնցուեցաւ ու հեռու կայնեցաւ: 19 Եւ ըսին Մովսէսի. «Դո՛ւն խօսէ մեզի հետ, ու մտիկ ընենք. բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որպէսզի չմեռնինք»: 20 Մովսէս ժողովուրդին ըսաւ. «Մի՛ վախնաք. որովհետեւ Աստուած եկաւ ձեզ փորձարկելու, որպէսզի անոր վախը ձեր առջեւ ըլլայ ու չմեղանչէք»: 21 Ժողովուրդը հեռու կայնեցաւ, իսկ Մովսէս մօտեցաւ այն մառախուղին՝ ուր Աստուած էր:

ՕՐԷՆՔՆԵՐ ԽՈՐԱՆԻՆ ՄԱՍԻՆ

^ա Եբր.՝ քանդակուած պատկեր
^բ Եբր.՝ Եհովան
^գ Եբր.՝ Եհովայի
^դ Եբր.՝ դռներուդ
^ե Կամ՝ Կեղծ
^զ Եբր.՝ ձայները

22 Տէրը Մովսէսի ըսաւ. «Սա՛ ըսէ Իսրայէլի որդիներուն. “Դուք տեսաք թէ ձեզի հետ երկինքէն խօսեցայ. 23 Ինծի հետ պաշտելու համար՝ արծաթէ աստուածներ մի՛ շինէք, ո՛չ ալ ոսկիէ աստուածներ շինեցէք ձեզի: 24 Ինծի հողէ՛ գոհասեղան մը շինէ, եւ անո՛ր վրայ գոհէ քու ողջակէզներդ ու խաղաղութեան գոհերդ, քու ոչխարներդ եւ արջառներդ. ամէն տեղ՝ ուր իմ անունս յիշել պիտի տամ, քեզի պիտի գամ ու քեզ պիտի օրհնեմ: 25 Եթէ ինծի քարէ գոհասեղան շինես, տաշուած քարէ մի՛ կառուցաներ. քանի որ եթէ անոր երկաթէ գործիք էդպցնես, զայն կը պղծես: 26 Եւ աստիճաններով մի՛ բարձրանար իմ գոհասեղանս, որպէսզի քու մերկութիւնդ չերեւնայ անոր վրայ»:

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՍՏՐՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ
(Բ. Օր. 15. 12-18)

21

«Ահա՛ւասիկ այն կանոնները՝ որ անոնց պիտի ներկայացնես: 2 Երբ եբրայեցի ծառայ մը գնես, ան վեց տարի ստրուկ պիտի ըլլայ, ու եօթներորդ տարին ազատ դուրս պիտի ելլէ, առանց վճարումի: 3 Եթէ մինակ մտաւ, մինակ պիտի ելլէ. եթէ կին ունէր, կինն ալ իրեն հետ պիտի ելլէ: 4 Եթէ իր տէ՛րը իրեն կին տուաւ եւ ան իրեն որդիներ կամ աղջիկներ ծնած է, կինն ու անոր զաւակները տիրոջ պիտի ըլլան, եւ ինք մինակ պիտի ելլէ: 5 Իսկ եթէ ծառան յայտարարէ. “Ես կը սիրեմ իմ տէրս, կինս ու որդիներս, չեմ ուզեր դուրս ելլել եւ ազատ ըլլալ, 6 իր տէրը դատաւորներուն պիտի ներկայացնէ զինք, ու դրան կամ դրանդիներուն մօտեցնէ. իր տէրը հերիւնով պիտի ծակէ իր ականջը, եւ ինք միշտ ստրուկ պիտի ըլլայ անոր:

7 Երբ մէկը իր աղջիկը ծախէ աղախին ըլլալու համար, ան դուրս պիտի չելլէ՝ ինչպէս ծառաները կ’ելլեն: 8 Եթէ ան “անհաճոյ ըլլայ իր տիրոջ՝ որ զայն իրեն նշաներ էր, զայն թող փրկել տայ. զայն օտար ժողովուրդի ծախելու իրաւասութիւն պիտի չունենայ, որովհետեւ անոր անհաւատարիմ եղաւ: 9 Եթէ զայն իր որդիին նշանած է, աղջիկներու կանոնին համաձայն պիտի վարուի անոր հետ: 10 Եթէ իրեն ուրիշ կին առնէ, անոր ուտելիքը, հանդերձն ու մերձաւորութիւնը պիտի չպակսեցնէ: 11 Եթէ անոր չընէ այս երեք բաները, ան առանց վճարումի դուրս պիտի ելլէ, առանց դրամի»:

ՕՐԷՆՔՆԵՐ ՎԱՅՐԱԳ ԳՈՐԾԵՐՈՒ ՄԱՍԻՆ

12 «Մարդու մը զարնելով զայն մեռցնողը՝ անշո՛ւշտ պիտի մեռցուի: 13 Իսկ եթէ դարան չմտաւ, հապա զայն Աստուած մատնեց իր ձեռքը, քեզի տեղ մը պիտի որոշեմ, որպէսզի ինք հոն փախչի: 14 Բայց եթէ մէկը յանդգնութեամբ իր ընկերին վրայ գայ եւ զայն խորամանկութեամբ սպաննէ, նոյնիսկ իմ գոհասեղանէ՛ս առ զայն՝ որպէսզի մեռնի: 15 Իր հայրը կամ մայրը ծեծողը՝ անշո՛ւշտ պիտի մեռցուի:

16 Մարդ գողցողը, զայն ծախած ըլլայ թէ ան իր ձեռքը գտնուի, անշո՛ւշտ պիտի մեռցուի:

17 Իր հայրը կամ մայրը անիծողը անշո՛ւշտ պիտի մեռցուի:

18 Երբ մարդիկ իրարու հետ կռուին ու մէկը միւսին քարով կամ բռունցքով զարնէ եւ ան չմեռնի, հապա անկողին պառկի. 19 եթէ դարձեալ ոտքի ելլէ ու իր ցուպով դուրսը

է Եբր.՝ երերցնես

ւ Եբր.՝ աչքերուն գէշ

քալէ, զարնողը անպարտ պիտի ըլլայ. միայն անոր Բկորսնցուցած ժամանակին **արժէքը**՝ պիտի հատուցանէ՝ մինչեւ որ բոլորովին բուժուի:

20 Երբ մէկը գաւազանով իր ստրուկին կամ աղախինին զարնէ եւ ան իր ձեռքին տակ մեռնի, **անշո՛ւշտ** անկէ վրէժ պիտի առնուի: **21** Բայց եթէ օր մը կամ երկու օր Գապրի, անկէ վրէժ պիտի չառնուի, քանի որ ան իր դրամն է:

22 Երբ մարդիկ կռուին, եւ **անոնցմէ մէկը** յղի կնոջ մը զարնելով՝ անոր ծնանիլ տայ, **թէեւ ուրիշ** փորձանք մը չըլլայ՝ ան **անշո՛ւշտ** պիտի կրէ **այդ** կնոջ ամուսինին իր վրայ դրած տուգանքը, դատաւորներուն **դատավճիռին** համաձայն հատուցանելով: **23** Բայց եթէ փորձանք մը ըլլայ, **՚կեանքի տեղ կեանք**՝ պիտի տաս, **24** աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռայ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք, **25** խարանի տեղ խարան, վերքի տեղ վերք, հարուածի տեղ հարուած:

26 Երբ մէկը իր ստրուկին աչքին կամ աղախինին աչքին զարնէ եւ կուրցնէ, զայն ազատ պիտի արձակէ անոր աչքին փոխարէն: **27** Ու եթէ իր ստրուկին ակռան կամ աղախինին ակռան փրցնէ, զայն ազատ պիտի արձակէ անոր ակռային փոխարէն»:

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

28 «Երբ եզ մը իր եղջիւրներով մարդու մը կամ կնոջ մը զարնէ ու մեռցնէ, եզը **անշո՛ւշտ** պիտի քարկոծուի եւ անոր միսը պիտի չուտուի. սակայն եզին տէրը անպարտ ըլլայ: **29** Իսկ եթէ եզը **առաջուրնէ** զարնող էր եւ անոր **տէրը տեղեակ**՝ էր, բայց զայն **ներս** պահած չէր, եթէ մարդ մը կամ կին մը մեռցուցեր է՝ եզը պիտի քարկոծուի, ու անոր տէրն ալ մեռցուի: **30** Եթէ փրկանք մը պարտադրուի իրեն, իր անձին փրկութեան համար՝ պիտի վճարէ ինչ որ իրեն պարտադրուի: **31** Որդիի մը թէ աղջիկի մը զարկած ըլլայ **եզը**, ա՛յս կանոնին համաձայն պիտի ըլլայ անոր: **32** Եթէ եզը ստրուկի մը կամ աղախինի մը զարնէ, **իր տէրը** երեսուն սիկղ արծաթ պիտի տայ անոնց տիրոջ, իսկ եզը պիտի քարկոծուի:

33 Երբ մէկը հոր մը բանայ, կամ մէկը հոր մը փորէ եւ չծածկէ, ու հոն եզ մը կամ էջ մը իյնայ, **34** հորին տէրը պիտի հատուցանէ **եւ** անոնց տիրոջ դրամ պիտի տայ. սակայն մեռածը իրը պիտի ըլլայ:

35 Երբ մէկուն եզը իր ընկերին եզին զարնէ ու մեռցնէ, ողջ եզը պիտի ծախեն եւ անոր դրամը բաժնեն, ու մեռածն ալ բաժնեն: **36** Իսկ եթէ գիտցուած էր թէ եզը առաջուրնէ զարնող է, բայց անոր տէրը զայն ներս պահած չէ, **անշո՛ւշտ** պիտի հատուցանէ՝ եզի փոխարէն եզ. սակայն մեռածը իրը պիտի ըլլայ»:

ՀԱՏՈՒՑՈՒՄԻ ՕՐԷՆՔՆԵՐ

22

«Երբ մէկը եզ մը կամ ոչխար մը գողնայ, ու մորթէ կամ ծախէ զայն, մէկ եզին

^բ Երբ.՝ նստիլը

^գ Երբ.՝ կենայ

^դ Երբ.՝ անձի տեղ անձ

^ե Երբ.՝ երէկուրնէ ու նախորդ օրուրնէ

^զ Երբ.՝ տիրոջ վկայուած

փոխարէն հինգ արջառ եւ մէկ ոչխարին փոխարէն չորս ոչխար պիտի հատուցանէ: **2** Երբ գող մը տուն ծակելու ատեն գտնուի, զարնուի ու մեռնի, անոր համար արիւնի վրէժխնդրութիւն պիտի չըլլայ: **3** Եթէ անոր վրայ արեւը ծագած էր, անոր համար արիւնի վրէժխնդրութիւն պիտի ըլլայ, որովհետեւ ան կրնար լման հատուցանել. եթէ ոչինչ ունենար, իր գողցածին համար կրնար ծախուիլ: **4** Եթէ գողցածը իր ձեռքը ողջ գտնուի, եզ ըլլայ թէ էշ կամ ոչխար, կրկինը պիտի հատուցանէ:

5 Երբ մէկը արտի մը կամ այգիի մը «վնաս տայ», արձակելով իր անասունը որ ուրիշի մը արտին մէջ արածի, իր արտին լաւագոյն բերքէն եւ այգիին լաւագոյն բերքէն պիտի հատուցանէ: **6** Եթէ կրակ քցայտէ, ցանկապատին փուշերուն փակչի, ու ցորենի խուրձերը, կամ հասուն ցորենը, եւ կամ արտը սպառին, կրակը վառողը այրածին արժէքը լման պիտի հատուցանէ:

7 Երբ մէկը իր ընկերին դրամ կամ առարկայ յանձնէ՝ պահելու համար, եւ այդ մարդուն տունէն գողցուի, եթէ գողը գտնուի՝ կրկինը թող հատուցանէ: **8** Եթէ գողը չգտնուի, տան տէրը պիտի ներկայանայ դատաւորներուն, ստուգելու համար թէ իր ձեռքը դպցուցած է իր ընկերին ստացուածքին: **9** Ամէն տեսակ յանցանքի համար, եզի, իշու, ոչխարի կամ հանդերձի համար, կամ ամէն տեսակ կորսուած բանի համար՝ որ մէկը կը հաստատէ թէ իրն է, երկու կողմերուն խնդիրը դատաւորներուն առջեւ պիտի տարուի. ո՛վ որ դատաւորները դատապարտեն, անիկա կրկինը պիտի հատուցանէ իր ընկերին:

10 Երբ մէկը իր ընկերին էշ մը, եզ մը, ոչխար մը, կամ որեւէ անասուն յանձնէ՝ պահելու համար, եւ ան մեռնի, կամ վիրաւորուի, կամ «թշնամին առնէ տանի» ու տեսնող մը չըլլայ, **11** երկուքին միջեւ Տէրոջ անունով երդումը պիտի հաստատէ թէ իր ընկերին ստացուածքին ձեռք դպցուցած չէ. անոր տէրը պիտի ընդունի երդումը, եւ ինք պիտի չհատուցանէ: **12** Բայց եթէ իրապէս իր քովէն գողցուած է, ինք անոր տիրոջ պիտի հատուցանէ: **13** Եթէ գազանէ բզքտուած է, թող բերէ զայն՝ իբր վկայութիւն, որ բզքտուածին արժէքը չհատուցանէ:

14 Երբ մէկը իր ընկերէն անասուն մը փոխ առնէ ու ան վիրաւորուի կամ մեռնի մինչ անոր տէրը անոր հետ չէ, ինք անշո՛ւշտ պիտի հատուցանէ: **15** Բայց եթէ անոր տէրը անոր հետ էր, պիտի չհատուցանէ: Եթէ վարձուած էր, վարձքին տեղ թող սեպուի»:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ

16 «Երբ մէկը չնշանուած կոյս մը հրապուրէ ու անոր հետ պառկի, անշո՛ւշտ անոր օժիտը տալով զայն իրեն կին պիտի ընէ: **17** Եթէ աղջիկին հայրը բոլորովին մերժէ տալ, ան կոյսերու օժիտին չափ դրամ պիտի տայ:

18 Կախարդուհին ողջ մի՛ պահեր:

19 Ո՛վ որ անասունի հետ պառկի, անշո՛ւշտ պիտի մեռցուի:

20 Միմիայն Տէրոջմէն զատ ուրիշ աստուածներու զոհողը բոլորովին պիտի անճիտուի:

21 Գաղթականը մի՛ կեղեքեր եւ զայն մի՛ տանջեր. որովհետեւ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ պանդուխտ էիք: **22** Ո՛չ մէկ այրի կամ որբ տառապեցուցէք: **23** Եթէ զանոնք

^u Եբր.՝ մէջ արածել տայ
^p Եբր.՝ դուրս ելլէ
^q Եբր.՝ գերութեան քշուի
^r Եբր.՝ կշռէ

տառապեցնէք որեւէ կերպով, եւ անոնք ինծի աղաղակեն, **անշո՛ւշտ** պիտի լսեմ անոնց աղաղակը. **24** իմ բարկութիւնս պիտի բորբոքի, ձեզ սուրով պիտի մեռցնեմ, ու ձեր կիները՝ այրի, ու ձեր որդիները՝ որբ պիտի ըլլան:

25 Երբ իմ ժողովուրդէս քու քովդ եղող դժբախտի մը դրամ փոխ տաս, վաշխառուի մը պէս մի՛ ըլլար անոր, ու վաշխ մի՛ դներ անոր վրայ: **26** Եթէ քու ընկերիդ հանդերձը գրաւ առնես, արելը մայր չմտած իրեն վերադարձուր. **27** որովհետեւ ա՛յդ է միայն անոր ծածկոցը, իր մորթին հանդերձն է ասիկա. ինչո՞վ պիտի պառկի: Եթէ ինծի աղաղակէ՛ մտիկ պիտի ընեմ, քանի որ ես ողորմած եմ:

28 Դատաւորներուն մի՛ հայհոյեր, եւ քու ժողովուրդիդ իշխանը մի՛ անիծեր:

29 Զու **արմտիքներուդ** ու հեղուկներուդ ^Եարդիւնքը մի՛ ուշացներ **ինծի մատուցանել**. քու որդիներուդ անդրանիկները ինծի պիտի տաս: **30** Զու եզիդ ու ոչխարիդ **ալ** սա՛պէս ըրէ.— Եօթը օր իր մօր հետ պիտի ըլլայ, **եւ** ութերորդ օրը զայն ինծի պիտի տաս:

31 Դուք ինծի սուրբ մարդիկ պիտի ըլլաք. դաշտին մէջ **գազաններէն** բզքտուածին միսը մի՛ ուտէք, այլ՝ շուներո՛ւն նետեցէք»:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

23

«Սուտ լուր մի՛ տանիր. ^Սյանցաւորին հետ ձեռքդ մի՛ դներ՝ Բանիրաւ վկայ ըլլալու համար: **2** Չարիք ընելու համար բազմութեան մի՛ հետեւիր, ու դատի մէջ մի՛ ^Վվկայեր՝ շատերուն կողմը խոտորելով, **իրաւունքը** ծռելու համար: **3** ^ԶՉքաւորին աչառութիւն մի՛ ըներ» իր դատին մէջ:

4 Երբ քու թշնամիիդ մոլորած եզին կամ իշուն հանդիպիս, **ա՛նպատճառ** իրեն վերադարձուր զայն: **5** Եթէ քեզ ատողին էշը բռնի տակ ^Իինկած տեսնես, հրաժարէ՛ զայն լքելէ. **ա՛նպատճառ** ազատէ **էշը** անոր հետ:

6 Զու աղքատիդ դատին մէջ անոր իրաւունքը մի՛ ծռեր. **7** Սուտ խօսքէն հեռո՛ւ կեցիր, եւ անմեղն ու արդարը մի՛ մեռցներ. որովհետեւ ես յանցաւորը պիտի չարդարացնեմ:

8 Կաշառք մի՛ ստանար. քանի որ կաշառքը աչքը բաց մարդիկը կը կուրցնէ եւ արդարներուն ^Խխօսքերը կ'եղծանէ: **9** Գաղթականը մի՛ տանջեր, որովհետեւ դուք գիտէք գաղթականին ^Սսիրտին **վիճակը**, որովհետեւ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ պանդուխտ էիք»:

^Ե Եբր.՝ լիութիւնը

^Ս Եբր.՝ ամբարիշտին

^Բ Եբր.՝ բռնութեան

^Վ Եբր.՝ պատասխաներ

^Զ Եբր.՝ Չքաւորէն մի՛ ակնածիր

^Ի Եբր.՝ պառկած

^Վ Կամ՝ դատերը

^Ե Եբր.՝ անձին

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԵՒ ՕՐԸ

10 «Վե՛ց տարի սերմանէ քու հողդ եւ անոր բերքը ժողվէ: 11 Բայց եօթներորդ տարին հանգի՛ստ ձգէ ու թո՛ղ զայն, որպէսզի քու ժողովուրդիդ աղքատները ուտեն, եւ անոնցմէ մնացածը դաշտին գազանները ուտեն. այգիիդ ու ձիթաստանիդ ալ նոյնպէս ըրէ: 12 Վե՛ց օր քու գործդ ըրէ, բայց եօթներորդ օրը հանգստացի՛ր, որպէսզի եզդ ու էջդ ալ հանգստանան, եւ աղախինիդ որդին ու գաղթականը շունչ առնեն: 13 Բոլոր ձեզի ըսածներուս ուշադի՛ր եղէք, եւ ուրիշ աստուածներու անունը մի՛ յիշատակէք, ո՛չ ալ քու բերանէդ թող լսուի»:

ԵՐԵՔ ՄԵԾ ՏՕՆԵՐԸ
(Ելք. 34. 18-26, Բ. Օր. 16. 1-17)

14 «Տարին երեք անգամ տօն կատարէ ինձի: 15 Կատարէ՛ Բաղարջակերքի տօնը. ինչպէս քեզի պատուիրեցի, եօթը օր բաղարջ կեր Ապիպ ամսուան մէջ՝ սահմանուած ատենին, որովհետեւ այդ ամսուան մէջ Եգիպտոսէն ելար. ո՛չ մէկը իմ առջեւ պարապ ձեռքով թող երեւնայ: 16 Կատարէ՛ նաեւ գործերուդ – արտին մէջ քու սերմանածիդ – երախայրիքին Հունձքի տօնը, ու Բերքի տօնը՝ տարուան վախճանը, երբ արտէն քու գործերուդ բերքը ժողվես: 17 Տարին երեք անգամ քու բոլոր արուներդ թող երեւնան Տէրոջ՝ Եհովայի առջեւ:

18 Իմ զոհիս արիւնը խմորեալ հացով մի՛ մատուցաներ, եւ իմ տօնիս ճարպը մինչեւ առտու թող շջմնայ: 19 Զու հողիդ առաջին երախայրիքը բեր՛ Տէրոջ՝ քու Աստուծոյդ տունը:

Ուլը իր մօր կաթին մէջ մի՛ եփեր»:

ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՌԻՍՈՒՅՈՒՄՆԵՐ

20 «Ահա՛ քու առջեւէդ հրեշտակ մը կը դրկեմ, որ ճամբան պահպանէ քեզ ու իմ պատրաստած տեղս տանի քեզ: 21 Ուշադի՛ր եղիր անոր եւ մտի՛կ ըրէ անոր խօսքը, մի՛ դառնացներ զայն. որովհետեւ ան ձեր յանցանքը պիտի չներէ, քանի որ իմ անունս անոր վրայ է: 22 Բայց եթէ ուշադրութեամբ անոր խօսքը մտիկ ընես ու իմ ամբողջ ըսածս գործադրես, քու թշնամիներուդ թշնամի պիտի ըլլամ եւ քու հակառակորդներուդ՝ հակառակորդ: 23 Արդարեւ իմ հրեշտակս քու առջեւէդ պիտի երթայ, ու քեզ Ամորհացիներուն, Բետացիներուն, Փերեզացիներուն, Բանանացիներուն, Խելացիներուն եւ Յեբուսացիներուն պիտի տանի, ու ե՛ս պիտի անհետացնեմ զանոնք: 24 Անոնց աստուածներուն մի՛ երկրպագեր ու զանոնք մի՛ պաշտեր, եւ անոնց արարքներուն համեմատ մի՛ վարուիր. հապա բոլո՛րովից տապալէ զանոնք, ու անոնց արձանները բոլո՛րովից կոտորէ: 25 Տէ՛րը՝ ձեր Աստուածը պաշտեցէք, եւ ինք պիտի օրհնէ քու հացդ ու ջուրդ: Ձեր մէջէն հիւանդութիւնը պիտի վերցնեմ: 26 Զու երկրիդ մէջ վիժող եւ ամուլ պիտի չըլլայ: Զու օրերուդ թիւը պիտի լրացնեմ: 27 Իմ երկիւղս քու առջեւէդ պիտի դրկեմ ու խուճապի պիտի մատնեմ այն ամբողջ ժողովուրդը՝ որուն քով կ'երթաս. քու բոլոր թշնամիներուդ Կռնակը քեզի պիտի դարձնեմ: 28 Եւ քու առջեւէդ իշամեղուներ պիտի դրկեմ, որպէսզի Խելացիները, Բանանացիներն ու Բետացիները քու առջեւէդ վնասեն: 29

² Եբր.՝ չգիշերէ

³ Եբր.՝ ծոծրակը

Անոնք քու առջեւէդ մէկ տարուան մէջ պիտի չվնասես, որ երկիրը չամայանայ եւ դաշտին գազանները քեզի դէմ չբազմանան: **30** Զանոնք քու առջեւէդ քիչ-քիչ պիտի վնասես, մինչեւ որ դուն ժբազմանաս ու երկիրը ժառանգես: **31** Զու սահմաններդ Կարմիր ծովէն մինչեւ Փղշտացիներուն ծովը, եւ անապատէն մինչեւ **Եփրատ** գետը պիտի դնես. որովհետեւ **այդ** երկրին բնակիչները քու ձեռքդ պիտի մատնեն, ու դուն զանոնք առջեւէդ պիտի վնասես: **32** Անոնց հետ եւ անոնց աստուածներուն հետ ուխտ մի՛ կնքեր: **33** Զու երկրիդ մէջ թող չբնակին, որպէսզի քեզի մեղանչել չտան ինծի դէմ. քանի որ եթէ անոնց աստուածները պաշտես, աստիկա անպատճառ քեզի որոգայթ պիտի ըլլայ»:

ՈՒՒՍԸ ԿԸ ԿՆԵՈՒԻ

24

Եւ Մովսէսի ըսաւ. «Բարձրացի՛ր Տէրոջ քով, դո՛ւն, նաեւ Ահարոն, Նադաբ ու Աբիուդ, եւ Իսրայէլի երէցներէն եօթանասուն հոգի, ու հեռուէ՛ն երկրպագեցէք: **2** Բայց միայն Մովսէս թող մօտենայ Տէրոջ, իսկ անոնք թող չմօտենան, ո՛չ ալ ժողովուրդը անոր հետ բարձրանայ»:

3 Մովսէս եկաւ եւ Տէրոջ բոլոր խօսքերն ու բոլոր կանոնները հաղորդեց ժողովուրդին: Ամբողջ ժողովուրդը միաձայն պատասխանեց. «Տէրոջ ըսած բոլոր խօսքերը պիտի գործադրենք»: **4** Մովսէս Տէրոջ բոլոր խօսքերը գրեց. ապա առտուն՝ կանուխ ելաւ, լերան ստորոտը զոհասեղան կառուցանեց, ու տասներկու արծան **կանգնեցուց՝** Իսրայէլի տասներկու տոհմերուն համեմատ: **5** Եւ Իսրայէլի որդիներէն երիտասարդներ ղրկեց, որոնք ողջակէզներ մատուցանեցին ու խաղաղութեան զոհերու համար զուարակներ զոհեցին Տէրոջ: **6** Մովսէս արիւնին կէսը առաւ եւ կոնքերու մէջ դրաւ, իսկ արիւնին **միւս** կէսը զոհասեղանին վրայ սրսկեց: **7** Յետոյ՝ ուխտին գիրքը առաւ ու ժողովուրդին «առջեւ կարդաց. անոնք ալ ըսին. «Տէրոջ ամբողջ ըսածը պիտի գործադրենք եւ **անոր** պիտի հնազանդինք»: **8** Մովսէս արիւնը առաւ, ժողովուրդին վրայ սրսկեց ու ըսաւ. «Ահա՛ այս բոլոր խօսքերուն համաձայն՝ Տէրոջ ձեզի հետ կնքած ուխտին արիւնը»:

9 Այն ատեն Մովսէս եւ Ահարոն, Նադաբ ու Աբիուդ եւ Իսրայէլի երէցներէն եօթանասուն հոգի բարձրացան, **10** ու Իսրայէլի Աստուածը տեսան. անոր ոտքերուն տակ կարծես շափիւղայէ սալայատակ մը **կար**, պայծառութեամբ՝ բուն երկինքին պէս: **11** Իսրայէլի որդիներէն ընտրեալներուն վրայ իր ձեռքը չդրաւ. Աստուած դիտեցին, կերան ու խմեցին:

ՄՈՎՍԷՍ ՍԻՆԱ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

12 Տէրը Մովսէսի ըսաւ. «Լե՛ռը բարձրացիր իմ քովս, ու հո՛ն կեցիր: Զեզի պիտի տամ քարէ տախտակները, եւ իմ գրած Օրէնքս ու պատուիրաններս, որպէսզի անոնց սորվեցնես»: **13** Մովսէս եւ անոր սպասարկուն՝ Յեսու կանգնեցան, ու Մովսէս Աստուծոյ լեռը բարձրացաւ **14** եւ երէցներուն ըսաւ. «Դուք այստեղ մեզի՛ սպասեցէք, մինչեւ որ ձեզի դառնանք: Ահա՛ Ահարոն ու Ովր ձեզի հետ են. եթէ բմէկը խնդիր մը ունենայ՝ անո՛նց թող ներկայանայ»:

^d Եբր.՝ աճիս
^u Եբր.՝ ականջներուն
^p Եբր.՝ տէր մը

15 Մովսէս լեռը բարձրացաւ, եւ ամպը պատեց լեռը: 16 Տէրոջ փառքը Սինա լեռան վրայ կեցաւ, ու ամպը պատեց զայն վեց օր: Եօթներորդ օրը Տէրը ամպին մէջէն կանչեց Մովսէսը: 17 Տէրոջ փառքին երեւոյթը լեռան գագաթին վրայ՝ սպառող կրակի պէս էր Իսրայէլի որդիներուն առջեւ: 18 Մովսէս ամպին մէջ մտաւ եւ լեռը բարձրացաւ. Մովսէս քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը կեցաւ:

ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ

(Ելք. 35. 4-9)

25

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն, որ ինծի բարձրացնելիք ընծայ բերեն. իմ բարձրացնելիք ընծաս առէ՛ք ամէն մարդէ՛ որ յօժար սիրտով կու տայ: 3 Ահա՛ւասիկ այն բարձրացնելիք ընծան՝ որ անոնցմէ պիտի առնէք.— ոսկի, արծաթ եւ պղինձ, 4 ^ակապուտակ, ^բծիրանի ու ^գկրկնակի կարմիր՝, բարակ քթան եւ այծի մազ, 5 կարմիր ներկուած խոյի մորթեր, իշղարի մորթեր ու սատիմի փայտեր, 6 լուսակալին համար իւղ, օծումի իւղին եւ անուշաբոյր խունկին համար բուրակէտ համեմներ, 7 եղնգնաքարեր ու ^դեփուտին եւ լանջապանակին վրայ ագուցանուելիք քարեր:

8 Ինծի սրբարան՝ մը թող շինեն, որպէսզի իրենց մէջ բնակիմ: 9 Բոլոր քեզի ցոյց տուածներուս պէս, խորանին կերպարին եւ անոր բոլոր առարկաներուն կերպարին համաձայն, ճիշդ այդպէս շինեցէք»:

ՈՒՒՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

(Ելք. 37. 1-9)

10 «Սատիմի փայտէ տապանա՛կ մը թող շինեն. անոր երկայնքը երկուքուկէս կանգուն ըլլայ, լայնքը՝ մէկուկէս կանգուն, եւ բարձրութիւնը՝ մէկուկէս կանգուն: 11 Զայն զո՛ւտ ոսկիով պատէ. ներսէ՛ն ու դուրսէ՛ն պատէ զայն, եւ անոր շուրջը ոսկի շրջանա՛կ մը շինէ: 12 Անոր համար չո՛րս ոսկի օղակ ձուլէ ու անոր չո՛րս անկիւնները դիր զանոնք, որպէսզի անոր մէկ կողմը երկու օղակ ըլլայ, ու միւս կողմը՝ երկու օղակ: 13 Սատիմի փայտէ ձողե՛ր շինէ ու զանոնք ոսկիով պատէ: 14 Ձողերը տապանակին կողմերը եղող օղակներուն անցուր, որպէսզի տապանակը անոնցմով կրուի: 15 Ձողերը տապանակին օղակներուն մէջ թող մնան. անկէ թող չհանուին: 16 Եւ տապանակին մէջ դի՛ր այն Վկայութիւնը՝ որ քեզի պիտի տամ:

17 Զուտ ոսկիէ ^աՔաւութի՛ւն մը շինէ. անոր երկայնքը երկուքուկէս կանգուն ըլլայ, եւ լայնքը՝ մէկուկէս կանգուն: 18 Ոսկիէ երկու՛ քերովբէ շինէ Քաւութեան երկու ծայրերուն վրայ. ^բկռածո՛յ շինէ զանոնք: 19 Մէկ քերովբէն՝ մէկ ծայրը շինէ, ու միւս քերովբէն՝ մի՛ւս

^ա Այսինքն՝ կապուտակով ներկուած կերպաս
^բ Այսինքն՝ ծիրանիով ներկուած կերպաս
^գ Այսինքն՝ կրկնակի կարմիրով ներկուած կերպաս
^դ Այսինքն՝ առանց թեզանիքի կարճ վերարկուի
^ե Կամ՝ կափարիչ
^զ Կամ՝ ճախարակեայ

ծայրը. քերովբէները Բաւութենէ՛ն առնուած շինեցէք, անոր երկու ծայրերը: **20** Բերովբէները իրենց թելերը վերէն թող տարածեն, իրենց թելերով Բաւութիւնը թող ծածկեն, եւ իրենց երեսները իրարու թող նային. քերովբէներուն երեսները դէպի Բաւութիւնը թող դարձած ըլլան: **21** Բաւութիւնը դի՛ր տապանակին վրայ, իսկ քեզի տալիք Վկայութիւնս՝ դի՛ր տապանակին մէջ: **22** Հո՛ն ես քեզի պիտի հանդիպիմ, ու Բաւութեան վրայէն, Վկայութեան տապանակին վրայ եղող երկու քերովբէներուն մէջտեղէն, պիտի խօսիմ քեզի հետ՝ Իսրայէլի որդիներուն համար քեզի տալիք բոլոր պատուիրաններուն մասին»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՏՈՒՅԱՆՈՒԱԾ ՀԱՅԻՆ ՍԵՂԱՆԸ

(Ելք. 37. 10-16)

23 «Սատիմի փայտէ սեղա՛ն մը շինէ. անոր երկայնքը երկու կանգուն ըլլայ, լայնքը՝ մէկ կանգուն, ու բարձրութիւնը՝ մէկուկէս կանգուն: **24** Զայն գո՛ւտ ոսկիով պատէ, եւ անոր շուրջը ոսկի շրջանա՛կ մը շինէ: **25** Անոր շուրջը չորս մատնաչափ եզերք մը շինէ, ու եզերքին շուրջը ոսկի շրջանա՛կ մը շինէ: **26** Անոր չո՛րս ոսկի օղակ շինէ, եւ անոր չորս անկիւնները՝ չո՛րս ոտքերուն քով դիր օղակները: **27** Օղակները եզերքին քով թող ըլլան, որպէսզի սեղանը կրելու ծառայող ձողերուն անցընելու էտեղեր ըլլան: **28** Ձողերը սատիմի՛ փայտէ շինէ ու զանոնք ոսկիով պատէ. սեղանը անոնցմով պիտի կրուի: **29** Անոր ափսէներ, խնկամաններ, բաժակներ ու թասեր շինէ, որպէսզի անոնցմով թափելիք նուէր ընծայուի՞. զանոնք գո՛ւտ ոսկիէ շինէ: **30** Սեղանին վրայ Քառաջադրութեան հացը շա՛րունակ իմ առջես դիր»:

ԱՇՏԱՆԱԿԸ

(Ելք. 37. 17-24)

31 «Զուտ ոսկիէ աշտանա՛կ մը շինէ. կռածոյ թող շինուի աշտանակը: Անոր բունը, ճիւղերը, սկահակները, գնդակներն ու ծաղիկները իրմէ առնուած թող ըլլան: **32** Անոր կողմերէն վեց ճիւղ թող ելլէ.– աշտանակին մէկ կողմէն՝ երեք ճիւղ, եւ աշտանակին միւս կողմէն՝ երեք ճիւղ: **33** Մէկ ճիւղին վրայ նշածել երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով, եւ միւս ճիւղին վրայ նշածել երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակէն ելած վեց ճիւղերը ա՛յսպէս թող ըլլան: **34** Աշտանակին վրայ չորս նշածել սկահակ ըլլայ՝ իրենց գնդակներով եւ ծաղիկներով. **35** աշտանակէն զ՛ելած վեց ճիւղերէն երկու ճիւղի տակ՝ իրմէ ելած մէկ գնդակ ըլլայ, ուրիշ երկու ճիւղի տակ՝ իրմէ ելած մէկ գնդակ, եւ ուրիշ երկու ճիւղի տակ՝ իրմէ ելած մէկ գնդակ: **36** Անոնց գնդակներն ու ճիւղերը իրմէ առնուած թող ըլլան. ամբողջը՝ մէկ կտորէ, զուտ ոսկիէ, կռածոյ ըլլայ: **37** Անոր եօ՛թը ճրագ շինէ, որ երբ ճրագները վառուին՝ անոր առջե՛նը լուսաւորեն: **38** Անոր ունելիները եւ անոր ճրագաբերանները զուտ ոսկիէ ըլլան: **39** Ան տաղանդ մը զուտ ոսկիով թող շինուի՝ այս բոլոր առարկաներով: **40** Նայէ՛, որ լեռը քեզի ցոյց տրուած կերպարին պէս շինես

^Է Երբ.՝ տուներ

^Ը Երբ.՝ թափուի

^Ք Կամ՝ ներկայութեան

^Ժ Երբ.՝ դուրս ելած

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԸ

(Ելք. 36. 8-38)

26

«Խորանը շինէ՛ տասը վարագոյրով՝ մանուած բարակ քթանէ, կապուտակէ, ծիրանիէ ու կրկնակի կարմիրէ. շինէ՛ զանոնք՝ հնարագիտութեամբ գործուած քերովբէներով **միասին**: 2 Մէկ վարագոյրին երկայնքը քսանութ կանգուն ըլլայ, եւ մէկ վարագոյրին լայնքը՝ չորս կանգուն: Բոլոր վարագոյրները մէկ չափ թող ունենան: 3 Հինգ վարագոյր իրարու թող կցուի, ու **միւս** հինգ վարագոյրն ալ իրարու թող կցուի: 4 Կցուածքին ծայրի մէկ վարագոյրին եզերքին վրայ կապուտակէ օղակներ շինէ. միւս կցուածքին ծայրի վարագոյրին եզերքն ալ նոյնպէս շինէ: 5 Մէկ վարագոյրին վրայ յիսուն օղակ շինէ, եւ միւս կցուածքին վրայ եղող վարագոյրին ծայրն ալ յիսուն օղակ շինէ. օղակները դէմ դիմաց թող ըլլան: 6 Յիսուն ոսկի ճարմանդ շինէ ու վարագոյրները ճարմանդներով կոճկէ, որպէսզի միակտուր խորան ըլլայ:

7 Այծի մազէ վարագոյրներ շինէ՛ որ վրան մը ըլլայ խորանին վրայ. տասնմէկ վարագոյր շինէ: 8 Մէկ վարագոյրին երկայնքը երեսուն կանգուն ըլլայ, եւ մէկ վարագոյրին լայնքը՝ չորս կանգուն. տասնմէկ վարագոյրները մէկ չափով ըլլան: 9 Հինգ վարագոյր զա՛տ կցէ, ու վեց վարագոյր՝ զատ. վեցերորդ վարագոյրը վրանին առջեւի կողմը երկուքի՛ ծալէ: 10 Կցուածքին ծայրը եղող մէկ վարագոյրին եզերքին վրայ յիսուն օղակ շինէ, եւ միւս կցուածքին **ծայրը** եղող վարագոյրին եզերքին վրայ՝ յիսուն օղակ: 11 Յիսուն պղինձէ ճարմանդ շինէ, ճարմանդները օղակներուն անցուր ու վրանը կոճկէ, որպէսզի միակտուր ըլլայ: 12 Վրանին վարագոյրներէն աւելորդ մնացածը, **այսինքն** վարագոյրին աւելցած կէսը, խորանին ետեւը «կախուած թող մնայ: 13 Վրանին վարագոյրներուն երկայնքէն աւելցածը, մէկ կանգուն՝ մէկ կողմէն, եւ մէկ կանգուն՝ միւս կողմէն, կախուած թող մնայ խորանին կողմերը, զայն մէկ կողմէն ու միւս կողմէն ծածկելու համար: 14 Վրանին համար ծա՛ծք մը շինէ՛ կարմիր ներկուած խոյի մորթերէ, եւ ծածք մըն ալ **անոր** վրայ՝ իշղարի մորթերէ:

15 Խորանին համար կանգնած **մնացող** տախտակներ շինէ՛ սատիմի փայտէ: 16 Մէկ տախտակին երկայնքը տասը կանգուն ըլլայ, ու մէկ տախտակին լայնքը՝ մէկուկէս կանգուն: 17 **Ամէն** մէկ տախտակ երկու ագուցիկ ծայր թող ունենայ՝ իրարու առընթեր. խորանին բոլոր տախտակները ա՛յսպէս ըրէ: 18 Ծիցէ՛ խորանին տախտակները.— դէպի հարաւ՝ հարաւային կողմը քսան տախտակ շինէ, 19 ու քսան տախտակներուն տակ՝ քառասուն արծաթէ խարիսխ: Մէկ տախտակի տակ՝ իր երկու ագուցիկ ծայրերը **անցընելու** համար երկու խարիսխ թող ըլլայ, եւ ուրիշ տախտակի մը տակ՝ իր երկու ագուցիկ ծայրերը **անցընելու** համար՝ երկու խարիսխ: 20 Խորանին միւս կողմին համար՝ հիւսիսային կողմը քսան տախտակ **շինէ**, 21 ու անոնց քառասուն արծաթէ խարիսխները.— մէկ տախտակի տակ՝ երկու խարիսխ, եւ ուրիշ տախտակի մը տակ՝ երկու խարիսխ: 22 Խորանին ետեւի կողմին համար՝ դէպի արեւմուտք վե՛ց տախտակ շինէ, 23 ու խորանին անկիւններուն համար՝ ետեւի կողմը երկու տախտակ շինէ: 24 Ներքեւէն կրկնակ թող ըլլան, իսկ գագաթէն օղակով մը միացած. երկուքն ալ ա՛յսպէս թող ըլլան, երկու անկիւններուն համար թող ըլլան: 25 **Այսպէս՝** անոնք ութ տախտակ պիտի ըլլան, ու անոնց արծաթէ խարիսխները՝ տասնվեց խարիսխ.— մէկ տախտակի տակ՝ երկու խարիսխ ըլլայ, եւ ուրիշ տախտակի մը տակ՝ երկու խարիսխ: 26 Սատիմի փայտէ նիգէ՛ր շինէ. խորանին մէկ

^u Եբր.՝ տարածուած

կողմի տախտակներուն համար՝ հինգ **նիգ** ըլլայ, **27** խորանին միւս կողմի տախտակներուն համար՝ հինգ **նիգ**, ու դէպի արեւմուտք՝ խորանին ետեւի կողմի տախտակներուն համար՝ հինգ **նիգ**: **28** Մէջտեղի **նիգը**, **այսինքն** տախտակներուն մէջտեղ **եղողը**, մէկ ծայրէն միւս ծայրը թող անցնի: **29** Տախտակները ոսկիով պատէ, եւ անոնց օղակները՝ **այսինքն** **նիգներուն անցընելու** տեղերը՝ ոսկիէ՝ շինէ: Նիգերն ալ ոսկիով պատէ:

30 Խորանը կանգնեցո՛ւր այն ձեւին համաձայն, որ լերան վրայ քեզի ցոյց տրուեցաւ:

31 Վարագո՛յր մը շինէ՝ կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ. հնարագիտութեամբ գործուած քերովբէներով **միասին** թող շինուի: **32** Զայն դի՛ր սատիմի **փայտէ** չորս ոսկեպատ սիւնի վրայ. անոնց ^բճանկերը ոսկիէ ըլլան, ու չորս արծաթէ խարիսխի վրայ **թող դրուի**: **33** Վարագոյրը ճարմանդներէ՛ն վար կախէ, եւ հո՛ն բեր՝ վարագոյրին ներսը՝ Վկայութեան տապանակը: Վարագոյրը ձեզի համար Սրբութիւնը պիտի գատէ Սրբութիւններու սրբութենէն: **34** Եւ Զաւութիւնը դի՛ր Վկայութեան տապանակին վրայ, Սրբութիւններու սրբութեան մէջ: **35** Վարագոյրէն դո՛ւրս դիր սեղանը, ու սեղանին դիմաց՝ խորանին հարաւային կողմը՝ աշտանակը. սեղանը դի՛ր հիւսիսային կողմը:

36 Վրանին մուտքին համար ասեղնագործ վարագո՛յր մը շինէ՝ կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ եւ մանուած բարակ քթանէ: **37** **Դրան** վարագոյրին համար սատիմի **փայտէ** հի՛նգ սիւն շինէ ու զանոնք ոսկիով պատէ. անոնց ճանկերը ոսկիէ ըլլան, եւ անոնց համար պղինձէ հի՛նգ խարիսխ ձուկէ»:

ԽՈՐԱՆԸ
(Ելք. 38. 1-7)

27

«Ջոհասեղանը սատիմի՛ փայտէ շինէ, երկայնքը՝ հինգ կանգուն, ու լայնքը՝ հինգ կանգուն. զոհասեղանը քառակուսի թող ըլլայ, եւ անոր բարձրութիւնը՝ երեք կանգուն ըլլայ: **2** Անոր եղջիւրները շինէ՛ անոր չորս անկիւններուն վրայ: Անոր եղջիւրները իրմէ **առնուած** թող ըլլան. զայն պղինձով պատէ: **3** Ծիւնէ՛ անոր անօթները՝ անոր մոխիրները հանելու համար, նաեւ անոր թիակները, կոնքերը, մսահաններն ու կրակարանները. անոր բոլոր գործիքները պղինձէ՛ շինէ: **4** Անոր պղինձէ ցանցակերպ կասկարայ՝ մը շինէ, ու ցանցին վրայ չո՛րս պղինձէ օղակ շինէ՝ անոր չորս անկիւններուն համար: **5** Զայն դի՛ր զոհասեղանին շրջապատին տակ՝ ներքելը, որպէսզի ցանցը գրեթէ զոհասեղանին մէջտեղը ըլլայ: **6** Ջոհասեղանին համար ձողեր՝ շինէ. ձողերը սատիմի փայտէ ըլլան, ու զանոնք պղինձով պատէ: **7** Անոր ձողերը օղակներուն թող անցուին, ու ձողերը զոհասեղանին երկու կողմերը թող ըլլան՝ զայն կրելու համար: **8** Զայն տախտակներով շինէ՝ մէջը դատարկ, լեռը քեզի ցոյց տրուածին պէս. **ճի՛շդ** այդպէս թող շինեն **զայն**»:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՎԱՐԱԳՈՅՐԸ
(Ելք. 38. 9-20)

9 «Խորանին սրահը շինէ.— դէպի հարաւ՝ հարաւային կողմին համար՝ սրահին վարագոյրները մանուած բարակ քթանէ՛ **շինէ**, հարիւր կանգուն երկայնութեամբ՝ մէկ կողմին համար, **10** անոր քսան սիւներով եւ անոնց քսան պղինձէ խարիսխներով. սիւներուն ճանկերն ու անոնց կապերը արծաթէ ըլլան: **11** Նոյնպէս հիւսիսային կողմին համար՝ **սրահին** երկայնքին՝ վարագոյրներ՝ **շինէ**, հարիւր **կանգուն** երկայնութեամբ, անոր

^բ **Կամ՝** խոյակները

քսան սիւներով եւ անոնց քսան պղինձէ խարիսխներով. սիւներուն ճանկերն ու անոնց կապերը արծաթէ ըլլան: **12** Արեւմտեան կողմը՝ սրահին լայնքին՝ վարագոյրներ **շինէ**, յիսուն կանգուն **երկայնութեամբ**, իրենց տասը սիւներով եւ անոնց տասը խարիսխներով: **13** Դէպի արեւելք՝ արեւելեան կողմը՝ սրահին լայնքը յիսուն կանգուն ըլլայ. **14** մէկ թելին համար վարագոյրներ **շինէ**, տասնհինգ կանգուն **երկայնութեամբ**, իրենց երեք սիւներով եւ անոնց երեք խարիսխներով, **15** նաեւ վարագոյրներ՝ միւս թելին համար, տասնհինգ **կանգուն երկայնութեամբ**, իրենց երեք սիւներով եւ անոնց երեք խարիսխներով: **16** Սրահին դրան համար ասեղնագործ վարագոյր մը **շինէ՝** կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ, քսան կանգուն **երկայնութեամբ**, իր չորս սիւներով եւ անոնց չորս խարիսխներով: **17** Սրահին շրջակայ բոլոր սիւները ըլլան արծաթէ կապերով, անոնց ճանկերը՝ արծաթէ, իսկ խարիսխները՝ պղինձէ: **18** Սրահին երկայնքը՝ հարիւր կանգուն **թող ըլլայ**, լայնքը՝ ամէն տեղ յիսուն, ու բարձրութիւնը՝ հինգ կանգուն. **վարագոյրները** մանուած բարակ քթանէ ըլլան, եւ իրենց խարիսխները՝ պղինձէ: **19** Խորանին բոլոր առարկաները՝ իր ամբողջ ծառայութեան համար, իր բոլոր ցիցերն ու սրահին բոլոր ցիցերը պղինձէ ըլլան»:

ՃՐԱԳԻՆ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ
(ՂԵՆ. 24. 1-4)

20 «Նաեւ պատուիրէ՛ Իսրայէլի որդիներուն, որ քեզի ^բծեծուած զուտ ձէթ բերեն՝ լուսակալին համար, որպէսզի ճրագը շարունակ վառի: **21** Ահարոն եւ անոր որդիները թող գետեղեն զայն՝ Հանդիպումի վրանին մէջ, Վկայութեան առջեւի վարագոյրէն դուրս, **որ վառի** Տէրոջ առջեւ՝ իրիկուրնէ մինչեւ առտու: **Ասիկա** յաւիտեանական կանոն **թող ըլլայ** իրենց սերունդներուն մէջ՝ Իսրայէլի որդիներուն համար»:

ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ
(Ելք. 39. 1-7)

28

«Իսրայէլի որդիներուն մէջէն մօտեցո՛ւր քեզի եղբայրդ՝ Ահարոնը, եւ իրեն հետ իր որդիները, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն. Ահարոնը, ու Նադաբը, Աբիուդը, Եղիազարը եւ Իթամարը՝ Ահարոնի որդիները: **2** Սուրբ հագուստներ **շինէ** եղբօրդ՝ Ահարոնի, փառքի ու շքեղութեան համար: **3** Ըսէ՛ բոլոր ^ամիտքով իմաստուններուն՝ որոնք ես իմաստութեան հոգիով լեցուցի, որ Ահարոնի հագուստներ **շինեն**՝ զայն սրբացնելու համար, որպէսզի ինծի քահանայութիւն կատարէ: **4** Ահա՛ւասիկ անոնց **շինելիք** հագուստները.— լանջապանակ, եփուտ, պարեգօտ, նկարազարդ պատմուճան, խոյր ու գօտի: Սուրբ հագուստներ թող **շինեն** եղբօրդ՝ Ահարոնի եւ անոր որդիներուն, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն:

5 Անոնք թող առնեն ոսկին, կապուտակը, ծիրանին, կրկնակի կարմիրն ու բարակ քթանը, **6** եւ թող **շինեն** հնարագիտութեամբ գործուած եփուտը՝ ոսկի **թելէ**, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիր ու մանուած բարակ քթանէ: **7** Անոր երկու ծայրերը՝ անոր

^ա Եբր.՝ ուսին

^բ Այսինքն՝ ծեծուած ձիթապտուղէն ինքնիրմէ հոսած

^ա Եբր.՝ սիրտով

կցուած երկու ուսնոց թող ունենան, որպէսզի **Եփուսը** միանայ: **8** Եփուսին ժապաւէնը՝ որ անոր վրայ է, անոր շինուածքին պէս՝ նոյն **Գիւթերէն** թող ըլլայ.— ոսկիէ, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ: **9** Երկո՛ւ եղնգնաքար առ, եւ անոնց վրայ Իսրայէլի որդիներուն անունները փորագրէ: **10** Անոնց անուններէն վեցը՝ մէկ քարին վրայ **փորագրէ՛**, եւ մնացեալ վեց անունները՝ միւս քարին վրայ, անոնց ծնունդին համեմատ: **11** Այդ երկու քարերուն վրայ փորագրէ՛ Իսրայէլի որդիներուն անունները՝ ականագործի բանուածքով, **Այսինքն** կնիք փորագրելու պէս. զանոնք ագուցանէ՛ ոսկի ճանակներու մէջ: **12** Երկու քարերը դի՛ր եփուսին ուսնոցներուն վրայ, որպէսզի Իսրայէլի որդիներուն յիշատակի քարեր ըլլան: Ահարոն անոնց անունները իր երկու ուսերուն վրայ պիտի կրէ Տէրոջ առջեւ՝ յիշատակի համար: **13** Նաեւ ոսկիէ ճանակներ շինէ, **14** ու զուտ ոսկիէ երկու ոլորուած շղթայ. զանոնք հիւսէ՛, եւ հիւսուած շղթաները ճանակներո՛ւն անցուր»:

ԼԱՆՋԱՊԱՆԱԿԸ

(Ելք. 39. 8-21)

15 «Դատաստանի լանջապանակը հնարագիտութեամբ գործուած թող ըլլայ: Ծիւնէ՛ զայն եփուսին շինուածքին պէս՝ ոսկիէ, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ եւ մանուած բարակ քթանէ: **16** Զառակուսի թող ըլլայ ու երկուքի ծալուի: Անոր երկայնքը մէկ թիգ ըլլայ, եւ անոր լայնքը՝ մէկ թիգ: **17** Անոր վրայ Բագուցանուելիք քարեր՝ ագուցանէ՛, չորս կարգ քար, **սա՛** կարգով.— առաջին կարգը՝ սարդիոն, տպագիոն ու զմրուխտ. **18** երկրորդ կարգը՝ կարկեհան, շափիւղայ եւ ադամանդ. **19** երրորդ կարգը՝ արեւաքար, ակատ ու մեղեսիկ. **20** չորրորդ կարգը՝ ոսկեքար, եղնգնաքար եւ յասպիս: Ասոնք ոսկիի մէջ թող ագուցանուին, իրենց ագուցուածքներուն մէջ: **21** Զարերը Իսրայէլի որդիներուն անուններուն պէս՝ տասներկու **հատ** թող ըլլան, անոնց անուններուն համեմատ. կնիքի **ճման** թող փորագրուին, իւրաքանչիւրը իր անունով՝ տասներկու տոհմերուն համեմատ: **22** Լանջապանակին վրայ՝ զուտ ոսկիէ ոլորուած եւ հիւսուած շղթաներ շինէ: **23** Լանջապանակին վրայ երկո՛ւ ոսկի օղակ շինէ, ու երկու օղակները դի՛ր լանջապանակին երկու ծայրերուն վրայ: **24** Երկու հիւսուած ոսկի շղթաները անցո՛ւր լանջապանակին ծայրերը եղող երկու օղակներուն: **25** Երկու հիւսուած շղթաներուն **միւս** երկու ծայրերը անցո՛ւր **այդ** երկու ճանակներուն, եւ **զանոնք** եփուսին ուսնոցներո՛ւն վրայ դիր, անոր առջեւ կողմը: **26** Երկո՛ւ ոսկի օղակ ալ շինէ, ու զանոնք լանջապանակին ներսի կողմէն՝ եփուսին կցուած եզերքին երկո՛ւ ծայրերը դիր: **27** Եւ **ուրի՛ջ** երկու ոսկի օղակ շինէ, ու զանոնք եփուսին երկո՛ւ ուսնոցներուն ներքեւէն անցուր, անոր առջեւի կցուածքին մօտ, եփուսին ժապաւէնին վրայէն: **28** Լանջապանակը իր օղակներէն թող կապեն եփուսին օղակներուն՝ կապուտակէ **շինուած** երիզով, որպէսզի եփուսին ժապաւէնին վրայ ըլլայ եւ լանջապանակը եփուսին վրայէն չզատուի: **29** Երբ Ահարոն սրբարանը մտնէ, իր սիրտին վրայ թող կրէ Իսրայէլի որդիներուն անունները՝ դատաստանի լանջապանակին վրայ **փորագրուած**, Տէրոջ առջեւ մշտատեւ յիշատակի համար: **30** Դատաստանի լանջապանակին մէջ դի՛ր Գուրիմը եւ Թումիմը: Անոնք Ահարոնի սիրտին վրայ թող ըլլան, երբ ան Տէրոջ առջեւ երթայ: Ահարոն Տէրոջ առջեւ

^բ Եբբ.՝ քարերու ագուցուածքներ

^գ Այսինքն՝ լոյսեր (յայտնութիւն)

^դ Այսինքն՝ կատարելութիւններ (ճշմարտութիւն)

շարունակ իր սիրտին վրայ թող կրէ Իսրայէլի որդիներուն դատաստանը»:

ՈՒՐԻՇ ԶԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

(Ելք. 39. 22-31)

31 «Եփուտին պարեգօտը ամբողջովին կապուտակէ շինէ: **32** Անոր մէջտեղը գլուխ **անցընելու** բացուածք մը թող ըլլայ. բացուածքին շուրջը՝ զրահի բացուածքին պէս հիւսուած եզերք մը թող ունենայ, որպէսզի չպատռի: **33** Իսկ անոր քղանցքին վրայ կապուտակէ, ծիրանիէ եւ կրկնակի կարմիրէ նուռեր՝ շինէ – անոր քղանցքին վրայ՝ բոլորածեւ **շարուած** –, եւ անոնց մէջտեղը ոսկի զանգակներ **դիր՝** բոլորածեւ. **34** պարեգօտին քղանցքին վրայ ոսկի զանգակ մը ու նուռ մը, ոսկի զանգակ մը ու նուռ մը ըլլան՝ բոլորածեւ **շարուած**: **35** Պաշտօն կատարելու համար ան Ահարոնի վրայ թող ըլլայ, եւ Տէրոջ առջեւ սրբարանը մտած ու ելած ատեն անոր ձայնը թող լսուի, որպէսզի չմեռնի:

36 Զուտ ոսկիէ թիթեղ մը շինէ, եւ անոր վրայ կնիք փորագրելու պէս փորագրէ՝^Կ «Տէրոջ սրբութիւնը^Կ»: **37** Նաեւ կապուտակէ երիզ մը անցուր անոր, որպէսզի խոյրին վրայ դրուի. խոյրին վրայ՝ անոր առջեւի կողմը թող ըլլայ: **38** Ան Ահարոնի ճակատին վրայ թող ըլլայ, որպէսզի Ահարոն կրէ սուրբ բաներուն անօրէնութիւնը, երբ Իսրայէլի որդիները զանոնք սրբացնեն՝ իրենց բոլոր սուրբ պարգեւները **մատուցանած** ատեն: Շարունակ իր ճակատին վրայ թող ըլլայ, որպէսզի անոնք ընդունելի ըլլան Տէրոջ առջեւ:

39 Պատմունճանը բարակ քթանէ նկարակերտէ, ու խոյրը բարակ քթանէ շինէ. գօտին ասեղնագործ շինէ:

40 Ահարոնի որդիներուն պատմունճաններ շինէ, անոնց գօտիներ շինէ, եւ փառքի ու շքեղութեան համար անոնց ապարօշներ շինէ: **41** Զանոնք հագցո՛ւր քու եղբօրդ՝ Ահարոնի, եւ իրեն հետ՝ իր որդիներուն: Զանոնք օծէ՛, «զանոնք նուիրէ՛» ու զանոնք սրբացո՛ւր, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն: **42** Անոնց կտակէ անդրավարտիքներ շինէ՝ **իրենց** մարմինին մերկութիւնը ծածկելու համար. **իրենց** մէջքէն մինչեւ ազդրերը թող հասնին: **43** Անոնք Ահարոնի եւ անոր որդիներուն վրայ թող ըլլան՝ երբ Հանդիպումի վրանը մտնեն, կամ երբ զոհասեղանին մօտենան սրբարանին մէջ՝ պաշտօն կատարելու համար, որ անօրէնութիւն չկրեն ու չմեռնին: **Ասիկա** յաւիտենական կանոն մը **թող ըլլայ** իրեն եւ իրմէ ետք իր զարմին»:

ԱՀԱՐՈՆԻ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

(Ղեւ. 8. 1-36)

29

«Ահա՛ւասիկ ինչ որ անոնց պիտի ընես՝ զանոնք սրբացնելու համար, որպէսզի ինծի քահանայ ըլլան.– արջառներէն զուարակ մը ու երկո՛ւ անարատ խոյ առ, **2** նաեւ բաղարջ, իւղով շաղուած անխմոր կարկանդակներ ու իւղով օծուած անխմոր լաւաշներ. ասոնք շինէ՛ ցորենի՝ «նաշիհով, **3** զանոնք դիր՝ սակառի մը մէջ, եւ զանոնք մատուցանէ՛ սակառին մէջ՝ զուարակին ու երկու խոյերուն հետ: **4** Ահարոնը եւ անոր որդիները մօտեցո՛ւր Հանդիպումի վրանին մուտքին, ու զանոնք ջուրով լուա: **5** Հագուստները ա՛ռ եւ

^Կ Այսինքն՝ Տէրոջ սրբացած

^Գ Երբ.՝ անոնց ձեռքը լեցուր

^Մ Այսինքն՝ նուրբ ալիւրով

Ահարոնի հագցո՛ւր պատմուճանը, եփուտին պարեգօտը, եփուտն ու լանջապանակը, եւ զայն փաթթե՛ք եփուտին ժապաւէնով: **6** Խոյրը դի՛ր անոր գլուխը, ու սուրբ պսակը դի՛ր խոյրին վրայ: **7** Յետոյ օծումի ի՛նչը առ, եւ անոր գլուխին վրայ թափելով՝ օծե՛ք զայն: **8** Անոր որդիները մօտեցո՛ւր, անոնց պատմուճաններ հագցուր, **9** անոնց մէջքը գօտի՛ կապէ, – **այսինքն՝** Ահարոնի եւ անոր որդիներուն, – անոնց գլուխը ապարօշնէ՛ր փաթթէ, ու քահանայութիւնը իրե՛նց թող ըլլայ յաւիտեանական կանոնով: Ա՛յսպէս նուիրէ Ահարոնը եւ անոր որդիները:

10 Զուարակը մօտեցո՛ւր Հանդիպումի վրանին առջեւ, եւ Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը թող դնեն զուարակին գլուխին վրայ: **11** Տէրոջ առջեւ մորթէ՛ զուարակը՝ Հանդիպումի վրանին մուտքը: **12** Զուարակին արիւնէն ա՛ռ եւ մատովդ դի՛ր զոհասեղանին եղջիրներուն վրայ. իսկ մնացած ամբողջ արիւնը թափէ՛ զոհասեղանին յատակը: **13** Փորոտիքը ծածկող ամբողջ ճարպը, լեարդին վրայ եղող թաղանթը, երկու երիկամունքը եւ անոնց վրայ եղող ճարպը ա՛ռ ու զոհասեղանին վրայ այրէ՛: **14** Բայց զուարակին միսը, անոր մորթը եւ անոր թրիքը կրակով այրէ բանակավայրէն դուրս. ասիկա մեղքի պատարագ մըն է:

15 Խոյերէն մէ՛կը առ, ու Ահարոն եւ անոր որդիները իրենց ձեռքերը թող դնեն խոյին գլուխին վրայ: **16** Այդ խոյը մորթէ՛, անոր արիւնը ա՛ռ ու սրսկէ՛ զոհասեղանին վրայ՝ բոլորածեւ: **17** Խոյը կտորներո՛ւ բաժնէ. անոր փորոտիքը եւ թաթերը լուա՛, ու զանոնք դի՛ր անոր կտորներուն եւ գլուխին վրայ: **18** Յետոյ ամբողջ խոյը այրէ զոհասեղանին վրայ. ասիկա ողջակէզ է Տէրոջ. անուշահոտ պատարագ մըն է Տէրոջ:

19 Մի՛ւս խոյն ալ առ, ու Ահարոն եւ անոր որդիները իրենց ձեռքերը թող դնեն խոյին գլուխին վրայ: **20** Խոյը մորթէ՛, անոր արիւնէն ա՛ռ, ու դի՛ր Ահարոնի աջ ականջին բլթակին վրայ, անոր որդիներուն աջ ականջին բլթակին վրայ, անոնց աջ ձեռքին բթամատին վրայ, եւ աջ ոտքին բթամատին վրայ. իսկ մնացած արիւնը սրսկէ՛ զոհասեղանին վրայ՝ բոլորածեւ: **21** Յետոյ զոհասեղանին վրայ եղող արիւնէն ու օծումի իւղէն ա՛ռ, եւ սրսկէ՛ Ահարոնի վրայ ու անոր հագուստներուն վրայ, եւ անոր հետ՝ իր որդիներուն վրայ ու որդիներուն հագուստներուն վրայ: Ա՛յսպէս պիտի սրբանան ինք եւ իր հագուստները, ու իրեն հետ իր որդիները եւ որդիներուն հագուստները: **22** Ապա խոյէն ա՛ռ ճարպն ու դմակը, փորոտիքը ծածկող ճարպը, լեարդին վրայի թաղանթը, երկու երիկամունքը, անոնց վրայ եղող ճարպը եւ աջ զիստը, – որովհետեւ ասիկա նուիրումի խոյն է, – **23** նաեւ ա՛ռ Տէրոջ առջեւ եղող բաղարջի սակառէն՝ մէկ հացի նկանակ, մէկ իւղով հացի կարկանդակ եւ մէկ լաւաշ, **24** ու բոլորը դիր Ահարոնի ափը եւ անոր որդիներուն ափը, ու զանոնք Տէրոջ առջեւ մատուցանէ՛ իբր երերցնելիք ընծայ: **25** Յետոյ անոնց ձեռքէն ա՛ռ զանոնք, եւ զոհասեղանին վրայ – ողջակէզին վրայ – այրէ՛ Տէրոջ առջեւ՝ անոյշ հոտի համար. ասիկա պատարագ մըն է Տէրոջ: **26** Ահարոնի նուիրումին համար պատրաստուած խոյին երբո՛ւժը առ, ու զայն Տէրոջ առջեւ մատուցանէ՛ իբր երերցնելիք ընծայ. ասիկա քո՛ւ բաժինդ թող ըլլայ: **27** Ահարոնի համար եւ անոր որդիներուն համար եղող նուիրումի խոյին երերցնելիք երբո՛ւժն ու բարձրացնելիք զի՛ստը սրբացուր: **28** Ասիկա յաւիտեանական կանոնով Ահարոնի եւ անոր որդիներուն թող ըլլայ՝ Իսրայէլի որդիներուն կողմէն, որովհետեւ ասիկա բարձրացնելիք ընծայ է: Ան բարձրացնելիք ընծայ թող ըլլայ Իսրայէլի որդիներէն – իրենց խաղաղութեան զոհերէն – իրենց բարձրացնելիք ընծան թող ըլլայ Տէրոջ:

29 Ահարոնի սուրբ հագուստները՝ իրմէ ետք իր որդիներուն թող ըլլան, որպէսզի անոնցմով օծուին ու անոնցմով նուիրուին: **30** Իր որդիներէն ա՛ն որ իր տեղը քահանայ է՝

^բ Եբր.՝ երերցո՛ւր

թող հագնի զանոնք եօթը օր, երբ Հանդիպումի վրանը մտնէ՝ սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար: **31** Նուիրումի խոյը առ ու անոր միսը սո՛ւրբ տեղ մը եփէ: **32** Ահարոն եւ իր որդիները թող ուտեն խոյին միսն ու սակառին մէջի հացը՝ Հանդիպումի վրանին մուտքը: **33** Անոնք թող ուտեն այն բաները՝ որոնցմով քաւութիւն եղաւ զիրենք նուիրելու եւ սրբացնելու համար: Օտար մը **անոնցմէ** թող չուտէ, որովհետեւ անոնք սուրբ են: **34** Եթէ նուիրումի միսէն ու հացէն մինչեւ առտու մնայ, այդ մնացածը կրակո՛վ այրէ. ան թող չուտուի, քանի որ սուրբ է:

35 Ահարոնի եւ անոր որդիներուն ա՛յսպէս ըրէ, բոլոր քեզի պատուիրածներուս համաձայն: Եօ՛թը օրուան մէջ կատարէ անոնց նուիրումը: **36** Օրը մէ՛կ զուարակ իբր մեղքի պատարագ ընծայէ՝ քաւութեան համար. զոհասեղանը մեղքէ՛ մաքրէ երբ անոր համար քաւութիւն ընես, եւ զայն օծէ՛ սրբացնելու համար: **37** Զոհասեղանին համար եօ՛թը օր քաւութիւն ըրէ, ու զայն սրբացո՛ւր. զոհասեղանը ամենասուրբ պիտի ըլլայ. ինչ որ զոհասեղանին դպչի՝ սուրբ պիտի ըլլայ»:

ԱՄԷՆՕՐԵԱՅ ԸՆԾԱՆԵՐ
(Թիւ. 28. 1-8)

38 «Զոհասեղանին վրայ ընծայելիք **զոհո՞ղ** սա՛ է.– շարունակ՝ ամէն օր՝ մէկ տարեկան երկու գառ. **39** մէկ գառը առտո՛ւն ընծայէ, իսկ միւս գառը իրիկուա՛ն դէմ ընծայէ: **40** Նաեւ մէկ գառին հետ **ընծայէ՛** մէկ տասներորդ ⁹նաշիհ՝ քառորդ հիմէն ծեծուած իւղով շաղուած, ու թափելիք նուէրին համար՝ քառորդ հիմէն գինի: **41** Միւս գառը իրիկուա՛ն դէմ ընծայէ. զայն ընծայէ՛ առտուան **հացի** ընծային պէս եւ անոր թափելիք նուէրին պէս, իբր անուշահոտ պատարագ Տէրոջ: **42** Ասիկա ձեր սերունդներուն մէջ մշտատեւ ողջակէզ ըլլայ Տէրոջ առջեւ՝ Հանդիպումի վրանին դրան **քով**, ուր ձեզի պիտի հանդիպիմ՝ քեզի հետ խօսելու համար: **43** Հոն Իսրայէլի որդիներուն պիտի հանդիպիմ, ու **վրանը** իմ փառքովս պիտի սրբացուի: **44** Հանդիպումի վրանը եւ զոհասեղանը պիտի սրբացնեմ: Ահարոնն ու անոր որդիներն ալ պիտի սրբացնեմ, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն: **45** Իսրայէլի որդիներուն մէջտեղը պիտի բնակիմ եւ անոնց Աստուած պիտի ըլլամ, **46** ու պիտի գիտնան թէ ե՛ս եմ Տէրը՝ իրենց Աստուածը, որ Եգիպտոսի երկրէն հանեցի զիրենք՝ իրենց մէջտեղը բնակելու համար: Ե՛ս եմ Տէրը՝ իրենց Աստուածը»:

ԽՈՒՆԿ ԾԻԵԼՈՒ ԶՈՂԱՍԵՂԱՆԸ
(Ելք. 37. 25-28)

30

«Խունկ ծխելու զոհասեղա՛ն մը շինէ. սատիմի՛ փայտէ շինէ զայն: **2** Անոր երկայնքը կանգուն մը **ըլլայ**, անոր լայնքը՝ կանգուն մը – քառակուսի թող ըլլայ –, եւ անոր բարձրութիւնը՝ երկու կանգուն: Անոր եղջիրները իրմէ **առնուած** ըլլան: **3** Զայն զո՛ւտ ոսկիով պատէ – անոր վրան, անոր կողմերը՝ բոլորաձեւ, ու անոր եղջիրները –, եւ անոր շուրջը ոսկի շրջանա՛կ մը շինէ: **4** Անոր երկո՛ւ ոսկի օղակ շինէ՝ անոր շրջանակին տակ, անոր երկու անկիւնները. անոր երկո՛ւ կողմերուն վրայ շինէ, որպէսզի անոնք **անցընելու** տեղեր ըլլան ձողերուն՝ զայն ասոնցմով կրելու համար: **5** Ձողերը սատիմի՛ փայտէ շինէ եւ զանոնք ոսկիով պատէ: **6** Զայն դի՛ր Վկայութեան տապանակին քով եղող վարագոյրին առջեւ – Վկայութեան վրայ եղող քաւութեան առջեւ –, ուր ես քեզի պիտի հանդիպիմ: **7** Ահարոն անոր վրայ անուշաբոյր խունկ թող ծխէ. ամէն առտու, երբ ճրագները յարդարէ՛

⁹ Այսինքն՝ նուրբ ալիւր

խունկ թող ծխէ: **8** Նաեւ իրիկուան դէմ, երբ ճրագները վառէ՝ Ահարոն **խունկ** թող ծխէ, որ Տէրոջ առջեւ մշտատեւ խունկ ըլլայ ձեր սերունդներուն մէջ: **9** Անոր վրայ օտար խունկ, կամ ողջակէզ, կամ **հացի** ընծայ մի՛ մատուցանէք. անոր վրայ թափելիք նուէր մի՛ ընծայէք: **10** Ահարոն տարին մէ՛կ անգամ անոր եղջիրներուն վրայ թող քաւութիւն ընէ. քաւութիւններուն մեղքի պատարագին արիւնով անոր վրայ թող քաւութիւն ընէ տարին մէ՛կ անգամ, ձեր սերունդներուն մէջ: Ասիկա ամենասուրբ է Տէրոջ»:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՏՈՒՐԸ

11 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **12** «Երբ Իսրայէլի որդիներուն գումարը առնես՝ իրենց թուարկումին համեմատ, անոնցմէ իւրաքանչիւրը իր անձին փրկանքը թող տայ Տէրոջ՝ զանոնք թուարկած ատենդ, որպէսզի անոնց մէջ հարուած չըլլայ երբ զանոնք թուարկես: **13** Անոնք սա՛ թող տան. ամէն **մէկը** որ կ'անցնի թուարկումէն՝ սրբարանի սիկդին համեմատ կէս սիկդ **արծաթ թող տայ**: Մէկ սիկդը քսան կերատ է. Տէրոջ բարձրացնելիք ընծան կէս սիկդ ըլլայ: **14** Ամէն քսան տարեկանէն վեր եղող՝ որ կ'անցնի թուարկումէն, բարձրացնելիք ընծայ թող տայ Տէրոջ: **15** Երբ ձեր անձերուն քաւութիւն ընելու համար Տէրոջ բարձրացնելիք ընծան տաք՝ կէս սիկդէն ո՛չ աւելի թող տայ հարուստը, ո՛չ ալ պակաս՝ չքաւորը: **16** Իսրայէլի որդիներէն ա՛ն քաւութեան արծաթը եւ Քյատկացո՛ւր Հանդիպումի վրանին ծառայութեան, որպէսզի Տէրոջ առջեւ յիշատակ ըլլայ Իսրայէլի որդիներուն՝ ձեր անձերուն քաւութիւն ընելու համար»:

ՊՂԻՆՉԷ ԱԻԱԶԱՆԸ

17 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **18** «Նաեւ պղինձէ աւազան մը շինէ լուացումի համար. անոր խարիսխն ալ պղինձէ ըլլայ: Հանդիպումի վրանին եւ զոհասեղանին մէջտե՛ղ դիր գայն, ու ջո՛ւր լեցուր անոր մէջ: **19** Ահարոն եւ իր որդիները անոր մէջ թող լուան իրենց ձեռքերն ու ոտքերը: **20** Երբ անոնք Հանդիպումի վրանը մտնեն, կամ երբ զոհասեղանին մօտենան՝ պաշտօն կատարելու եւ Տէրոջ պատարագ մատուցանելու համար, ջուրով թող լուացուին՝ որպէսզի չմեռնին: **21** Ուստի իրենց ձեռքերն ու ոտքերը թող լուան, որպէսզի չմեռնին. ասիկա իրենց յաւիտենական կանոն թող ըլլայ, թէ՛ իրեն եւ թէ՛ իր զարմին՝ իրենց սերունդներուն մէջ»:

ՕԾՈՒՄԻՆ ԻԻՂԸ

22 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **23** «Ա՛ն քեզի «պատուական բուրաւէտ **համեմներ**,– զուտ զմուռս՝ հինգ հարիւր **սիկդ**, անոր կէսին չափ՝ **այսինքն** երկու հարիւր յիսուն **սիկդ** բուրաւէտ կինամոն, երկու հարիւր յիսուն **սիկդ** բուրաւէտ խունկեղէզ, **24** հինգ հարիւր **սիկդ** կասիա՝ սրբարանի սիկդին համեմատ, ու մէկ հիմէն ձէթ,– **25** եւ սուրբ օծումի ի՛նչ շինէ զանոնք, ՚բուրագործի արհեստին համեմատ բաղադրուած օծանելիք մը:

^ա Եբբ.՝ թափէք

^բ Եբբ.՝ տո՛ւր

^գ Եբբ.՝ գլխաւոր

^դ Այսինքն՝ բոյրեր շինողի

Ան սուրբ օծումի իւղ թող ըլլայ, **26** ու անո՛վ օծէ Հանդիպումի վրանը, Վկայութեան տապանակը, **27** սեղանը եւ անոր բոլոր առարկաները, աշտանակն ու անոր առարկաները, խունկին զոհասեղանը, **28** ողջակէզին զոհասեղանը՝ իր բոլոր առարկաներուն հետ, աւազանն ու անոր խարիսխը: **29** Սրբացո՛ւր զանոնք, որպէսզի ամենասուրբ ըլլան. ինչ որ անոնց դպչի՝ սուրբ պիտի ըլլայ: **30** Ահարոն եւ իր որդիները օծէ՛ ու զանոնք սրբացո՛ւր, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն: **31** Իսրայէլի որդիներուն ըսէ՛. “Ասիկա ինծի օծումի սուրբ իւղ թող ըլլայ ձեր սերունդներուն մէջ: **32** Զայն մարդու մարմինի վրայ մի՛ թափէք, եւ անոր չափերուն համեմատ անոր նմանը մի՛ շինէք: Ասիկա սուրբ է, ու ձեզի սուրբ պիտի ըլլայ: **33** Ո՛վ որ անոր նմանը բաղադրէ, կամ ո՛վ որ անկէ օտարի վրայ դնէ, իր ժողովուրդէն պիտի բնաջնջուի»:

ԽՈՒՆԿԸ

34 Տէրը Մովսէսի ըսաւ. «Ա՛ն քեզի բոյրեր, **այսինքն՝** ստաշխ, եղունգ եւ քաղբան, **այս** բոյրերը՝ զուտ կնդրուկով. ամէն մէկէն՝ հաւասար **ծանրութեամբ** թող ըլլայ: **35** Անոնցմով խո՛ւնկ շինէ՛ բուրագործի արհեստին համեմատ բաղադրուած, ‘իրարու խառնուած’, մաքուր ու սուրբ: **36** Անկէ ծեծէ՛ **քիչ մը՝** շատ մանր, եւ դի՛ր Հանդիպումի վրանին մէջ՝ Վկայութեան առջեւ, ուր ես քեզի պիտի հանդիպիմ: Ան ձեզի ամենասուրբ պիտի ըլլայ: **37** Այդ շինելիք խունկիդ չափերուն համեմատ դուք ձեզի համար մի՛ շինէք. ան քեզի սուրբ պիտի ըլլայ, Տէրոջ **նուիրուած՝** **38** Ո՛վ որ հոտոտելու համար անոր նմանը շինէ, իր ժողովուրդէն պիտի բնաջնջուի»:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ
(Ելք. 35. 30-36. 1)

31

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. **2** «Ահա՛ Յուդայի տոհմէն Ովրի որդիին Ուրիի որդին՝ Բեսելիէլը **իր** անունով կանչեցի, **3** եւ Աստուծոյ Հոգիով լեցուցի զայն՝ իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ, ամէն **տեսակ** գործի համար, **4** որպէսզի հնարքներ “մտածելով՝ ոսկի, արծաթ եւ պղինձ գործածէ, **5** ագուցանելու համար քարեր տաշէ, փայտ քանդակէ, ու ամէն տեսակ գործ կատարէ: **6** Եւ ահա՛ Դանի տոհմէն Աքիսամայի որդին՝ Ոհողիաբը տուի անոր հետ: Ամէն իմաստունի սիրտին մէջ իմաստութիւն դրի, որպէսզի բոլոր քեզի պատուիրածներս ընեն.– **7** Հանդիպումի վրանը, Վկայութեան տապանակն ու անոր վրայ եղող Զաւութիւնը, վրանին բոլոր առարկաները, **8** սեղանը եւ անոր առարկաները, մաքուր աշտանակը՝ իր բոլոր առարկաներով, խունկին զոհասեղանը **9** ողջակէզին զոհասեղանը՝ իր բոլոր առարկաներով, աւազանը եւ անոր խարիսխը, **10** պաշտամունքին հագուստները, Ահարոն քահանային սուրբ հագուստներն ու անոր որդիներուն հագուստները՝ քահանայութիւն կատարելու համար, **11** եւ օծումի իւղն ու սրբարանին համար անուշաբոյր խունկը: Թող ընեն՝ բոլոր քեզի պատուիրածներուս համաձայն»:

² **Այսինքն՝** Ահարոնի զարմէն չեղողի
⁴ **Կամ՝** աղուած
⁶ **Եբր.**՝ հնարելով

12 Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 13 «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն եւ ըսէ՛. “Անշո՛ւշտ իմ Շաբաթներս պիտի պահէք. որովհետեւ այս նշան մըն է իմ ու ձեր միջեւ՝ ձեր սերունդներուն մէջ, որպէսզի գիտնաք թէ ձեզ սրբացնող Տէրը ե՛ս եմ: 14 Ուստի Շաբաթը պահեցէ՛ք, քանի որ ան ձեզի սուրբ է. ո՛վ որ զայն պղծէ՝ **անշո՛ւշտ** պիտի մեռցուի. արդարեւ ո՛վ որ այդ օրը գործ մը ընէ, այդ անձը իր ժողովուրդին մէջէն պիտի բնաջնջուի: 15 Վե՛ց օր գործ ըրէք, բայց եօթներորդ օրը՝ հանգիստի Շաբաթը՝ սուրբ պիտի ըլլայ Տէրոջ: Ո՛վ որ Շաբաթ օրը գործ մը ընէ, **անշո՛ւշտ** պիտի մեռցուի: 16 Իսրայէլի որդիները Շաբաթը թող պահեն, որպէսզի իրենց սերունդներուն մէջ Շաբաթը կատարեն **իբր** յաւիտենական ուխտ: 17 Ան յաւիտենական նշան մըն է իմ եւ Իսրայէլի որդիներուն միջեւ. քանի որ Տէրը վեց օրուան մէջ ^բստեղծեց երկինքն ու երկիրը, եւ եօթներորդ օրը դադարեցաւ ու ^գհանգստացաւ□»:

18 Երբ Սինա լեռան վրայ Մովսէսի հետ խօսիլը աւարտեց, Վկայութեան երկու տախտակները տուաւ անոր, քարէ տախտակներ՝ Աստուծոյ մատով գրուած:

ՈՍԿԻ ՀՈՐԹԸ
(Բ. Օր. 9. 6-29)

32

Երբ ժողովուրդը տեսաւ թէ Մովսէս կը յամենար լեռնէն իջնելու, ժողովուրդը Ահարոնի քով համախմբուեցաւ եւ անոր ըսաւ. «Կանգնէ՛, մեզի աստուածներ՝ շինէ՛ որ մեր առջեւէն երթան, քանի որ այդ Մովսէսը՝ մեզ Եգիպտոսի երկրէն բարձրացնող մարդը՝ չենք գիտեր թէ ի՛նչ եղաւ անոր»: 2 Ահարոն անոնց ըսաւ. «Ձեր կիներուն, որդիներուն եւ աղջիկներուն ականջները եղած ոսկի օղերը ^բհանեցէ՛ք ու ինծի՛ բերէք»: 3 Ամբողջ ժողովուրդը՝ իրենց ականջները եղած օղերը հանեցին եւ Ահարոնի բերին: 4 Ան ալ առաւ անոնց ձեռքէն, ^բդուրով մը ձեւաւորեց ու ձուլածոյ հորթ մը շինեց: Եւ ըսին. «Ո՛վ Իսրայէլ, ասո՛նք են քու աստուածներդ՝ որ քեզ Եգիպտոսի երկրէն բարձրացուցին»: 5 Երբ Ահարոն տեսաւ **ասիկա**, անոր առջեւ զոհասեղան մը կառուցանեց, ու Ահարոն գոչել տուաւ. «Վաղը տօն է Տէրոջ»: 6 Հետեւեալ օրը՝ կանուխ ելան, եւ ողջակէզներ մատուցանեցին ու խաղաղութեան **զոհեր** բերին. ապա ժողովուրդը նստաւ ուտելու եւ խմելու, ու կանգնեցան զբօսնելու:

7 Տէրը Մովսէսի ըսաւ. «Գնա՛, իջի՛ր, որովհետեւ ապականեցաւ քու ժողովուրդդ՝ որ Եգիպտոսի երկրէն բարձրացուցիր. 8 անոնք շուտով շեղեցան այն ճամբայէն՝ որ իրենց պատուիրեցի: Իրենց ձուլածոյ հորթ շինեցին եւ անոր երկրպագեցին. անոր զոհեցին ու ըսին. “Ո՛վ Իսրայէլ, ասո՛նք են քու աստուածներդ՝ որ քեզ Եգիպտոսի երկրէն բարձրացուցին□»: 9 Եւ Տէրը Մովսէսի ըսաւ. «Ես այս ժողովուրդը տեսայ, եւ ահա՛ ան խստապարանոց ժողովուրդ մըն է. 10 ուստի հիմա ձգէ՛ զիս՝ որ իմ բարկութիւնս անոնց դէմ բորբոքի եւ սպառեմ զանոնք, ու քեզ մեծ ազգ մը պիտի ընեմ»: 11 Բայց Մովսէս

^բ Եբր.՝ ըրաւ

^գ Եբր.՝ շունչ առաւ

^ւ Եբր.՝ կոտորեցէ՛ք

^բ Կամ՝ քանդակագործի գրիչով

Տէրոջ՝ իր Աստուծոյն Գաղատեցաւ՝ ըսելով. «Ո՛վ Տէր, ինչո՞ւ քու բարկութիւնդ բորբոքի քու ժողովուրդիդ դէմ, որ Եգիպտոսի երկրէն հանեցիր մեծ կարողութեամբ եւ ուժեղ ձեռքով: **12** Ինչո՞ւ Եգիպտացիները խօսին ու ըսեն. “Չարիքի համար հանեց զանոնք, որպէսզի լեռներուն մէջ մեռցնէ եւ զանոնք երկրագունդի մակերեսէն սպառէ»: Կասեցո՛ւր քու բորբոքած բարկութիւնդ ու հրաժարէ՛ այս չարիքը քու ժողովուրդիդ **վրայ բերելէ: 13** Յիշէ՛ քու ծառաներդ՝ Աբրահամը, Իսահակը եւ Իսրայէլը, որոնց քու անձո՛վդ երդում ըրիր, ու ըսիր անոնց. “Ձեր զարմը երկինքի աստղերուն պէս պիտի բազմացնեմ, եւ այս ամբողջ երկիրը՝ որուն մասին խօսեցայ, ձեր զարմին պիտի տամ ու **զայն** պիտի ժառանգեն յաւիտենապէս»: **14** Եւ Տէրը հրաժարեցաւ այն չարիքէն, որուն համար ըսեր էր թէ իր ժողովուրդին պիտի ընէ:

15 Մովսէս դարձաւ ու լեռնէն իջաւ: Վկայութեան երկու տախտակները իր ձեռքն էին: Տախտակներուն երկու կողմերը գրուած էին. անոնք **թէ՛** մէկ կողմէն եւ **թէ՛** միւս կողմէն գրուած էին: **16** Տախտակները Աստուծոյ գործն էին. գրութիւնը Աստուծոյ գրութիւնն էր, տախտակներուն վրայ փորագրուած: **17** Երբ Յեսու գոռացող ժողովուրդին գոչիւնը լսեց, Մովսէսի ըսաւ. «Բանակավայրին մէջ պատերազմի աղմուկ կայ»: **18** Իսկ ան ըսաւ. «Ասիկա “յաղթողներու կանչի” աղմուկ չէ, ո՛չ ալ “յաղթուածներու կանչի” աղմուկ է. հապա ես Գիւլգուլի ձայն կը լսեմ»: **19** Երբ Մովսէս՝ բանակավայրին մօտենալով՝ տեսաւ հորթն ու պարերը, բարկութիւնը բորբոքեցաւ, տախտակները իր ձեռքէն նետեց եւ լերան ստորոտը կոտորեց զանոնք: **20** Յետոյ անոնց շինած հորթը առաւ, կրակով այրեց, մանր աղաց, ապա ջուրին վրայ ցանեց եւ Իսրայէլի որդիներուն խմցուց:

21 Մովսէս Ահարոնի ըսաւ. «Այս ժողովուրդը ի՞նչ ըրաւ քեզի, որ անոր վրայ **այսչափ** մեծ մեղք մը բերիր»: **22** Ահարոն ըսաւ. «Իմ տիրոջս բարկութիւնը թող չբորբոքի. դուն կը ճանչնաս այս ժողովուրդը, որ չարին **հակամէտ է: 23** Ինծի ըսին. “Մեզի աստուածներ չինէ՛ որպէսզի մեր առջեւէն երթան, քանի որ այդ Մովսէսը՝ մեզ Եգիպտոսի երկրէն բարձրացնող մարդը՝ չենք գիտեր թէ ի՞նչ եղաւ անոր»: **24** Ես ալ ըսի անոնց. “Ո՛վ որ ոսկի ունի՝ թող հանէ: Բերին ինծի, ու ես կրակը ձգեցի զայն, եւ այս հորթը դուրս ելաւ»:

25 Երբ Մովսէս ժողովուրդին Կանառակութիւնը տեսաւ, (որովհետեւ Ահարոն թողուցած էր զանոնք՝ որ անառակութիւն ընեն՝, իրենց թշնամիներուն մէջ խայտառակ ըլլալու չափ.) **26** Մովսէս բանակավայրին դուռը կայնեցաւ եւ ըսաւ. «Ո՛վ որ Տէրոջ կողմէն է, ինծի **թող գայ**»: Ղեկի բոլոր որդիները անոր քով հաւաքուեցան: **27** Անոնց ըսաւ. «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Իւրաքանչիւրը իր սուրը ազդրին վրայ թող դնէ, բանակավայրին մէջ դռնէ դուռ անցնի ու վերադառնայ, եւ իւրաքանչիւրը իր եղբայրը, իւրաքանչիւրը իր ընկերը եւ իւրաքանչիւրը իր հարեւանը մեռցնէ»: **28** Ղեկի որդիները Մովսէսի խօսքին համաձայն ըրին, ու այդ օրը ժողովուրդէն երեք հազար մարդու չափ ինկաւ: **29** Արդարեւ Մովսէս ըսեր էր. «Այսօր դուք ձեզ Տէրոջ նուիրեցէք, իւրաքանչիւրը

⁴ **Եբր.**՝ երեսին պաղատեցաւ
⁷ **Կամ՝** զօրութեան պատասխանի
⁸ **Կամ՝** տկարութեան պատասխանի
⁹ **Եբր.**՝ պատասխանելով երգի
¹⁰ **Կամ՝** մերկ ըլլալը
¹¹ **Կամ՝** մերկացուցած էր զանոնք

Ույնիսկ զոհելով իր որդին եւ իր եղբայրը, որպէսզի ձեզի օրհնութիւն տայ այսօր»:

30 Հետեւեալ օրը՝ Մովսէս ժողովուրդին ըսաւ. «Դուք մեծ մեղք գործեցիք. հիմա Տէրոջ քով պիտի բարձրանամ, թերեւս քառութիւն մը ընեմ ձեր մեղքին համար»: **31** Մովսէս Տէրոջ վերադարձաւ ու ըսաւ. «Ո՛հ, այս ժողովուրդը մեծ մեղք մը գործեց՝ իրեն ոսկիէ աստուածներ շինելով: **32** Իսկ հիմա եթէ անոնց մեղքերը ներես՝ **Մերէ.** եթէ ոչ՝ կ'աղերսեմ, ջնջէ՛ գիս քու գրած գիրքէդ»: **33** Տէրը Մովսէսի ըսաւ. «Ո՛վ որ ինծի դէմ մեղանչեց, զայն իմ գիրքէս պիտի ջնջեմ: **34** Ուստի հիմա գնա՛, ժողովուրդը առաջնորդէ՛ այն տեղը՝ որ քեզի ըսի: Ահա՛ իմ հրեշտակս քու առջեւէդ պիտի երթայ. բայց իմ այցելութեանս օրը՝ անոնց մեղքը պիտի հատուցանեմ իրենց»: **35** Եւ Տէրը ժողովուրդը հարուածեց, քանի որ Ահարոնի շինած հորթը շինած էին:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՀՐԱՄԱՅԷ ԻՍՐԱՅԷԼԻ ԹՈՂՈՒԼ ՍԻՆԱ ԼԵՈՐ

33

Տէրը Մովսէսի ըսաւ. «Վեր ելիր ասկէ, դուն ու ժողովուրդը որ Եգիպտոսի երկրէն բարձրացուցիր, եւ գնա՛ այն երկիրը, որ երդումով **խոստացայ** Աբրահամի, Իսահակի ու Յակոբի՝ ըսելով. “Քու զարմիդ պիտի տամ զայն: **2** Քու առջեւէդ հրեշտակ մը պիտի դրկեմ եւ Քանանացին, Ամորհացին, Քետացին, Փերեզացին, Խելացին ու Յեբուսացին պիտի վնասեմ: **3** **Բարձրացի՛ր** կաթ ու մեղր հոսեցնող երկիրը. բայց ես “ձեզի հետ” պիտի չբարձրանամ, որպէսզի քեզ ճամբան չսպառեմ, քանի որ դուն խստապարանոց ժողովուրդ մըն ես»:

4 Երբ ժողովուրդը այս չարագուշակ լուրը լսեց՝ սգաց, եւ ո՛չ մէկը իր զարդերը իր վրայ դրաւ: **5** Տէրը ըսած էր Մովսէսի. «Ըսէ՛ Իսրայէլի որդիներուն. “Դուք խստապարանոց ժողովուրդ մըն էք. եթէ վայրկեան մը քու մէջդ բարձրանամ, քեզ պիտի սպառեմ. ուստի հիմա քու վրայէդ վերցո՛ւր զարդերդ, որպէսզի գիտնամ թէ ի՛նչ պիտի ընեմ քեզի»: **6** Ուստի Իսրայէլի որդիները իրենց զարդերը հանեցին Զորեբ լեռան քով:

ՏԷՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԸ

7 Մովսէս առաւ վրանը ու բանակավայրէն դուրս լարեց զայն, բանակավայրէն հեռու, եւ Հանդիպումի վրան կոչեց զայն: Ո՛վ որ Տէրը կը Բխնդրէր, դուրս կ'ելլէր դէպի Հանդիպումի վրանը՝ որ բանակավայրէն դուրս էր: **8** Երբ Մովսէս դուրս կ'ելլէր՝ դէպի վրանը, ամբողջ ժողովուրդը ոտքի կ'ելլէր, իւրաքանչիւրը իր վրանին մուտքը կը կայնէր ու Մովսէսի ետեւէն կը նայէր, մինչեւ որ ան վրանը մտնէր: **9** Երբ Մովսէս վրանը մտնէր, ամպի սիւնը կ'իջնէր եւ վրանին մուտքը կը կենար, ու **Տէրը** Մովսէսի հետ կը խօսէր: **10** Ամբողջ ժողովուրդը կը տեսնէր թէ ամպի սիւնը վրանին մուտքը կեցած է. ամբողջ ժողովուրդը ոտքի կ'ելլէր եւ իւրաքանչիւրը կ'երկրպագէր՝ իր վրանին մուտքը: **11** Տէրը կը խօսէր Մովսէսի հետ՝ երես առ երես, ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի. ապա **Մովսէս** բանակավայրը կը վերադառնար: Բայց անոր սպասարկուն, Նաւէի որդին՝ Յեսու երիտասարդը, վրանէն չէր հեռանար:

ՏԷՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ ԸԼԼԱԼ

^u Եբր.՝ ձեր մէջ
^p Եբր.՝ փնտռէր

12 Մովսէս Տէրոջ ըսաւ. «Նայէ՛, դուն ինծի կ'ըսես. “Բարձրացո՛ւր այս ժողովուրդը^Գ. բայց դուն ինծի չգիտցուցիր թէ ո՛վ ինծի հետ պիտի դրկես: Սակայն ըսիր. “Զեզ անունովդ կը ճանչնամ^Դ. նաեւ. “Իմ Գառջես շնորհք գտար^Ե: 13 Ուստի հիմա կ'աղերսե՛մ, եթէ քու առջեւ շնորհք գտայ, Դցուցո՛ւր ինծի քու ճամբադ, կ'աղերսե՛մ, որ ճանչնամ քեզ, որպէսզի քու առջեւ շնորհք գտնեմ. եւ Եյիշէ՛ թէ այս ազգը քո՛ւ ժողովուրդդ է»^Զ: 14 Ան ըսաւ. «Իմ ներկայութիւնս քեզի հետ պիտի երթայ, ու քեզ պիտի հանգստացնեմ»^Է: 15 Մովսէս անոր ըսաւ. «Եթէ քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ, մեզ ասկէ մի՛ հաներ: 16 Արդարեւ ի՞նչպէս պիտի գիտցուի թէ ես եւ քու ժողովուրդդ քու առջեւ շնորհք գտանք. միթէ քու մեզի հետ երթալովդ չէ՞: Այսպէս՝ ես ու քու ժողովուրդդ երկրագունդի մակերեսին վրայ եղող բոլոր ժողովուրդներէն պիտի զատորոշուին»^Ը:

17 Տէրը Մովսէսի ըսաւ. «Այս բանն ալ պիտի ընեմ՝ որ դուն ըսիր, որովհետեւ իմ առջես շնորհք գտար ու ես քեզ անունովդ կը ճանչնամ»^Թ: 18 Մովսէս ըսաւ. «Կ'աղերսե՛մ, քու փա՛ռքդ ցոյց տուր ինծի»^Ժ: 19 Տէրը ըսաւ. «Իմ ամբողջ բարութիւնս քու առջեւ պիտի անցընեմ, ու Տէրոջ անունը քու առջեւ պիտի կանչեմ. անո՛ր որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, եւ անո՛ր վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»^Ի: 20 Նաեւ անելցուց. «Դուն երեսս չես կրնար տեսնել. որովհետեւ ո՛չ մէկ մարդ կրնայ զիս տեսնել ու ողջ մնալ»^Լ: 21 Տէրը ըսաւ. «Ահա՛ քովս տեղ մը կայ. վէմի՛ն վրայ կայնէ: 22 Երբ իմ փառքս անցնի, քեզ վէմին ծակին մէջ պիտի դնեմ եւ քեզ ափովս պիտի ծածկեմ, մինչեւ որ ես անցնիմ: 23 Յետոյ ափս պիտի վերցնեմ, ու իմ ետեւէս պիտի տեսնես. բայց երեսս պիտի չտեսնուի»^Լ:

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՐԷ ՏԱՄՏԱԿՆԵՐԸ
(Բ. Օր. 10. 1-5)

34

Տէրը Մովսէսի ըսաւ. «Զեզի երկո՛ւ քարէ տախտակ կոփէ՛ առաջիններուն պէս, եւ այդ տախտակներուն վրայ պիտի գրեմ քու կոտորած առաջին տախտակներուդ վրայի խօսքերը: 2 Վաղը առտուն պատրա՛ստ եղիր, առտուն կանուխ բարձրացի՛ր Սինա լեռը, ու հոն՝ լեռան գագաթը՝ առջե՛ս կայնէ: 3 Ո՛չ մէկը թող բարձրանայ քեզի հետ, եւ ո՛չ մէկը թող տեսնուի ամբողջ լեռան վրայ, ո՛չ ալ այդ լեռան ստորոտը ոչխար կամ արջառ թող արածի»^Լ:

4 Մովսէս երկու քարէ տախտակ կոփեց՝ առաջիններուն պէս. առտուն՝ կանուխ ելաւ, ու երկու քարէ տախտակները իր ձեռքը առնելով՝ Սինա լեռը բարձրացաւ, ինչպէս Տէրը իրեն պատուիրեր էր: 5 Տէրը ամպով իջաւ, եւ հոն կեցաւ՝ անոր քով. ու Տէրոջ անունը կանչեց: 6 Տէրը անոր առջեւէն անցաւ, եւ գոչեց. «Տէ՛րը, Տէ՛րը, Աստուած գթած ու ողորմած, համբերատար եւ առատաձեռն՝ կարեկցութեամբ ու ճշմարտութեամբ, 7 որ կարեկցութիւնը հազարներուն կը պահէ, անօրէնութիւնը, յանցանքը եւ մեղքը կը ներէ. բայց յանցաւորը ամենեւին անպատիժ չի թողուր, հապա հայրերուն անօրէնութիւնը կը հատուցանէ որդիներուն ու որդիներուն որդիներուն, մինչեւ երրորդ եւ չորրորդ սերունդը»^Ը: 8 Մովսէս շտապելով մինչեւ գետին խոնարհեցաւ ու երկրպագեց, 9 եւ ըսաւ. «Ո՛վ Տէր, եթէ այժմ

^Գ Եբր.՝ աչքերուս
^Դ Եբր.՝ գիտցո՛ւր
^Ե Եբր.՝ տե՛ս
^Ը Եբր.՝ դիմաց

Բառքեւոյ շնորհք գտայ, կ'աղերսեմ, իմ Տէրս մեզի հետ թող երթայ, Գորովհետեւ ասիկա խստապարանոց ազգ մըն է. ներէ՛ մեր անօրէնութիւնն ու մեր մեղքերը, եւ մեզ քու ժառանգութիւնդ ըրէ»:

ՈՒՒՍԸ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻ
(Ելք. 23. 14-19, Բ. Օր. 7. 1-5, 16. 1-17)

10 Տէրը ըսաւ. «Ահա՛ ես ուխտ մը կը կնքեմ: Զու ամբողջ ժողովուրդիդ առջեւ այնպիսի սքանչելիքներ պիտի ընեմ, որ ամբողջ երկրի վրայ ու բոլոր ազգերուն մէջ չեն եղեր: Ամբողջ ժողովուրդը, որուն մէջ **ես** դուն, պիտի տեսնէ Տէրոջ գործը, որովհետեւ ահաւոր է այն **բանը՝** որ քեզի պիտի ընեմ: **11 Մի՛տքը** պահէ ինչ որ քեզի կը պատուիրեմ այսօր: Ահա՛ պիտի վնասեմ քու առջեւէդ Ամորհացին, Զանանացին, Զետացին, Փերեզացին, Խեւացին եւ Յերուսացին: **12** Զգուշացի՛ր դուն քեզի, որ քու գացած երկրիդ բնակիչներուն հետ ուխտ չկնքես, որպէսզի ան քու մէջդ որոգայթ չըլլայ: **13** Անոնց բագինները փլցուցէ՛ք, արծանները կոտորտեցէ՛ք, եւ Դաստարովթները կտրեցէ՛ք: **14** Արդարեւ ուրիշ աստուծոյ մի՛ երկրպագեր, քանի որ Եհովան “Նախանձախնդիր” կը կոչուի **ու** նախանձախնդիր Աստուած է: **15 Այդ** երկրին բնակիչներուն հետ ուխտ մի՛ կնքեր, որպէսզի երբ անոնք իրենց աստուածներուն հետ պռոնկին եւ իրենց աստուածներուն զոհեն, քեզ չկանչեն ու դուն անոնց զոհէն չուտես: **16** Անոնց աղջիկներէն քու որդիներուդ **կին** մի՛ առներ, որպէսզի երբ անոնց աղջիկները իրենց աստուածներուն հետ պռոնկին, քու որդիներուդ **ալ** պռոնկիլ չտան՝ իրենց աստուածներուն հետ: **17** Չուլածոյ աստուածներ մի՛ շիներ դուն քեզի:

18 Կատարէ՛ Բաղարջակերքի տօնը. Ապիպ ամսուան մէջ՝ **սահմանուած** ատենին, ինչպէս քեզի պատուիրեցի՝ եօթը օր բաղարջ կեր. որովհետեւ Ապիպ ամսուան մէջ Եգիպտոսէն ելար:

19 Ամէն **մօր** արգանդ բացող իմս է. նաեւ քու խաշիքէդ ամէն արու առջինեկը, թէ՛ եզ ըլլայ եւ թէ՛ ոչխար, **իմս է:** **20** Բայց իշուն առջինեկը գառո՛վ փրկէ. եթէ չփրկես, անոր ծոծրակը կոտրէ: Զու որդիներուդ ամէն անդրանիկը փրկէ՛. ո՛չ մէկը իմ առջեւ պարապ **ծեռքով** թող երեւնայ:

21 Վե՛ց օր գործէ, բայց եօթներորդ օրը հանգստացի՛ր. թէ՛ վարուցանի եւ թէ՛ հունձքի ատեն հանգստացի՛ր:

22 Կատարէ՛ Ծաբաթներու **տօնը**, **այսինքն** ցորենի երախայրիքին Հունձքի տօնը, ու Բերքի տօնը՝ տարուան վախճանը:

23 Չեր բոլոր արունները տարին երեք անգամ թող երեւնան Տէրոջ՝ Եհովայի, Իսրայէլի Աստուծոյն առջեւ: **24** Արդարեւ քու առջեւէդ ազգերը պիտի վտարեմ ու քու հողամասդ պիտի ընդարձակեմ. եւ ո՛չ մէկը քու երկրիդ պիտի ցանկայ, երբ տարին երեք անգամ բարձրանաս որ Տէրոջ՝ քու Աստուծոյդ առջեւ երեւնաս:

25 Իմ Գոհերս խմորեալ **հացով** մի՛ մատուցաներ՝, ու Զատիկի տօնին զոհը մինչեւ առտու թող չմնայ: **26** Զու հողիդ առաջի՛ն երախայրիքը բեր Տէրոջ՝ քու Աստուծոյդ տունը:

^բ Եբր.՝ աչքերուդ

^գ Կամ՝ թէեւ

^դ Այսինքն՝ Զանանացիներու չաստուածուհիին նուիրուած ցիցերը

^ե Եբր.՝ զոհերուս արիւնը խմորեալ հացի վրայ մի՛ թափեր

Ուլը իր մօր կաթին մէջ մի՛ եփեր»:

27 Տէրը Մովսէսի ըսաւ. «Գրէ՛ այս խօսքերը. որովհետեւ այս խօսքերուն համաձայն քեզի հետ ու Իսրայէլի հետ ուխտ կնքեցի»: 28 Եւ ան հոն կեցաւ՝ Տէրոջ հետ, քառասուն օր ու քառասուն գիշեր: Ո՛չ հաց կերաւ, ո՛չ ալ ջուր խմեց: Տախտակներուն վրայ ուխտին խօսքերը գրեց, **այսինքն՝** տասը պատուիրանները:

ՄՈՎՍԷՍ Կ'ԻՋՆԷ ՍԻՆԱ ԼԵՌՆԷՆ

29 Երբ Մովսէս Սինա լեռնէն իջաւ, – Վկայութեան երկու տախտակները Մովսէսի ձեռքն էին լեռնէն իջած ատենը –, Մովսէս չէր գիտեր թէ իր երեսին մորթը լուսափայլ եղած էր մինչ **Տէրը** իրեն հետ կը խօսէր: 30 Ահարոն ու Իսրայէլի բոլոր որդիները տեսան Մովսէսը, եւ ահա՛ անոր երեսին մորթը լուսափայլ էր. ուստի անոր մօտենալու վախցան: 31 Բայց Մովսէս կանչեց զանոնք. Ահարոն ու համայնքին բոլոր իշխանները վերադարձան անոր, եւ Մովսէս խօսեցաւ անոնց հետ: 32 Անկէ ետք Իսրայէլի բոլոր որդիները մօտեցան, ու պատուիրեց անոնց ամէն ինչ որ Տէրը խօսեր էր իրեն Սինա լեռան վրայ: 33 Մովսէս **մինչեւ** անոնց հետ խօսիլը ակարտելը՝ իր երեսը քօղ դրաւ: 34 Բայց երբ Մովսէս Տէրոջ առջեւ մտնէր՝ անոր հետ խօսելու համար, մինչեւ դուրս ելլելը՝ քօղը կը վերցնէր. յետոյ դուրս կ'ելլէր ու իրեն պատուիրուածը Իսրայէլի որդիներուն կը խօսէր: 35 Իսրայէլի որդիները Մովսէսի երեսին **նայելով** կը տեսնէին թէ Մովսէսի երեսին մորթը լուսափայլ էր: Ուստի Մովսէս իր երեսը քօղով կը ծածկէր մինչեւ մտնելը՝ անոր հետ խօսելու համար:

ՇԱՔԱԹԻՆ ՀԱՍԱՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

35

Մովսէս Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը համախմբեց եւ անոնց ըսաւ. «Ահա՛ւասիկ այն խօսքերը որ Տէրը պատուիրեց, որպէսզի զանոնք գործադրէք: 2 Վե՛ց օր գործ ըրէք, բայց եօթներորդ օրը սուրբ պիտի ըլլայ ձեզի, **այսինքն** հանգիստի Շաբաթ՝ Տէրոջ **նուիրուած**: Ո՛վ որ այդ **օրը** գործ մը ընէ՝ պիտի մեռցուի: 3 Շաբաթ օրը ձեր բոլոր բնակարաններուն մէջ կրակ մի՛ վառէք»:

ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ

(Ելք. 25. 1-9)

4 Մովսէս Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքին խօսեցաւ՝ ըսելով. «Ահա՛ւասիկ ինչ որ Տէրը պատուիրեց. 5 “Ձեր մէջէն բարձրացնելիք ընծայ առէք Տէրոջ: Ո՛վ որ սիրտով կը յօժարի՝ թող բերէ Տէրոջ բարձրացնելիք ընծան.– ոսկի, արծաթ եւ պղինձ, 6 կապուտակ, ծիրանի ու կրկնակի կարմիր, բարակ քթան եւ այծի մազ, 7 կարմիր ներկուած խոյի մորթեր, իշղարի մորթեր ու սատիմի փայտեր, 8 լուսակալին համար իւղ, օծումի իւղին եւ անուշաբոյր խունկին համար համեմներ, 9 եղնգնաքարեր ու եփուտին եւ լանջապանակին վրայ ագուցանուելիք քարեր»:

ՏԷՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

(Ելք. 39. 32-43)

10 «Ձեր մէջ ամէն սիրտով իմաստուն թող գայ ու Տէրոջ բոլոր պատուիրած բաները շինէ.– 11 խորանը, անոր վրանը եւ ծածքը, անոր ճարմանդները, տախտակները, նիգերը,

սիւներն ու խարիսխները. **12** տապանակն ու ձողերը, Զաւութիւնը եւ ծածկող վարագոյրը. **13** սեղանը, անոր ձողերն ու բոլոր առարկաները, առաջադրութեան հացը. **14** նաեւ լուսակալին աշտանակը, անոր առարկաները, անոր ճրագներն ու լուսակալին իւղը. **15** խունկին զոհասեղանը եւ անոր ձողերը. օծումի իւղն ու անուշաբոյր խունկը. մուտքի վարագոյրը՝ խորանի մուտքին համար. **16** ողջակէզին զոհասեղանը եւ անոր պղինձէ **ցանցակերպ** կասկարան, անոր ձողերն ու բոլոր առարկաները. աւագանը եւ անոր խարիսխը. **17** սրահին վարագոյրները, անոր սիւներն ու խարիսխները եւ սրահին դրան վարագոյրը. **18** խորանին ցիցերը, սրահին ցիցերն ու անոնց չուանները. **19** պաշտամունքին հագուստները՝ սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար. **եւ** Ահարոն քահանային սուրբ հագուստներն ու անոր որդիներուն հագուստները, որպէսզի քահանայութիւն կատարեն»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԲԵՐԷ ԻՐ ԸՆԾԱՆԵՐԸ

20 Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը Մովսէսի առջեւէն **դուրս** ելաւ: **21** Բոլոր պատրաստակամ սիրտ ունեցողներն ու բոլոր հոգիով յօժարողները եկան եւ Տէրոջ բարձրացնելիք ընծայ բերին Հանդիպումի վրանին գործին համար, անոր ամբողջ ծառայութեան համար ու սուրբ հագուստներուն համար: **22** Թէ՛ **այր** մարդիկ եւ թէ՛ կիներ եկան, որքան որ սիրտով յօժարող կար, **ու** բերին օղակներ, օղեր, մատանիներ, մանեակներ, ամէն տեսակ ոսկիէ իրեր: Ամէն ընծայ բերող՝ ոսկիէ երերցնելիք ընծայ **բերաւ** Տէրոջ: **23** Ամէն մարդ, որուն քով կը գտնուէր կապուտակ, ծիրանի եւ կրկնակի կարմիր, բարակ քթան ու այծի մազ, կարմիր ներկուած խոյի մորթեր եւ իշղարի մորթեր, բերաւ **զանոնք**: **24** Ամէն արծաթէ ու պղինձէ բարձրացնելիք ընծայ մատուցանող՝ բարձրացնելիք ընծան բերաւ Տէրոջ: Որո՛ւն քով որ ծառայութեան ամէն գործին **պիտանի** սատիմի փայտ կը գտնուէր՝ բերաւ: **25** Սիրտով իմաստուն բոլոր կիները՝ իրենց ձեռքերով մանեցին, եւ իրենց մանած կապուտակը, ծիրանին, կրկնակի կարմիրն ու բարակ քթանը բերին: **26** Պատրաստակամ սիրտ եւ իմաստութիւն ունեցող բոլոր կիները՝ այծի մազ մանեցին: **27** Իշխանները եղնգնաքարեր ու եփուտին եւ լանջապանակին համար ագուցանուելիք քարեր բերին, **28** նաեւ բուրաւէտ **համեմներ** ու իւղ՝ լուսակալին համար, օծումի իւղին համար եւ անուշաբոյր խունկին համար: **29** Իսրայէլի որդիները յօժարակամ ընծայ բերին Տէրոջ – ամէն մարդ կամ կին, որ յօժար սիրտ ունէր բերելու ամէն **տեսակ** գործի համար, որ Տէրը Մովսէսի ^բմիջոցով պատուիրէր էր՝ որպէսզի շինուի:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ԳՈՐԾԱԻՈՐՆԵՐԸ

(Ելք. 31. 1-11)

30 Մովսէս Իսրայէլի որդիներուն ըսաւ. «Ահա՛ Տէրը Յուդայի տոհմէն Ովրի որդիին Ուրիի որդին՝ Բեսելիէլը կանչեց, **31** եւ Աստուծոյ Հոգիով լեցուց զայն՝ իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ, ամէն **տեսակ** գործի համար, **32** որպէսզի հնարքներ «մտածելով՝ ոսկի, արծաթ եւ պղինձ գործածէ, **33** ագուցանելու համար քարեր տաշէ, փայտ քանդակէ, ամէն տեսակ հնարուած գործ կատարէ: **34** Նաեւ անոր սիրտին մէջ

^ա **Կամ՝** լանջագեղ կամարներ

^բ **Եբբ.**՝ ձեռքով

^գ **Եբբ.**՝ հնարելով

սորվեցնելու կարողութիւնը դրաւ. թէ՛ անոր, թէ՛ Դանի տոհմէն Աքիսամայի որդիին՝ Ոհողիաբի: 35 Սիրտի իմաստութեամբ լեցուց զանոնք, որպէսզի ամէն տեսակ գործ կատարեն – փորագրիչի, հնարագէտի, նաեւ կապուտակի, ծիրանիի, կրկնակի կարմիրի ու բարակ քթանի վրայ նկարակերտողի, եւ ոստայնանկի –, այսինքն՝ որեւէ գործ կատարեն ու հնարք մտածեն»:

36

Այն ատեն Բեսելիէլ, Ոհողիաբ եւ բոլոր սիրտով իմաստունները, որոնց որ Տէրը իմաստութիւն ու հանճար տուաւ՝ կատարել գիտնալու համար սրբարանի ծառայութեան ամէն տեսակ գործ, Տէրոջ բոլոր պատուիրածներուն համաձայն ըրին:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԲԵՐԷ ԾԱՏ ԸՆԾԱՆԵՐ

2 Մովսէս կանչեց Բեսելիէլն ու Ոհողիաբը, եւ բոլոր սիրտով իմաստունները՝ որոնց սիրտին մէջ Տէրը իմաստութիւն դրաւ, այսինքն բոլոր անոնք՝ որ պատրաստակամ սիրտով գործին մօտեցան, զայն ընելու համար: 3 Անոնք Մովսէսէ առին բոլոր բարձրացնելիք ընծաները, որ Իսրայէլի որդիները բերին՝ սրբարանի ծառայութեան գործը անոնցմով ընելու համար: Սակայն ասոնք տակաւին ամէն առտու յօժարակամ ընծաներ կը բերէին անոր:

4 Սրբարանին ամբողջ գործը կատարող բոլոր իմաստուն մարդիկը՝ իւրաքանչիւրը իր ըրած գործէն եկաւ, 5 եւ խօսեցան Մովսէսի՝ ըսելով. «Ժողովուրդը անելի՛ կը բերէ, քան որչափ պէտք է՝ ծառայելու այն գործին, որ Տէրը պատուիրեց ընել»: 6 Ուստի Մովսէս պատուիրեց բանակավայրին մէջ «ծանուցանել. «Ա՛յ ո՛չ մարդ, ո՛չ կին թող գործ ընէ սրբարանին բարձրացնելիք ընծային համար»: Այսպէս ժողովուրդը ընծայ բերելէն դադրեցաւ, 7 որովհետեւ բերուած նիւթերը ամբողջ գործը ընելու համար բաւական էին, եւ անելցան ալ:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ԾԻՆՈՒԹԻՒՆԸ (Ելք. 26. 1-37)

8 Խորանին գործը կատարողներէն ամէն սիրտով իմաստուն՝ տասը վարագոյր շինեց մանուած բարակ քթանէ, կապուտակէ, ծիրանիէ ու կրկնակի կարմիրէ. զանոնք հնարագիտութեամբ գործուած քերովբէներով միասին շինեց: 9 Մէկ վարագոյրին երկայնքը՝ քսանութ կանգուն էր, եւ մէկ վարագոյրին լայնքը՝ չորս կանգուն. բոլոր վարագոյրները մէկ չափ ունէին: 10 Հինգ վարագոյր իրարու կցեց, միւս հինգ վարագոյրն ալ իրարու կցեց: 11 Կցուածքին ծայրի մէկ վարագոյրին եզերքին վրայ կապուտակէ օղակներ շինեց. միւս կցուածքին ծայրի վարագոյրին եզերքն ալ նոյնպէս շինեց: 12 Մէկ վարագոյրին վրայ յիսուն օղակ շինեց, եւ միւս կցուածքին վրայ եղող վարագոյրին ծայրն ալ յիսուն օղակ շինեց. օղակները դէմ դիմաց էին: 13 Յիսուն ոսկի ճարմանդ շինեց, ու վարագոյրները ճարմանդներով իրարու կոճկեց. այսպէս՝ խորանը միակտուր եղաւ:

14 Խորանին վրայի վրանին համար այծի մազէ վարագոյրներ շինեց. անոնցմէ տասնմէկ վարագոյր շինեց: 15 Մէկ վարագոյրին երկայնքը երեսուն կանգուն էր, եւ մէկ վարագոյրին լայնքը՝ չորս կանգուն. տասնմէկ վարագոյրը մէկ չափ ունէր: 16 Հինգ վարագոյր զատ կցեց, ու վեց վարագոյր՝ զատ: 17 Կցուածքին ծայրի վարագոյրին

^u Եբր.՝ ձայն անցընել՝ ըսելով

եզերքին վրայ յիսուն օղակ շինեց, եւ միւս կցուածքին **ծայրի** վարագոյրին եզերքին վրայ՝ յիսուն օղակ: **18** Յիսուն պղինձէ ճարմանդ շինեց, որպէսզի վրանը կոճկէ ու միակտուր ըլլայ: **19** Վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածք մը շինեց, եւ անոր վրայ՝ իշղարի մորթերէ ծածք մը:

20 Խորանցին համար կանգնած **մնացող** տախտակներ շինեց՝ սատիմի փայտէ: **21** Մէկ տախտակին երկայնքը տասը կանգուն էր, ու մէկ տախտակին լայնքը՝ մէկուկէս կանգուն: **22 Ամէն** մէկ տախտակ իրարու առընթեր երկու ագուցիկ ծայր ունէր. խորանցին բոլոր տախտակները ա՛յսպէս ըրաւ: **23** Խորանցին տախտակներ շինեց.– դէպի հարաւ՝ **անոր** հարաւային կողմին համար քսան տախտակ, **24** ու քսան տախտակներուն տակ՝ քառասուն արծաթէ խարիսխ. **այսինքն** մէկ տախտակի տակ՝ իր երկու ագուցիկ ծայրերը **անցընելու** համար երկու խարիսխ շինեց, եւ ուրիշ տախտակի մը տակ՝ իր երկու ագուցիկ ծայրերը **անցընելու** համար՝ երկու խարիսխ: **25** Խորանցին միւս կողմին համար՝ դէպի հիւսիս քսան տախտակ շինեց, **26** ու անոնց քառասուն արծաթէ խարիսխները.– մէկ տախտակի տակ՝ երկու խարիսխ, եւ ուրիշ տախտակի մը տակ՝ երկու խարիսխ: **27** Խորանցին ետեւի կողմին համար՝ դէպի արեւմուտք վեց տախտակ շինեց: **28** Խորանցին ետեւի կողմի անկիւններուն համար երկու տախտակ շինեց: **29** Անոնք ներքեւէն կրկնակ էին, իսկ գագաթէն օղակով մը կը միանային: Երկուքին ալ երկու անկիւնները ա՛յսպէս ըրաւ: **30** Այսպէս՝ ութ տախտակ էին, ու անոնց արծաթէ խարիսխները՝ տասնվեց խարիսխ էին, **ամէն** մէկ տախտակի տակ՝ երկու խարիսխ: **31** Սատիմի փայտէ նիգեր շինեց. խորանցին մէկ կողմի տախտակներուն համար՝ հինգ, **32** խորանցին միւս կողմի տախտակներուն համար՝ հինգ նիգ, եւ խորանցին ետեւի կողմի – դէպի արեւմուտք եղող – տախտակներուն համար՝ հինգ նիգ: **33** Մէջտեղի նիգը այնպէս շինեց, որ տախտակներուն մէջտեղէն՝ մէկ ծայրէն միւս ծայրը անցնի: **34** Տախտակները ոսկիով պատեց, ու անոնց օղակները ոսկիէ շինեց՝ նիգերուն **անցընելու** տեղեր ըլլալու համար: Նիգերն ալ ոսկիով պատեց:

35 Կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ շինեց վարագոյրը. հնարագիտութեամբ գործուած՝ քերովբէներով **միասին** շինեց զայն: **36** Սատիմի **փայտէ** չորս սիւն շինեց անոր, եւ ոսկիով պատեց զանոնք. անոնց ճանկերը ոսկիէ էին. անոնց չորս արծաթէ խարիսխ ձուկեց: **37** Վրանի մուտքին համար՝ կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ եւ մանուած բարակ քթանէ ասեղնագործ վարագոյր մը շինեց: **38** Անոր հինգ սիւներն ու անոնց ճանկերը **շինեց**, եւ անոնց խոյակներն ու կապերը ոսկիով պատեց. անոնց հինգ խարիսխները պղինձէ էին:

ՈՒՒՏԻ ՏԱՊԱՆԱԿԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 25. 10-22)

37

Բետելիէլ սատիմի փայտէ շինեց տապանակը. անոր երկայնքը երկուքուկէս կանգուն էր, անոր լայնքը՝ մէկուկէս կանգուն, եւ անոր բարձրութիւնը՝ մէկուկէս կանգուն: **2** Ներսէն ու դուրսէն զուտ ոսկիով պատեց զայն, եւ անոր շուրջը ոսկի շրջանակ մը շինեց: **3** Անոր չորս անկիւններուն համար չորս ոսկի օղակ ձուկեց, **այսինքն** անոր մէկ կողմը՝ երկու օղակ, ու միւս կողմը՝ երկու օղակ: **4** Սատիմի փայտէ ձողեր շինեց, զանոնք ոսկիով պատեց, **5** եւ ձողերը անցուց տապանակին կողմերը եղող օղակներուն, որպէսզի տապանակը **անոնցմով** կրուի:

6 Զաւութիւնը զուտ ոսկիէ շինեց. անոր երկայնքը երկուքուկէս կանգուն էր, ու լայնքը՝ մէկուկէս կանգուն: **7** Երկու ոսկիէ քերովբէ շինեց. զանոնք կռածոյ շինեց, Զաւութեան երկու ծայրերը. **8** մէկ քերովբէն՝ մէկ կողմի ծայրը, միւս քերովբէն՝ միւս կողմի ծայրը: Զերովբէները Զաւութեանէն **առնուած** շինեց, անոր երկու ծայրերը: **9** Զերովբէները **իրենց**

թեւերը վերէն տարածելով՝ իրենց թեւերով Զաւութիւնը կը ծածկէին: Իրենց երեսները իրարու կը նայէին. քերովբէներուն երեսները դէպի Զաւութիւնը դարձած էին:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՏՈՒՑԱՆՈՒԱԾ ՀԱՅԻՆ ՍԵՂԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 25. 23-30)

10 Սեղանը սատիմի փայտէ շինեց: Անոր երկայնքը երկու կանգուն էր, լայնքը՝ մէկ կանգուն, ու բարձրութիւնը՝ մէկուկէս կանգուն: 11 Զուտ ոսկիով պատեց զայն, եւ անոր շուրջը ոսկի շրջանակ մը շինեց: 12 Նաեւ անոր շուրջը չորս մատնաչափ եզերք մը շինեց, ու եզերքին շուրջը՝ ոսկի շրջանակ մը: 13 Չորս ոսկի օղակ ձուլեց անոր համար, եւ օղակները անոր չորս ոտքերուն քով՝ չորս անկիւնները դրաւ: 14 Օղակները եզերքին քով էին. սեղանը կրելու ծառայող ձողերուն անցընելու տեղերն էին: 15 Սեղանը կրելու ծառայող ձողերը սատիմի փայտէ շինեց եւ զանոնք ոսկիով պատեց: 16 Սեղանին վրայ եղող առարկաները, անոր ափսէները, խնկամանները, թասերն ու «թափելիք նուէր ընծայելու» բաժակները զուտ ոսկիէ շինեց:

ԱՇՏԱՆԱԿԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 25. 31-40)

17 Աշտանակը զուտ ոսկիէ շինեց. կռածոյ շինեց աշտանակը: Անոր բունը եւ ճիւղերը, անոր սկահակները, գնդակներն ու ծաղիկները իրմէ առնուած էին: 18 Անոր կողմերէն վեց ճիւղ կ'ելլէր. աշտանակին մէկ կողմէն՝ երեք ճիւղ, եւ աշտանակին միւս կողմէն՝ երեք ճիւղ: 19 Մէկ ճիւղին վրայ նշաձեւ երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով, եւ միւս ճիւղին վրայ նշաձեւ երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակէն ելած վեց ճիւղերը ա՛յսպէս էին: 20 Աշտանակին վրայ չորս նշաձեւ սկահակ կար՝ իրենց գնդակներով եւ ծաղիկներով. 21 անկէ ելած վեց ճիւղերուն համեմատ՝ երկու ճիւղի տակ իրմէ ելած գնդակ մը կար, ուրիշ երկու ճիւղի տակ՝ իրմէ ելած գնդակ մը, եւ ուրիշ երկու ճիւղի տակ՝ իրմէ ելած գնդակ մը: 22 Անոնց գնդակներն ու ճիւղերը իրմէ առնուած էին. ամբողջը՝ մէկ կտորէ, զուտ ոսկիէ, կռածոյ էր: 23 Անոր եօթը ճրագները, ունելիները եւ ճրագաբերանները զուտ ոսկիէ շինեց: 24 Զայն իր բոլոր առարկաներով՝ տաղանդ մը զուտ ոսկիով շինեց:

ԽՈՒՆԿ ԾԻԵԼՈՒ ԶՈՂԱՍԵՂԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 30. 1-5)

25 Խունկի զոհասեղանը սատիմի փայտէ շինեց: Անոր երկայնքը կանգուն մըն էր, անոր լայնքը՝ կանգուն մը – քառակուսի էր –, եւ անոր բարձրութիւնը՝ երկու կանգուն: Անոր եղջիրները իրմէ առնուած էին: 26 Անոր վրան, անոր կողմերը՝ բոլորածեւ, ու անոր եղջիրները զուտ ոսկիով պատեց. նաեւ անոր շուրջը ոսկի շրջանակ մը շինեց: 27 Անոր երկու ոսկի օղակ շինեց՝ անոր շրջանակին տակ, անոր երկու անկիւնները, անոր երկու կողմերուն վրայ, որպէսզի անոնք անցընելու տեղեր ըլլան ձողերուն՝ զայն ասոնցմով կրելու համար: 28 Ձողերը սատիմի փայտէ շինեց, ու զանոնք ոսկիով պատեց:

ՕԾՈՒՄԻ ԻՒՂԻՆ ԵՒ ԽՈՒՆԿԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

[»] Եբր.՝ թափելու

(Ելք. 30. 22-38)

29 Սուրբ օծումի իւղը եւ մաքուր անուշաբոյր խուկկը շինեց՝ Բբուրագործի արհեստին համեմատ:

ՋՈՂԱՍԵՂԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 27. 1-8)

38

Ողջակէզի զոհասեղանը սատիմի փայտէ շինեց: Անոր երկայնքը հինգ կանգուն էր, լայնքը՝ հինգ կանգուն – քառակուսի էր –, եւ բարձրութիւնը երեք կանգուն: 2 Անոր եղջիւրները անոր չորս անկիւններուն վրայ շինեց: Եղջիւրները իրմէ **առնուած** էին. զայն պղինձով պատեց: 3 Ջոհասեղանին բոլոր առարկաները շինեց, **այսինքն՝** կաթսաները, թիակները, կոնքերը, մսահաններն ու կրակարանները. անոր բոլոր առարկաները պղինձէ շինեց: 4 Ջոհասեղանին համար՝ անոր շրջապատին տակ, ներքեւը, գրեթէ մէջտեղը, պղինձէ ցանցակերպ կասկարայ մը շինեց: 5 Պղինձէ կասկարային չորս անկիւնները չորս օղակ ձուկեց՝ ձողերուն **անցընելու** տեղեր ըլլալու համար: 6 Ձողերը սատիմի փայտէ շինեց ու զանոնք պղինձով պատեց: 7 Ձողերը զոհասեղանին կողմերը եղող օղակներուն անցուց, զայն անոնցմով կրելու համար: Զայն տախտակներով շինեց՝ մէջը դատարկ:

ՊՂԻՆՁԷ ՍԵՂԱՆԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 30. 18)

8 Պղինձէ աւազանը ու անոր պղինձէ խարիսխը՝ Հանդիպումի վրանին մուտքը համախմբուող կիներուն հայելիներէն շինեց:

ՏԷՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՎԱՐԱԳՈՅՐԸ

(Ելք. 27. 9-19)

9 Զետոյ սրահը շինեց.– դէպի հարաւ՝ հարաւային կողմին համար՝ սրահին մանուած բարակ քթանէ վարագոյրները, հարիւր կանգուն **երկայնութեամբ**, 10 իրենց քսան սիւներով եւ անոնց քսան պղինձէ խարիսխներով. սիւներուն ճանկերն ու անոնց կապերը արծաթէ էին: 11 Հիւսիսային կողմին համար **վարագոյրներ շինեց**, հարիւր կանգուն **երկայնութեամբ**, իրենց քսան սիւներով եւ անոնց քսան պղինձէ խարիսխներով. սիւներուն ճանկերն ու անոնց կապերը արծաթէ էին: 12 Արեւմտեան կողմին համար վարագոյրներ **շինեց**, յիսուն կանգուն **երկայնութեամբ**, իրենց տասը սիւներով եւ անոնց տասը խարիսխներով. սիւներուն ճանկերն ու անոնց կապերը արծաթէ էին: 13 Արեւելեան կողմին համար ալ **վարագոյրներ շինեց**, յիսուն կանգուն **երկայնութեամբ**. 14 մէկ թելին համար վարագոյրներ **շինեց**, տասնհինգ կանգուն **երկայնութեամբ**, իրենց երեք սիւներով եւ անոնց երեք խարիսխներով, 15 նաեւ վարագոյրներ՝ միւս թելին համար – **այսինքն** սրահին դրան մէկ կողմէն ու միւս կողմէն, տասնհինգ կանգուն **երկայնութեամբ**, իրենց երեք սիւներով եւ անոնց երեք խարիսխներով: 16 Սրահին շրջակայ բոլոր վարագոյրները մանուած բարակ քթանէ էին: 17 Սիւներուն խարիսխները պղինձէ էին, սիւներուն ճանկերն ու անոնց կապերը՝ արծաթէ, եւ անոնց խոյակները՝ արծաթապատ. սրահին բոլոր սիւներն ալ արծաթէ կապեր ունէին: 18 Սրահին դրան վարագոյրը ասեղնագործ էր, կապուտակէ,

^բ Այսինքն՝ բոյրեր շինողի

ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ շինուած, քսան կանգուն երկայնութեամբ. դրան լայնքին մէջի բարձրութիւնը՝ սրահին վարագոյրներուն համեմատ՝ հինգ կանգուն էր: 19 Իր չորս սիւներն ու անոնց չորս պղինձէ խարիսխները շինեց. անոնց ճանկերը արծաթէ էին, անոնց խոյակները՝ արծաթապատ, եւ կապերը՝ արծաթէ: 20 Խորանին ու շրջակայ սրահին բոլոր ցիցերը պղինձէ էին:

ՏԷՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՄԵՏԱՂՆԵՐԸ

21 Ահա՛ւասիկ խորանին՝ այսինքն Վկայութեան խորանին հաշիւը, որ Մովսէսի հրամանին համաձայն՝ Ղեւտացիներուն պաշտօնին համար հաշուուեցաւ Ահարոն քահանային որդիին Իթամարի ձեռքով: 22 Յուդայի տոհմէն Ովրի որդիին Ուրիի որդիին՝ Բեսելիէլ ըրաւ ամէն ինչ որ Տէրը Մովսէսի պատուիրեր էր: 23 Իրեն հետ էր փորագրիչ եւ հնարագէտ, կապուտակի, ծիրանիի, կրկնակի կարմիրի ու բարակ քթանի վրայ նկարակերտող Ոհողիաբ, Դանի տոհմէն Աքիսամայի որդին:

24 Այս գործին համար գործածուած ամբողջ ոսկին,– այսինքն սրբարանին ամբողջ գործին լընծայուած ոսկին,– քսանինը տաղանդ ու եօթը հարիւր երեսուն սիկղ էր, սրբարանի սիկղին համեմատ: 25 Համայնքէն թուարկուողներուն արծաթը՝ հարիւր տաղանդ ու հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղ էր, սրբարանի սիկղին համեմատ: 26 Զսան տարեկանէն վեր թուարկուելու համար անցնողները՝ մարդ գլուխ մէկական պեքա տուին, այսինքն՝ կէս սիկղ, սրբարանի սիկղին համեմատ. վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն մարդ անցաւ: 27 Սրբարանին խարիսխներն ու վարագոյրին խարիսխները ձուլուեցան հարիւր տաղանդ արծաթով. հարիւր տաղանդէն հարիւր խարիսխ շինուեցաւ, մէկ տաղանդ՝ մէկ խարիսխի համար: 28 Իսկ հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղ արծաթով սիւներուն ճանկերը շինեց, անոնց խոյակները պատեց եւ զանոնք կապեց: 29 Երերցնելիք ընծային պղինձը եօթանասուն տաղանդ ու երկու հազար չորս հարիւր սիկղ էր. 30 անո՛վ շինեց Հանդիպումի վրանին մուտքի խարիսխները, պղինձէ զոհասեղանը եւ անոր պղինձէ կասկարան, զոհասեղանին բոլոր առարկաները, 31 շրջակայ սրահին խարիսխները, սրահին դրան խարիսխները, խորանին բոլոր ցիցերն ու շրջակայ սրահին բոլոր ցիցերը:

ՔԱՅԱՆԱՆԵՐՈՒ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 28. 1-14)

39

Կապուտակէ, ծիրանիէ եւ կրկնակի կարմիրէ շինեցին պաշտամունքին հագուստները, սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար. Ահարոնի համար սուրբ հագուստներ շինեցին, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

2 Եփուտը շինեց ոսկիէ, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ: 3 Ոսկին ծեծելով բարակ թիթեղներ շինեցին եւ անոցմէ թելեր կտրեցին, որպէսզի կապուտակին, ծիրանիին, կրկնակի կարմիրին ու բարակ քթանին հետ հնարագիտութեամբ գործածեն: 4 Կոճկուող ուսնոցներ շինեցին անոր, այսինքն եփուտին, որ երկու ծայրէն կը կոճկուէր: 5 Եփուտին վրայ եղող ժապաւէնը նոյն նիւթէն էր – անոր գործին համեմատ՝ ոսկիէ, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ էր, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

6 Ոսկի ճանակներու մէջ եղնգնաքարերը ագուցանեցին, եւ անոնց վրայ Իսրայէլի

^u Եբր.՝ երերցնելիք ընծային

որդիներուն անունները փորագրեցին՝ կնիք փորագրելու պէս: **7** Զանոնք եփուտին ուսնոցներուն վրայ դրաւ, որպէսզի Իսրայէլի որդիներուն յիշատակի քարեր ըլլան, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ԼԱՆՁԱՊԱՆԱԿԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 28. 15-30)

8 Յետոյ լանջապանակը շինեց՝ հնարագիտութեամբ գործուած, եփուտին գործին պէս, ոսկիէ, կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ: **9** Լանջապանակը շինեցին քառակուսի, երկուքի ծալուող. մէկ թիզ երկայնքով եւ մէկ թիզ լայնքով, երկուքի կը ծալուէր: **10** Անոր վրայ չորս կարգ քար ագուցանեցին, սա՛ կարգով.– առաջին կարգը՝ սարդիոն, տպագիոն ու զմրուխտ. **11** երկրորդ կարգը՝ կարկեհան, շափիւղայ եւ ադամանդ. **12** երրորդ կարգը՝ արեւաքար, ակատ ու մեղեսիկ. **13** չորրորդ կարգը՝ ոսկեքար, եղնգնաքար եւ յասպիս: Ասոնք ոսկի ճանակներու մէջ ագուցանուած էին, իրենց ագուցուածքներուն մէջ: **14** Քարերը Իսրայէլի որդիներուն անուններուն համեմատ՝ տասներկու հատ էին, անոնց անուններուն համեմատ: Իւրաքանչիւրին անունը՝ տասներկու տոհմերուն համեմատ՝ կնիք փորագրողի գործով փորագրուած էր: **15** Լանջապանակին վրայ զուտ ոսկիէ ոլորուած եւ հիւտուած շղթաներ շինեցին. **16** երկու ոսկի ճանակ ու երկու ոսկի օղակ ալ շինեցին: Երկու օղակները լանջապանակին երկու ծայրերը դրին, **17** եւ լանջապանակին ծայրերը եղող երկու օղակներուն անցուցին երկու ոսկիէ հիւտուած շղթաները: **18** Երկու հիւտուած շղթաներուն միւս երկու ծայրերն ալ երկու ճանակներուն անցուցին, եւ ասոնք եփուտին ուսնոցներուն վրայ դրին, անոր առջեւի կողմը: **19** Երկու ոսկի օղակ ալ շինեցին, ու զանոնք լանջապանակին ներսի կողմէն՝ եփուտին կցուած եզերքին երկու ծայրերը դրին: **20** Եւ ուրիշ երկու օղակ շինեցին, ու զանոնք եփուտին երկու ուսնոցներուն ներքեւէն անցուցին, անոր առջեւի կցուածքին մօտ, եփուտին ժապաւէնին վրայէն: **21** Լանջապանակը իր օղակներէն կապեցին եփուտին օղակներուն՝ կապուտակէ շինուած երիզով, որպէսզի եփուտին ժապաւէնին վրայ ըլլայ եւ լանջապանակը եփուտին վրայէն չզատուի, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ՈՒՐԻՇ ԶԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Ելք. 28. 31-43)

22 Եփուտին պարեգօտը ամբողջովին կապուտակէ շինեց – ոստայնանկի գործ: **23** Պարեգօտին մէջտեղը բացուածք մը կար՝ զրահի բացուածքին պէս, ու բացուածքին շուրջը հիւտուած եզերք մը՝ որպէսզի չպատռի: **24** Պարեգօտին քղանցքներուն վրայ կապուտակէ, ծիրանիէ, կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ նուէր շինեցին: **25** Զուտ ոսկիէ զանգակներ շինեցին, ու զանգակները նուէրուն մէջտեղը՝ պարեգօտին քղանցքներուն վրայ դրին, բոլորաձեւ՝ նուէրուն մէջտեղը: **26** Պարեգօտին քղանցքներու վրայ զանգակ մը ու նուէ մը, զանգակ մը ու նուէ մը կար՝ բոլորաձեւ շարուած, պաշտօն կատարելու համար, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

27 Ահարոնի եւ անոր որդիներուն համար շինեցին բարակ քթանէ պատմունճաններ – ոստայնանկի գործ, **28** նաեւ խոյրը՝ բարակ քթանէ, պճնազարդ ապարօշները՝ բարակ քթանէ, կտակէ անդրավարտիքները՝ մանուած բարակ քթանէ, **29** ու գօտին՝ մանուած բարակ քթանէ, կապուտակէ, ծիրանիէ եւ կրկնակի կարմիրէ – ասեղնագործ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

30 Սուրբ պսակին թիթեղը զուտ ոսկիէ շինեցին, ու անոր վրայ կնիք փորագրելու պէս գրեցին. «Տէրոջ սրբութիւնը»: **31** Նաեւ կապուտակէ երիզ մը անցուցին անոր, որպէսզի

Վերէն խոյրին վրայ դրուի, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր:

ԳՈՐԾԻՆ ԱԻԱՐՏՈՒՄԸ

(Ելք. 35. 10-19)

32 Այսպէս ակարտեցաւ Հանդիպումի վրանին խորանին ամբողջ «գործը. Իսրայէլի որդիները ըրին Տէրոջ Մովսէսի բոլոր պատուիրածներուն համաձայն. այնպէս ըրին, 33 ու խորանը Մովսէսի բերին.— վրանը եւ անոր բոլոր առարկաները, անոր ճարմանդները, անոր տախտակները, անոր նիգերը, անոր սիւներն ու խարիսխները. 34 կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածքը, իշղարի մորթերէ ծածքը, եւ ծածկող վարագոյրը. 35 վկայութեան տապանակը, անոր ձողերն ու Զաւութիւնը. 36 սեղանը, անոր բոլոր առարկաները եւ առաջադրութեան հացը. 37 զուտ ոսկիէ աշտանակը, իր ճրագները, այսինքն կարգով դրուելիք ճրագները, իր բոլոր առարկաներն ու լուսակալին իւղը. 38 ոսկի զոհասեղանը, օծումի իւղը եւ անուշաբոյր խունկը. վրանին մուտքի վարագոյրը, 39 պղինձէ զոհասեղանն ու անոր պղինձէ կասկարան, անոր ձողերը եւ բոլոր առարկաները. ակազանն ու անոր խարիսխը. 40 սրահին վարագոյրները, անոր սիւները եւ խարիսխները. սրահին դրան վարագոյրը, անոր չուաններն ու ցիցերը. խորանին ծառայութեան բոլոր առարկաները՝ Հանդիպումի վրանին համար. 41 պաշտամունքին հագուստները՝ սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար. Ահարոն քահանային սուրբ հագուստները եւ անոր որդիներուն հագուստները, որպէսզի քահանայութիւն կատարեն: 42 Իսրայէլի որդիները ըրին ամբողջ գործը՝ Տէրոջ Մովսէսի բոլոր պատուիրածներուն համաձայն:

43 Մովսէս ամբողջ Բշինուածքին նայեցաւ, եւ ահա՛ Տէրոջ պատուիրածին համաձայն ըրած էին. ուստի Մովսէս օրհնեց զանոնք:

ՏԵՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ

40

Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 «Առաջին ամսուան առաջին օրը՝ կանգնեցո՛ւր Հանդիպումի վրանին խորանը, 3 դի՛ր անոր մէջ վկայութեան տապանակը, ու վարագոյրո՛վ ծածկէ զայն: 4 Սեղանը նե՛րս բեր եւ զետեղէ՛ անոր վրայ զետեղուելու հացերը. աշտանակը նե՛րս բեր ու վառէ՛ անոր ճրագները: 5 Խունկին ոսկի զոհասեղանը դի՛ր վկայութեան տապանակին առջեւ, եւ դի՛ր խորանին մուտքի վարագոյրը: 6 Ողջակէզի զոհասեղանը դի՛ր Հանդիպումի վրանին խորանի մուտքին առջեւ: 7 Հանդիպումի վրանին ու զոհասեղանին մէջտեղ դի՛ր ակազանը, եւ ջո՛ւր դիր անոր մէջ: 8 Ծո՛ւրջը կանգնեցուր սրահը, ու դի՛ր սրահին դրան վարագոյրը: 9 Ա՛ռ օծումի իւղը եւ օծէ՛ խորանն ու անոր մէջ եղող ամէն ինչ. սրբացո՛ւր զայն եւ անոր բոլոր առարկաները, որպէսզի սուրբ ըլլան: 10 Օծէ՛ ողջակէզի զոհասեղանն ու անոր բոլոր առարկաները. սրբացո՛ւր զոհասեղանը, որպէսզի «ամենասուրբ զոհասեղան ըլլայ: 11 Օծէ՛ ակազանը եւ անոր խարիսխը, ու սրբացո՛ւր զայն: 12 Հանդիպումի վրանին մուտքին մօտեցուր Ահարոնը եւ անոր որդիները, ու ջուրո՛վ լուս զանոնք: 13 Ահարոնի հագցո՛ւր սուրբ հագուստները, օծէ՛ զայն եւ սրբացո՛ւր զայն, որպէսզի ինծի քահանայութիւն կատարէ: 14 Անոր որդիներն ալ

՝ Եբր.՝ ծառայութիւնը

Բ Եբր.՝ գործին

՝ Եբր.՝ Սրբութիւններու սրբութեան

մօտեցուր ու պատմունճաննէ՛ր հագցուր անոնց: **15** Օձէ՛ գանոնք՝ ինչպէս օծեցիր անոնց հայրը, որպէսզի ինծի քահանայութիւն կատարեն: Անոնց օծումը յաւիտենական քահանայութեան համար պիտի ըլլայ իրենց սերունդներուն մէջ»:

16 Մովսէս Տէրոջ իրեն բոլոր պատուիրածներուն համաձայն ըրաւ. այնպէս ըրաւ: **17** Երկրորդ տարին, առաջին ամսուան առաջին **օրը**, խորանը կանգնուեցաւ: **18** Մովսէս կանգնեցուց խորանը. անոր խարիսխները դրաւ, անոր տախտակները կանգնեցուց, անոր նիգերը անցուց եւ սիւները կանգնեցուց: **19** Խորանին վրայ տարածեց վրանը, ու վերէն անոր վրայ դրաւ վրանին ծածքը, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **20** Վկայութիւնը առաւ եւ տապանակին մէջ դրաւ. ձողերը տապանակին վրայ անցուց, ու վերէն՝ տապանակին վրայ դրաւ Քաւութիւնը: **21** Տապանակը խորանին մէջ բերաւ, ծածկող վարագոյրը դրաւ եւ վկայութեան տապանակը ծածկեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **22** Սեղանը դրաւ Հանդիպումի վրանին մէջ, խորանին հիւսիսային կողմը, վարագոյրէն դուրս: **23** Անոր վրայ հացերը զետեղեց՝ Տէրոջ առջեւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **24** Աշտանակը դրաւ Հանդիպումի վրանին մէջ, սեղանին դիմաց, խորանին հարաւային կողմը: **25** Տէրոջ առջեւ ճրագները վառեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **26** Ոսկի զոհասեղանը դրաւ Հանդիպումի վրանին մէջ, վարագոյրին առջեւ, **27** եւ անոր վրայ անուշաբոյր խունկ ծխեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **28** Խորանին մուտքի վարագոյրը դրաւ: **29** Հանդիպումի վրանին խորանին մուտքը դրաւ ողջակէզին զոհասեղանը, եւ անոր վրայ ողջակէզն ու **հացի** ընծան մատուցանեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **30** Հանդիպումի վրանին եւ զոհասեղանին մէջտեղ դրաւ ակազանը, ու ջուր դրաւ անոր մէջ՝ լուացուելու համար: **31** Մովսէս, Ահարոն եւ անոր որդիները իրենց ձեռքերն ու ոտքերը անոր մէջ կը լուային: **32** Երբ Հանդիպումի վրանը մտնէին եւ զոհասեղանին մօտենային՝ կը լուացուէին, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր: **33** Խորանին ու զոհասեղանին շուրջը սրահը կանգնեցուց, եւ սրահին դրան վարագոյրը դրաւ: Այսպէս Մովսէս **ամբողջ** գործը ավարտեց:

ԱՄՊԸ ՏԷՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՎՐԱՅ

34 Ամպ մը ծածկեց Հանդիպումի վրանը, ու Տէրոջ փառքը լեցուց խորանը: **35** Մովսէս չէր կրնար մտնել Հանդիպումի վրանը, որովհետեւ ամպը անոր վրայ կը կենար ու Տէրոջ փառքը լեցուցեր էր խորանը: **36** Իրենց բոլոր իջեւաններուն մէջ՝ Իսրայէլի որդիները կը մեկնէին երբ ամպը խորանին վրայէն բարձրանար: **37** Եթէ ամպը չբարձրանար, չէին մեկնէր՝ մինչեւ անոր բարձրանալու օրը: **38** Արդարեւ ցերեկը Տէրոջ ամպը խորանին վրայ էր, եւ գիշերը անոր վրայ կրակ կար, Իսրայէլի ամբողջ ^բժողովուրդին ^գառջեւ՝ իրենց բոլոր իջեւաններուն մէջ:

^բ Եբբ.՝ տան

^գ Եբբ.՝ աչքերուն